ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(78-րդ տարի) Թիվ-6 (1688) Հունիս 2024

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Սրբազան պայքարի մեր կամավոր բանակը (էջ 1-2)

2- Քաղաքական

Անի Մելքոնյան
Հայրենիքի փրկության ու դիմադրության շարժումներից մինչև Սրբազան պայքար (էջ 3-6)

3- Աշխարհաքաղաքական

Վարդան Հակոբյան
Գլոբալ գործընթացներն ու մեր կողմնորոշումները (էջ 7-9)

Սարգիս Սարգսյան
Հայաստանը՝ ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի մրցակցության երկրորդական ճակատի նոր հարթակ (էջ 10-16)

4- Տարածաշրջանային

Լիանա Պետրոսյան
Ադրբեջանում շիաների ձերբակալությունների նոր ալիքի շուրջ (էջ 17-19)

Նարե Գևորգյան
ԻԻՀ արտահերթ նախագահական ընտրություններն ու թեկնածուների ընտրության կարգը (էջ 20-23)

5- Դեմքեր և դեպքեր

Դավիթ Գասպարյան
Ակսել Բակունց. կյանքը և ստեղծագործությունը Ծննդյան 125-ամյակի առթիվ(էջ 24-33)

6- Հայ կյանք

Մովսէս Ծիրանի
«Բագինը» եւ Խորհրդային Հայաստանի մտաւորականութիւնը Բագինի» 60-ամեակի առիթով (էջ 34-39)

7- Ընթերցումներ

Վրէժ-Արմէն
Թանկարժէք ներդրում մը մեր ինքնութեան ճանաչման ի նպաստ (էջ 40-44)

Սրբազան պայքարի մեր կամավոր բանակը

Այսն թվականի հունիսի 17-ին «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման հանրահավաքում Բագրատ Սրբազանը հայտարարեց, որ ավարտվեց շարժման առաջին հանգրվանը: Որպես առաջին հանգրվանի սահմանագիծ նա մատնանշեց հունիսի 12-ի հանրահավաքը, որի ժամանակ, վարչապետի անմիջական հանձնարարությամբ, ոստիկանությունը կիրառեց վտանգավոր պայթուցիկ միջոցներ՝ վիրավորելով 100-ից ավելի քաղաքացիների: Մի շարք մասնակիցներ խոշտանգվեցին բորենիների ոհմակ հիշեցնող ոստիկանական խմբերի կողմից:

Ի դեպ, Սրբազանը տեղի ունեցածը համեմատեց 2008 թվականի մարտի մեկի իրադարձությունների հետ, հատկապես այն առումով, որ երկու դեպքում էլ սադրիչը նույն մարդն էր՝ առաջին դեպքում որպես ընդդիմադիր գործիչ, իսկ երկրորդ դեպքում որպես իշխանության ղեկավար:

Ինչ վերաբերում է շարժման ընթացքը և առաջիկա անելիքները, որպես անցած ու գալիք փուլեր, սահմանազատելուն, ապա պետք է համարել տրամաբանական, քանի որ թե՛ ազգային հոսանքի գործունեության առումով և թե՛ իշխանության կիրառած հակամիջոցների տեսանկյունից ակնհայտ է, որ տեղում չդոփելու, այլ նոր թափով ու մակարդակով առաջ գնալու համար անհրաժեշտություն կա մի պահ կանգ առնելու, արժևորելու ձեռք բերածը, վերադասավորելու հնարավորությունները, կազմակերպչական առումով նոր թափ հավաքելու և առավել հուժկու ձևով շարունակելու պայքարը մինչև հաղթական ավարտ:

Ազգային փրկության սրբազան այս պայքարի մասնակիցներին եթե կոչենք կամավորական բանակ, ապա պետք է նաև արձանագրենք, որ այս կամավորական բանակի հավատի ու վճռականության չափն են ուղիղ համեմատությամբ պայմանավորելու շարժման և՛ հաղթանակը, և՛ այդ հաղթանակի ժամկետը: Նույն տրամաբանությամբ պետք է հասկանալ, որ այս պարագայում կասկածն ու հուսալքությունը շարժման համար կունենան մահացու նշանակություն: Հոռետեսության և դրանից բխած կրավորականության ճիրաններում չհայտնվելու համար անհրաժեշտ է ճիշտ արժևորել առկա իրավիճակը, գնահատել, թե ինչն է հաջողվել ու ինչը ոչ, դրանց առարկայական ու ենթակայական պատճառները, ինչպես նաև նպատակին հասնելու հնարավորություններն ու մարտավարությունը:

Որոշ մարդիկ այն տպավորությունն ունեն, թե Նիկոլ Փաշինյանը Գյումրիից քայլեց Երևան և իշխանությունը գրավեց, այնինչ ազգային ուժերի հինգ տարի գործադրած ջանքերն անցել են ապարդյուն:

Նախ ազգային ուժերի դեմ Նիկոլ Փաշինյանի քաղաքական պայքարը սկսվել է դեռևս հեռավոր 1990-ականներին՝ սկզբում որպես լրագրող, այնուհետև քաղաքական կազմակերպությունների անդամ

և ղեկավար: Սրանով հանդերձ, կարևորագույն հանգամանքն այն է, որ հեղափոխությունները հեշտ են արդյունքի հասնում, երբ դրանք ունեն արտաքին հովանավորություն, կամ տեղի է ունենում գործող իշխանության երկփեղկում: Մեզանում երկրորդի օրինակ էր 1998 թ. նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի թիմից իշխանության խաղաղ փոխանցումը վարչապետ Ռոբերտ Քոչարյանին ու նրա կողմնակիցներին:

Առաջինի օրինակը Նիկոլ Փաշինյանի «Թավշյա», իրականում «Գունավոր» հեղափոխությունն էր արտաքին հովանավորությամբ: Իսկ արտաքին հովանավորությունը նախ և առաջ նշանակում է, հատկապես հեղափոխական գործի համար որոշիչ նշանակություն ունեցող, ֆինանսական միջոցների ապահովումը, այնուհետև քարոզչաքաղաքական աջակցությունը, միաժամանակ արտաքին փափուկ կամ կոշտ ճնշումը գործող իշխանության վրա:

Այդ բոլորը 2018 թ. շռայլորեն տրամադրված էր Հայաստանում արտաքին ուժերի դրածոներին: Գաղտնիք չէ նաև, որ այդ հեղաշրջման գործում ամենակարևոր գործոններից մեկը եղավ դրսից հրահանգով փողոց դուրս եկած մարդկային մեծ զանգվածը, որը բաղկացած էր ԼԳԲՏ համայնքից (իշխանափոխությունից հետո իրենք հրապարակավ հայտարարեցին այդ մասին), աղանդավորներից և իրավապաշտպանական, բնապահպանական ու զանազան այլ, արտաքին ուժերին ենթակա Հ/Կ-ներից, որոնք նախկինում բզկտում էին օրվա իշխանություններին, իսկ 2018 թվականից հետո հարմար տեղավորվեցին նոր իշխանությունների փափուկ ծալքերում: Բավական է ասել, որ միայն աղանդավորները Հայաստանում հաշվվում են բնակչության 10 տոկոսը:

Այս իմաստով հինգ տարի պարբերաբար բռնկված ժողովրդային շարժումների չհասնելը վերջնական արդյունքի ակնհայտ փաստն է այն իրողության, որ այդ շարժումները չեն ունեցել արտաքին հովանավորություն: Ավելին, եթե 2018 թվականին արտաքին

ուժերն ակնհայտորեն աջակցում էին Հայաստանում տեղի ունեցող «հեղափոխությանը», ապա դրանից հետո և հենց այս օրերին ակնհայտորեն աջակցում են արդեն իշխանության վրա գտնվող նույն ուժին: Իհարկե մենք վայրկյան անգամ չպետք է վատ զգանք, որ ազգային շարժումն արտաքին հովանավորներ չունի, այլապես դա արդեն ազգային անկախ շարժում չէր լինի: Մյուս կողմից, իրականությունը փաստում է, որ դրածո իշխանություններն իրենց քաղաքական գործունեությամբ ամբողջովին մնում են «հովանավորների» խամաճիկն ու ծրագրերի գործադրողը: Միայն նման իշխանության օրոք կարող էր Ամերիկայի նախագահի անվտանգության գծով խորհրդականը գալ, հայտարարել, Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումների փոփոխության մասին դեպի Արևմուտք ու Թուրքիա, իսկ դրանից հետո Հայաստանի իշխանությունը պետք է վարեր մի քաղաքականություն, որը հակասելու էր Հայաստանի ազգային շահերին, սակայն բխելու էր նույն ուժերի շահերից և նպատակներից: Եվ այս ուղղությամբ ամենացավոտը եղավ Արցախի հանձնումը, իսկ այժմ տեղի է ունենում Հայաստանի ռազմավարական հնարավորությունների հանձնումը Արևմտյան բլոկի ներկայացուցիչներ Թուրքիային և Ադրբեջանին:

Բնականաբար ազգային ուժերի իշխանության գալը վերջին բանն է, որի, որպես կատարված իրողության հետ, կարող է հաշվի նստել որևէ արտաքին ուժ: Հայաստանի պես փոքր պետության համար մեծ շռայլություն է անկախ քաղաքականության որդեգրումը, ինչը գոյություն չունի արդեն վեց տարի, Հայաստանի, որպես պետության, հեղինակությունը միջազգային թատերաբեմում հավասարեցնելով զրոյի:

2018 թվականի «Թավշյա հեղափոխության» նպատակներն ու ծրագրերը զուրկ էին ազգային հիմքից ու նպատակներից, նրանցում խոսք չկար Արցախի, ցեղասպանության, Հայ դատի խնդիրների վերաբերյալ, այլ տեղայնացումն էին գունավոր հեղափոխությունների վերազգային պահանջների:

Ի դեմս սրբազան պայքարի՝ հրապարակ են բերվել ազգային, հիմնահարցեր և նպատակներ, որոնք էլ իրենց շուրջ համախմբել են համապատասխան մտածողությունն ունեցող մարդկանց: Հոգևոր հոր կողմից այս շարժման առաջնորդությունը նշանակում է, որ այն նախ և առաջ, հետապնդում է երկրի բարոյական, ու հոգևոր ինքնամաքրման նպատակը: Ի դեմս Բագրատ Սրբազան Գալստանյանի՝ այսօրվա ազգային շարժումն առաջնորդում է մի գործիչ, ով օժտված է ազգային առողջ մտածողությամբ, արյամբ ու ոսկորով կրողն է ազգային ինքնության: Բագրատ Սրբազանի հաճախակի հնչող հայտարարություններն այն մասին, որ մենք մենակ ենք և մեր խնդիրները միայն մենք պետք է լուծենք, զուգահեռ է գծում հարյուր տարվա հեռավորության հետ՝ հիշեցնելով Սարդարապատ ու անկախություն կերտած սերնդին: Այս սկզբունքն ամրակայելով որպես վաղվա Հայաստանի պետական մտածողություն, մենք մեր հայրենիքը ոչ միայն կարող ենք դուրս բերել այս անարգված, ստորադասված վիճակից, այլև ուրվագծել ապագայի լայն հեռանկար: Սրբազան հոր հաջորդ առավելությունը, որը վերածվում է շարժման առավելությանը մինչև հաղթական հանգուցալուծում, պայքարելու նրա վճռական ու անկոտրում կամքն է:

Պայքարի երկրորդ փուլ Սրբազան շարժումը կմտնի ավելի մաքրված ու բյուրեղացած, ավելի փորձառու և իմաստնացած: Շարժումը պետք է շարունակի հստակեցնել իր նպատակները և կոնկրետացնել գործողությունների ճանապարհային քարտեզը: Պայքարը չի կարող հաջողել, եթե չունենա համահայաստանյան ընդգրկում, համադրված համազգային գործունեություն՝ եթե իհարկե ստեղծվեն շարժման տեղական մասնաճյուղեր ըստ բնակավայրերի և աշխատանքային, մասնագիտական և այլ հանրույթների: Սրբազան այս պայքարն օտարի դրածոներից ազատագրման ու երկրի փրկության համար է, հետևաբար նրա լինել-չլինելու մասին բոլոր խոսակցությունները դատարկաբանություն են և չկայացած մարդկանց ինքնադրսևորվելու առիթ. շարժումն այլընտրանք չունի: Կամավորական այս բանակին չդավաճանելով՝ մենք պետք է փաստենք հայրենիքին մեր նվիրվածությունը և արդարացնենք մեր գոյությունը նախ՝ սեփական աչքում:

Կամավոր բանակը բանակ է պայմանավորված, ոչ թե իր՝ անդամների քանակով, այլ նրանց նվիրվածության չափով: Սրբազան պայքարը շարունակվում է:

Հայրենիքի փրկության ու դիմադրության շարժումներից մինչև Սրբազան պայքար

Անի Մելքոնյան
Պատմաբան

Վերջին գրեթե չորս տարիների ընթացքում՝ սկսած 2020 թ. նոյեմբերի 10-ից, Հայաստանի Հանրապետության քաղաքական դաշտի օրակարգային խնդիրը կոլաբորացիոնիստ Նիկոլ Փաշինյանի հեռացումն է ՀՀ վարչապետի պաշտոնից:

Թե ինչպես Նիկոլ Փաշինյանին հաջողվեց հայտնվել ՀՀ ղեկավարի աթոռին, այլ հարց է, բայց փաստ է, որ նրա կառավարման վեց տարիներն ավերիչ ու ողբերգական եղան Հայաստանի Հանրապետության համար: Այսպե՛ս, իշխանության գալով ժողովրդական դժգոհության ալիքի վրա՝ Նիկոլ Փաշինյանը սկսեց խաղալ ազգային զգացմունքների հետ, շահարկելով այնպիսի նուրբ թեմաներ, ինչպիսիք էին բանակը և Արցախը:

2019 թ. օգոստոսին, ելույթ ունենալով Ստեփանակերտի Վերածնունդ հրապարակում, Նիկոլ Փաշինյանը, իրեն բնորոշ հիստերիկ տոնով, հայտարարեց «Արցախը Հայաստան է և վերջ[1]»- ինչը, ինչպես հետագայում բոլորի համար պարզ դարձավ լավ հաշվարկված քայլ էր՝ Ադրբեջանին Արցախի դեմ պատերազմ սկսելու ազդակ:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը լայնածավալ հարձակման անցավ Արցախի Հանրապետության դեմ. Հայաստանում մարդիկ սկսեցին միմյանց հերթ չտալով կամավորագրվել՝ առաջնագիծ մեկնելու համար:

Քաղաքական ուժերը մի կողմ դրեցին բոլոր տեսակի հակասությունները և միավորվեցին հայրենիքի պաշտպանության գաղափարի շուրջ:

Ժամերի ընթացքում ՀՅԴ-ն զորաշարժի ենթարկեց իր ուժերը և ժամը 12:00-ին Արամ Մանուկյանի արձանի մոտ հավաքված կամավորներին մարտակոչ հղելով ՀՅԴ Բյուրոյի նախկին անդամ, «Կամավորական» հասարակական կազմակերպության նախագահ Հրանտ Մարգարյանը նշեց. «Ո՛չ մի քաղաքական հարց, ո՛չ մի տարակարծություն չի կարող այսօր մեր միասնականության մեջ որևէ ճեղք առաջացնել: Մենք ազգովի դեպի ճակատ ենք, մենք ազգովի դեմ ենք դուրս գալու, կուրծք ենք դեմ տալու թշնամու հարվածներին: Մենք պետք է հաղթենք այս պատերազմում և հաղթանակը նվիրենք մեր եկող սերունդներին …. Մենք պետք է գնանք հաստատակամ, առանց վախենալու, վճռական համոզումով, որ հաղթելու եք: Մենք իբրև ժառանգորդները Գևորգ Չավուշի, Սերոբ Աղբյուրի, Նիկոլ Դումանի, Արամ Մանուկյանի, Վարդան Դուշմանի, Արթուր Ղարիբյանի, Թաթուլ Կրպեյանի, բոլո՜ր-բոլորի՝ պետք է լինենք առաջամարտիկը…[2]»:

Այս նույն ժամանակ ԱԺ-ում հրավիրված հատուկ նիստում Նիկոլ Փաշինյանը հայտարարում է. «Եկեք

պայմանավորվենք մի բան՝ ինչ էլ լինի՝ մենք մեզ երբեք պարտված չենք ճանաչի…

Եթե նույնիսկ բոլորին թվա, թե մենք պարտվել ենք վերջնական և անշրջելիորեն, մենք մեզ երբեք պարտված չենք ճանաչի[3]»- պատերազմող երկրի ղեկավարին ոչ վայել, այս խոսքերի տողատակերը բացահայտեց ինքը՝ Փաշինյանը, երբ 44 օր մարդկանց գլխի տակ փափուկ բարձ դնելով թե՝ «հաղթելու ենք», նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը կապիտուլյացիա ստորագրեց, ու թեև քաղաքական ուժերի, բանակի ու հասարակության մի ստվար հատվածի համար դա պարտությունն էր, Փաշինյանն իրեն պարտված չճանաչեց, համարեց, որ ապօրինաբար ստորագրելով Արցախի կապիտուլյացիան՝ ինքը հաղթել է և կառչած մնաց իշխանությունից:

Նոյեմբերի 10-ից ՀՀ քաղաքացիների և 17 կուսակցությունների օրակարգ բերվեց Նիկոլ Փաշինյանին հրաժարական պարտադրելու հարցը, նույն օրը, 17 կուսակցությունները հայտարարություն տարածեցին «Հայ ժողովուրդը, խորհրդարանական և արտախորհրդարանական քաղաքական ուժեր, մեկտեղել են իրենց կարողականությունը՝ դիմագրավելու հայկական երկու պետություններին ուղղված թուրքադրբեջանական ագրեսիան: Պատերազմական այս օրերին քաղաքական, դիվանագիտական և ռազմական ճակատներում բեկում մտցնելու հորդորով իշխանություններին ենք ներկայացրել բազմաթիվ առաջարկություններ, այդ

թվում՝ իրավիճակի շտկմանն ուղղված հանդիպումների առաջարկներ, որոնք մնացել են անպատասխան և չիրագործված: Պատերազմը սաստիկ է, կորուստներն՝ անդառնալի և ծանր: Որպես պետություն և ժողովուրդ կանգնած ենք ճակատագրական հանգրվանի առջև, որը պահանջում է վճռական որոշումներ ու գործողություններ: Մինչդեռ, քաղաքական իշխանությունների ձեռնարկած քայլերը համարժեք չեն մեր ժողովրդին ուղղված գոյապահպանական սպառնալիքին: Այս ընթացքում իշխանությունն ի ցույց դրեց իր բացահայտ անկարողությունը, ներքին և արտաքին մարտահրավերներին դիմակայելու անընդունակությունը: Մարդկային և տարածքային կորուստները, Հայաստանի դաշնակիցների և, առաջին հերթին, Ռուսաստանի Դաշնության հետ ոչ լիարժեք հարաբերություններն ակնհայտ են դարձնում գործող իշխանության սնանկությունը: Այս իրավիճակի ողջ պատասխանատվությունը կրում են քաղաքական իշխանությունները, որոնք չձերբազատվեցին անսխալականության իրենց բարդույթից՝ հայկական երկու պետությունները կանգնեցնելով ծանր իրողությունների, իսկ Արցախը՝ նաև տարածքային լրջագույն կորուստների առջև: Ուստի, իշխանությունները զրկվել են հայ ժողովրդին ներկայացնելու քաղաքական և բարոյական հիմքերից: Անդառնալի կորուստները կանխելու համար պահանջում ենք՝ ստեղծված աղետալի վիճակի համար պատասխանատու վարչապետ Փաշինյանի և նրա կառավարության ժամ առաջ, ինքնակամ և անցնցում հեռացումը, իրավիճակում բեկում մտցնելու կարողություն ունեցող և ռազմաքաղաքական խնդիրներ լուծող գործադիր իշխանության նոր մարմնի հրատապ ստեղծումը[4]»:

Նոյեմբերի 11-ից սկսվեցին բողոքի բազմահազարանոց ակցիաները, որոնք ծնունդ տվեցին Հայրենիքի փրկության շարժմանը, որն էլ վարչապետի թեկնածու առաջադրեց Վազգեն Մանուկյանին, միևնույն ժամանակ «Հայրենիքի փրկության շարժման խորհուրդը հայտարարում է.

«Շարժման նպատակն է սահմանադրական ճանապարհով օր առաջ ազատվել Հայաստանի աղետաբեր վարչակազմից՝ ստեղծելով անցումային, հակաճգնաժամային կառավարություն, որը կկանխի Հայաստանի պետականության կորուստը, կիրականացնի երկրի հետպատերազմյան առողջացումը, կաշխատի ազգային-պետական շահերի վրա հիմնված ներքին և արտաքին քաղաքականության, քաղաքացիների անվտանգության երաշխավորման բարձրացման ուղղությամբ և կկազմակերպի արտահերթ խորհրդարանական ընտրություններ:

Որպես անցումային կառավարության ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ, Խորհուրդն առաջադրում է Վազգեն Մանուկյանի թեկնածությունը, որն ունի հակաճգնաժամային կառավարման փորձ, արդյունավետ բանակցություններ վարելու կարողություն, ներքին համերաշխություն և համազգային համախմբվածություն ապահովելու կամք ու վճռականություն:

Վազգեն Մանուկյանը վարչապետ դառնալուն պես կասեցնելու է իր կուսակցական գործունեությունը, պարտավորվում է առաջիկա խորհրդարանական ընտրություններին անձամբ չմասնակցել և չհավակնել վարչապետի պաշտոնին: Միաժամանակ, նա ստանձնում է պարտականություն՝ մեկ տարի հետո կազմակերպելու արտահերթ խորհրդարանական ընտրություններ՝ ԸՕ-ին համապատասխան հավասար պայմաններ երաշխավորելով քաղաքական բոլոր ուժերի համար:

Վարչապետի միասնական թեկնածուն՝ 2020 թ. դեկտեմբերի 5-ին, ժամը 15.00-ին, Ազատության հրապարակում հրավիրված համազգային մեծ հանրահավաքին կներկայացնի նոր կառավարության առաջնահերթ գործողությունները և հակաճգնաժամային քայլերը[5]»:

Դեկտեմբերի 5-ից համազգային բողոքի ու անհնազանդության ակցիաների մեկնարկի մասին է հայտարարվում, որոնք ուղեկցվում են ոստիկանական անհամարժեք ու բիրտ ուժի կիրառմամբ, իշխանությունների կողմից դրսևորվող բռնի ուժով, հալածանքներով, ատելության ու թշնամանքի մթնոլորտի խորացմամբ, ներազգային ուժերի պառակտմամբ ու ջլատմամբ:

Շարժման արդյունքում Նիկոլ Փաշինյանի թիմը որոշեց գնալ արտահերթ ընտրությունների, միաժամանակ վարչապետի աթոռը զբաղեցնողը կատարեց հերթական հակասահմանադրական քայլը՝ հայտարարելով, որ հրաժարական է տալիս, բայց մնում է վարչապետի պաշտոնակատար:

ՔՊ-ի ու Նիկոլ Փաշինյանի ղեկավարման պայմաններում ընտրապայքարը վերածվեց ատելության քարոզի ու ներազգային թշնամանքի հրահրման հերթական արշավի, և այդ պայմաններում անցկացված ընտրություններում (որը բոյկոտեց ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների կեսից ավելին)՝ Նիկոլ Փաշինյանին հաջողվեց վերարտադրվել, և նոր աղետներ բերել Հայաստանին:

Փաստացի, ***Հայրենիքի փրկության շարժումն*** անհաջողության մատնվեց, որովհետև դրված գլխավոր նպատակին չհասավ:

Ի՞նչը և ինչու՞ դարձավ շարժման անհաջողության պատճառը՝ տարատեսակ ենթադրություններ կարելի է անել, որովհետև ինչպես ասում են՝ *հաղթանակը բազում փերեր ունի, պարտությունը ոչ մի:*

Ինչևէ, անցնենք առաջ, 2022 թ. ապրիլի 25-ին ***Զարթնիր լաո*** կարգախոսով սկիզբ առավ ***Դիմադրություն*** շարժումը, որն իր ծավալներով շատ ավելի ընդգրկուն էր, ու փողոցային պայքարը՝ անհնազանդության տարատեսակ գործողությունները տևեցին շուրջ 40 օր, և հունիսի 4-ից շարժումը որոշեց փոխել մարտավարությունը:

Հունիսի 3-ին տասնյակ հազարների հասնող ժողովուրդը երթով շարժվելով կառավարական առանձնատան մոտ, Նիկոլ Փաշինյանին հերթական անգամ ներկայացրեց հրաժարականի պահանջ, ի պատասխան դրա՝ վերջինս հրամայեց անզեն ժողովրդի դեմ լուսաձայնային նռնակներ կիրառել, որոնց ժամկետանց լինելու պատճառով վիրավորվեցին մի քանի ոստիկաններ:

Ընդհանուր շարժումը տևեց մինչև 2022-ի աշուն, և կանխեց կամ, ավելի ճիշտ, հետաձգեց Տավուշի գյուղերի, Տիգրանաշենի, այսպես կոչված՝ Ջանգեզուրի միջանցքի հանձնումն ու ադրբեջանական մյուս պահանջների հլու կատարումը Հայաստանի թրքահպատակ իշխանությունների կողմից:

2023-ին, նախորդ երկու շարժումների նման, տևական ու ընդգրկուն շարժումներ տեղի չունեցան, բայց սեպտեմբերի 19-20-ին Արցախից ստացվող տագնապալի լուրերի համապատկերում մարդիկ ինքնաբուխ դուրս եկան փողոց, սակայն զանգվածային ելույթները շարժման չվերածվեցին Արցախի հայաթափման պատճառով, երբ զանգվածային ելույթների կազմակերպիչներն ու մասնակիցները ձեռնամուխ եղան բռնի տեղահանված արցախցիների կարիքները հոգալուն:

2024 թ. ապրիլին «դելիմիտացիայի և դեմարկացիայի» անվան տակ սկսվեց Տավուշի չորս հայկական գյուղերի՝ Կիրանցի, Բաղանիսի, Վերին Ոսկեպարի և Բերքաբերի հանձնումը թշնամուն, ինչն առաջ բերեց հասարակական լայն դժգոհություն, փաշինյանական «նվաստացում հանուն խաղաղության» և «հանձնենք, որ լավ ապրենք» կեղծ թեզերից հոգնած ու արդարացիորեն դժգոհ ժողովրդի առաջնորդությունը այս անգամ ստանձնեց Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը, որն իր հեղինակության, խարիզմատիկ կերպարի, ազնվության, անցած ճանապարհի ու հանդուրժողականության շնորհիվ կարողացավ շուրջը համախմբել հասարակության լայն շերտերի:

Շարժումը, որը սկսվեց Տավուշից՝ ***Տավուշը հանուն հայրենիքի*** անվամբ ժողովրդի կողմից ստացավ ***Սրբազան Պայքար*** անունը, և ոչ միայն այն պատճառով, որ շարժման առաջնորդը Բագրատ Սրբազանն է, այլ նաև այն պատճառով, որ սա իսկապես Սրբազան շարժում է, որի հիմքում կա միայն մեկ ակնկալիք՝ Հայաստանի մնացորդացը փրկել փաշինյանական

կոլաբորացիոնիստ իշխանությունների ձեռքից, և պատահական չէ, որ հասարակական լայն հաշտեցման օրակարգով սկսված շարժումը Սրբազանն անվանում է **չակնկալիքների պայքար**[6]:

Սրբազան պայքարը սկսվեց Տավուշի Կիրանց գյուղում, որտեղից քայլերթով շարժվելով, Բագրատ Սրբազանը բազմահազար քաղաքացիների հետ մայիսի 9-ին հասավ Երևան, և Հանրապետության Հրապարակում ձևավորվեց Նիկոլ Փաշինյանի հրաժարականի հանրային պահանջ: Ի տարբերություն նախորդ շարժումների՝ այս շարժումն ավելի ընդգրկուն է, մարդաշատ ու համակարգված՝ չհաշված իհարկե որոշ թերությունները, որոնց մասին այս պահին նպատակահարմար չենք գտնում խոսել:

Հունիսի 12-ը, սակայն, պարզորոշ ցույց տվեց, որ գործ ունենք, հանուն սեփական աթոռի խաղաղ ցուցարարների դեմ ահաբեկչական գործողություններ իրականացնող հանցավոր ռեժիմի հետ, որը սեփական իշխանությունը պահելու համար չի խորշի անգամ զանգվածային սպանություններից: Սա, շարժման համակարգողներին «ստիպեց» մտածել շարժման մարտավարական փոփոխությունների մասին: Միաժամանակ, պետք է նշել, որ հունիսի 12-ին ժողովուրդը ևս ասաց իր վճռական խոսքը, երբ ոստիկանության կողմից կիրառված տարատեսակ պայթուցիկ միջոցներին ի պատասխան ոչ թե պակասեց, այլ ավելացավ՝ կարճ ասած, ժողովուրդը հասկացրեց, որ «խրամատը չի լքում»:

Չենք կարող չնշել նաև, որ Սրբազան պայքարը իրական խուճապ ու իրարանցում է առաջացրել փաշինյանական արդեն խարխուլ իշխանության և նրա արտաքին հովանավորների հատկապես ադրբեջանա-թուրքական շրջանակներում: Այդ մասին են վկայում ինչպես հայոց եկեղեցու դեմ ուղղորդված արշավանքը՝ մերձիշխանական շրջանակների կողմից, այնպես էլ 2024 թ. մայիսի 28-ին Սարդարապատում Ամենայն Հայոց կաթողիկոսի մուտքն արգելելը՝ ոստիկանական ուժերի կողմից, էլ չենք խոսում անձամբ Բագրատ Սրբազանի դեմ տարվող «դեղին մամուլի» մակարդակի քարոզչությունը, որին անդրադառնալն անգամ ամոթ ենք համարում:

Փոխարենը մի փոքր խոսենք շարժման բացթողումների մասին:

Այսպե՛ս, Բագրատ Սրբազանի հռչակած հաշտության ու հանդուրժողականության շարժումը սկզբնական շրջանում իր մեջ ներառավ նաև որոշ արկածախնդիրների, անհաջող դեմքերի ու պատեհապաշտների: Այնուամենայնիվ հատկանշական է, որ շարժումն այս պահին գտնվում է ինքնամաքրման փուլում, և նյութական ակնկալիքների հեռանկարով, կամ պատահականորեն շարժման մեջ հայտնված մարդիկ, ինքնաբացահայտվում և դուրս են մղվում շարժումից:

Բագրատ Սրբազանի կողմից փաշինյանական ռեժիմի հեռացման ժամկետներ նշելը մարդկանց որոշ հատվածի մոտ հեշտ հաղթանակի ակնկալիք արթնացրեց, ինչին հաջորդեցին անկումային տրամադրությունները, թեև հունիսի 12-ը եկավ փաստելու, որ, այնուամենայնիվ, շարժումը մարման միտումներ չունի:

Այլ թերություններով ու բացթողումներով հանդերձ, Բագրատ Սրբազանն աստիճանաբար ավելի պարզ ու տեսանելի քաղաքական օրակարգ է ձևավորում՝ հմտանալով քաղաքականության «նրբությունների» մեջ: Այդ ուղղությամբ շարժման առաջին «շախը» իշխանություններին մայիսի 26-ին Բագրատ Սրբազանի առաջադրումն էր, որպես Հաշտության ժամանակավոր կառավարության վարչապետի թեկնածու, ինչը գլխովին ջախջախեց շարժումը նախկին իշխանությունների հետ կապելու՝ հատկապես երկրորդ նախագահի «վերադարձի» վերաբերյալ արհեստականորեն հրապարակ նետված թեզը: «Նախկիններ» թեզի ջախջախումը շատ լավ հասկացել է նաև Հայաստանի վարչապետի աթոռին գտնվողը. այդ մասին է վկայում հունիսի 12-ին վերջինիս անադեկվատ ելույթը ԱԺ ամբիոնից, որտեղից սկսեց իր անհաջող կառավարման ողբերգական հետևանքների համար մեղադրել Ռուսաստանին ու Բելառուսին, մի շարք ոչ ճիշտ արտահայտություններ թույլ տալով Բելառուսի հասցեին:

Նիկոլ Փաշինյանի հունիսի 12-ի ելույթն ու ոստիկաններին խաղաղ ցուցարարների վրա կրակելու համար «պարգևավճար» խոստանալը՝ իր ձախողումը ամբողջապես գիտակցած, ամեն կերպ մի քիչ էլ աթոռին մնալ ցանկացող, բայց արդեն հեռացող «ղեկավարի» պահվածք էր: Դրանով են պայմանավորված նաև արտաքին տարբեր ուժերի կողմից «խաղաղության պայմանագրի» կնքումն արագացնելու վերաբերյալ կոչերը:

Շարժման հեռանկարները - Հաջողելու հեռանկար ունի՞ արդյոք Սրբազան շարժումը, այս հարցի պատասխանը նախ և առաջ կարող է տալ հայ ժողովուրդը, իր պահվածքով, եթե չհոգնի մի շարք օբյեկտիվ պատճառներով ձգձգվող գործընթացից և շարունակի պայքարը:

Երկրորդ, շարժումը կհաջողի, եթե շարժման համակարգողներն ունենան պլան Բ, պլան Գ, պլան Դ, որոնցից մեկի ձախողման դեպքում շատ արագ ու կազմակերպված ձևով կանցնեն հաջող պլանին:

Ի վերջո, չպետք է մոռանալ, որ Հայրենիքի փրկության շարժման ու Դիմադրության շարժման՝ սպասված արդյունքը չունենալու պատճառներից մեկն էլ պլան Բ-ի բացակայությունն էր կամ անհաջող գործադրումը, Սրբազան շարժման համակարգողները և Բագրատ Սրբազանն ինքը, պետք է հաշվի առնեն նախորդ շարժումների սխալներն ու բացթողումները դրանք չկրկնելու համար:

Երրորդ, շարժման հաջողության տեսակետից, կարևոր է նաև արտաքին դաշնակիցներ ձեռք բերելը: Գաղտնիք չէ, որ Սրբազան շարժումը զուտ հայկական ու հայաստանյան շարժում է, բայց շատ կարևոր է, որ ոչ դե յուրե, այլ արդեն դե ֆակտո իշխանություն ունեցող շարժման համակարգողները սկսեն մտածել արտաքին հարաբերությունների մասին: Այդ ուղղությամբ Սրբազանն առաջին կարևոր քայլերն արեց՝ հարցազրույց տալով միջազգային լրատվականներին ու ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն կոչեր հղելով, որոնք հասցեատերը միջազգային հանրությունն էր:

Հաջորդ քայլը պետք է լինի Հայաստանում հավատարմագրված դեսպանների հետ հանդիպումը և ապագա ժամանակավոր կառավարության տեսլականը ներկայացնելը, արտաքին հարաբերություններում «ընդդեմը» բացառելու սկզբունքով:

Կարծում ենք, Սրբազան շարժման առաջնորդները հաշվի են առնում այս և մի շարք այլ կարևոր սկզբունքներ, մանավանդ որ նրանց քայլերը լավ հաշվարկված և ծանր ու թեթև արված մարտավարության տպավորություն են թողնում:

Սրբազան պայքարը հիրավի գոյության պայքար է, որովհետև, Աստված մի արացե, եթե շարժումը պարտվի, դա տեղի կտա նոր, ավելի լայնածավալ արտագաղթի, կազատի փաշինյանական ռեժիմի ձեռքերը նոր, ավելի խայտառակ գիջումներ անելու ու Հայաստանը անվերապահ կապիտուլյացիայի ենթարկելու համար, և անդառնալի հարված կհասցվի Հայաստանյան Առաքելական Սուրբ եկեղեցուն, որպես ազգային կառույցի, Հայաստանը կկորցնի իր առանց այդ էլ մազից կախված ինքնիշխանությունը: Հետևաբար, վճռական մենակի հոգեբանությամբ հայ ժողովուրդը պետք է աշխարհին հայտնի իր որոշումը, ապրե՞լ, գործե՞լ ու լինե՞լ որպես ազգ, թե՞ պատմության թատերաբեմը զիջել այս տարածաշրջանը զավթած քոչվոր թուրքերին: ■

Ծանոթագրություններ

1. https://www.1in.am/2605400.html
2. https://www.youtube.com/watch?v=waLtoZohJr8
3. https://www.hayeli.am/?p=607341&l=am
4. https://arminfo.info/full_news.php?id=57905&lang=1
5. https://hetq.am/hy/article/124990
6. https://www.hayeli.am/?p=754597&l=am

Օգտագործված աղբյուրներ

1. https://www.1in.am/2605400.html
2. https://www.youtube.com/watch?v=waLtoZohJr8
3. https://www.hayeli.am/?p=607341&l=am
4. https://arminfo.info/full_news.php?id=57905&lang=1
5. https://hetq.am/hy/article/124990
6. https://www.hayeli.am/?p=754597&l=am

Գլոբալ գործընթացներն ու մեր կողմնորոշումները

Վարդան Հակոբյան
Դիվանագետ, վերլուծաբան

Միջազգային հարաբերություններում գլոբալիստների կողմից առաջացրած մրրիկը գնալով սաստկանում է: Դրա պտտահողմերը քանդում են հարաբերությունները պետությունների ու ժողովուրդների միջև, ավերում երկրների տնտեսությունները և ժողովուրդների կենսակերպը: Գլոբալիստներն արդեն չեն էլ փորձում քողարկել իրենց իրական նպատակը՝ հաստատել միաբևեռ աշխարհակարգ, որն իրենք կկառավարեն: Նրանք վաղուց արդեն չեն քողարկում այն ռազմաքաղաքական գործիքները, որոնց միջոցով պետք է իրականացնեն այդ նպատակները: Գործիքների թվում են ՋԼՄ-ների միջոցով հասարակական գիտակցության ու հոգեբանության նենգափոխումը, հետախուզական կենտրոնների կողմից բազմաթիվ հիմնադրամների գործունեության միջոցով տարբեր երկրների ներքաղաքական դաշտերի վրա ազդեցության ծավալումը, պետական ու քաղաքական գործիչների վարկաբեկումը, ընդհուպ մինչև նրանց ֆիզիկական վերացումը, գունավոր հեղափոխությունները, հեղաշրջումներն ու իշխանափոխությունները: Գլոբալիստներին ծառայության անցած իշխանությունները մղում են իրենց պետությունները պատերազմի հանուն միաբևեռ աշխարհակարգի հաստատման: Այսպիսով, միջնորդավորված կամ, ինչպես այսօր ընդունված է ասել, հիբրիդային պատերազմները դարձել են հակառակորդներին պարտության մատնելու գլոբալիստների հիմնական զենքը:

Այսինքն, կայացվում է պարզ գործարք գլոբալիստական կենտրոնի և նրա մոտ ծառայության անցած իշխանության միջև. առաջինը քաղաքական, ֆինանսական, երաշխիքներ է տալիս իր դրածոներին՝ խոստանալով պաշտպանել նրանց իշխանությունը և անձնական անվտանգությունը, իսկ երկրորդը հանձն է առնում տրամադրել պետության բոլոր ռեսուրսները հեգեմոնի կողմից թելադրված ծրագրերն իրականացնելու, հարկ եղած դեպքում՝ հիբրիդային պատերազմի մասնակցելու համար:

Գաղափարական ճակատում զգալի հաջողություններից հետո գլոբալիստներն արդեն անցել են դրա ռազմաքաղաքական գործադրմանը, այլևս հաշվի չնստելով ոչ միջազգային նորմերի, ոչ էլ հակասությունները կարգավորելուն ուղղված այլ պետությունների դիվանագիտական, քաղաքական առաջարկների ու փաստարկների հետ: Բնականաբար, հակառակ բևեռում պետությունները սկսում են համախմբվել պաշտպանելու համար իրենց շահերը: Այդ համախմբումն առաջնորդում են Ռուսաստանը և Չինաստանը:

Աշխարհը բաժանվել է գլոբալիստների և հակագլոբալիստների ճամբարների, և պայքարը միաբևեռ կամ բազմաբևեռ աշխարհակարգ հաստատելու համար սկսել է կրել համակարգային բնույթ:

Հակառակ Գլոբալ Արևմուտքի ձևավորվում է Գլոբալ Արևելքի ու Հարավի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական համակարգը, որն իր հզորությամբ ու ներուժով չի զիջում, եթե չասենք գերազանցում է առաջինին:

Գլոբալիստների դեմ պայքարի առաջնագծում Ռուսաստանն է, որի ողջ սահմանով՝ Մուրմանսկից մինչև Կուրիլյան կղզիներ, անցնում է երկու ճամբարների միջև եղած դիմակայության գիծը: Չկարողանալով խուսափել Ուկրաինայում սանձազերծված հիբրիդային պատերազմից՝ ՌԴ-ն մեծ ջանքեր է գործադրում կանխելու համար նման զարգացումները Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում:

Հակադրման այդ գծի վրա է գտնվում Հայաստանի Հանրապետությունը, որի այսօրվա իշխանությունները, միակողմանի զրոյացնելով ռազմաքաղաքական հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ, հանձն առան Հանրապետությունը ներքաշելու հակառուսական կոալիցիայի մեջ:

Ռուսաստանի դեմ ուղղված արեւմտյան ծրագրի իրականացմանը հարավկովկասյան ճակատում խոչընդոտում էր ՌԴ դաշնակից ու ՀԱՊԿ անդամ Հայաստանը: 2008 թ. մարտի 1-ին, պետական հեղաշրջման անհաջող փորձից հետո միայն, 2018 թ. «Թավշյա հեղափոխության» ճանապարհով հնարավոր եղավ հաղթահարել այդ խոչընդոտը և արդեն 6 տարի ներքաշել Հայաստանը հակառուսական խաղի մեջ:

Այսինքն, կարող ենք փաստել, որ Հայաստանը դարձավ երկու հիմնական աշխարհաքաղաքական ուժերի՝ մի կողմից գլոբալիստական, ի դեմս ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի, մյուս կողմից հակագլոբալիստական՝ ի դեմս Ռուսաստանի և Իրանի (միջնորդված ձևով նաև Չինաստանի և Հնդկաստանի) հակադրության գծի հատվածը: Փաշինյանական վարչախումբը, լինելով գլոբալ լիբերալիստների դրածոն, բնականաբար, ընտրեց գծի նրանց կողմը և իշխանության գալու առաջին օրվանից ձեռնամուխ եղավ վերջիններիս հրահանգների իրականացմանը: Նշենք այդ շարքից մեզ հետաքրքրող գլխավոր քայլերը:

1. Վարկաբեկեցին և հետապնդեցին հակառակ դիրքորոշում ունեցող քաղաքական գործիչներին, զրոյացրին նրանց արտաքին քաղաքական բոլոր ձեռքբերումները:
2. Նվազագույն աստիճանի իջեցրին մեր հարաբերությունները դաշնակիցների և հայանպաստ դիրքորոշում ունեցող պետությունների հետ, հետևողականորեն մերժելով նրանց՝ ՀՀ համար նպաստավոր առաջարկները:
3. Ապահովեցին քաղաքական, ռազմական, դիվանագիտական բոլոր պայմաններն Արցախը հայաթափելու և Ադրբեջանին հանձնելու համար: Եվ հետևելով եվրոատլանտյան հորդորներին՝ պատրաստ են հանուն այդ պահանջի, նոր տարածքներ զիջելու գնով, Ալիևի հետ ստորագրել վերջնագրից ոչնչով չտարբերվող խաղաղության պայմանագիր:
4. Իրականացնելով իր արևմտյան հովանավորների հանձնարարականները ու զրոյացնելով ՌԴ և Իրանի հետ հարաբերությունները՝ այս իշխանությունները դուրս են հանում ՀՀ-ն տարածաշրջանային քաղաքական գործընթացներից, սահմանափակելով դրանք ՆԱՏՕ-ի, իրականում նաև Թուրքիայի, աշխարհաքաղաքական շահերի շրջանակում:
5. Փոխարենը Շ. Միշելը, Ժ. Բորելը հայերին խոստանում են անդամակցություն ԵՄ-ին, ՆԱՏՕ-ին, պաշտպանել ագրեսիվ ռուսների և շիա իսլամիստների ոտնձգություններից, տեղ տալ քաղաքակիրթ եվրոպական ժողովուրդների ընտանիքում:

Ինչպիսի՞ հետևանքներ և մարտահրավերներ են բխում կատարված ընտրությունից:

1. ՆԱՏՕ-ի համար Հարավային Կովկասը տարածք է, որը պետք է դառնա պլատֆորմ, ցատկահարթակ դեպի Հյուսիսային Կովկաս և Կենտրոնական Ասիա, իսկ այդ պետությունների բնակչությունը՝ հիբրիդային պատերազմի համար թնդանոթի միս (մինչև վերջին վրացին, ադրբեջանցին կամ հայը): Ընդ որում, եվրաատլանտյան ստրատեգներին, թե՛ հաջողության, թե՛ անհաջողության դեպքում, չի հետաքրքրում թե այդ տարածքում ինչ պետություններ կձևավորվեն և ինչ սահմաններով: Ամենայն հավանականությամբ այդ տարածքի տնօրինությունը կթողնվի Թուրքիային:
   Վրաստանի՝ դեպի Արևմուտք և Ադրբեջանի՝ դեպի Թուրքիա կողմնորոշվելուց հետո Հայաստանի Հանրապետության անցումը եվրաատլանտյան կողմնորոշման կդարձնի Հարավային Կովկասը գործիք ՆԱՏՕ-ի ձեռքում ՌԴ և Իրանի դեմ ծրագրած հիբրիդային պատերազմում:
2. Հարավկովկասյան հանրապետությունների եվրաատլանտյան կողմնորոշումն արմատական շրջադարձ է, որը խախտում է ավելի քան երկու հարյուր տարի գոյություն ունեցող աշխարհաքաղաքական հավասարակշռությունը այս տարածաշրջանում, ինչը մահացու վտանգ է Ռուսաստանի և Իրանի համար: Ուստի այս տերությունները չեն վարանի ցանկացած գնով պաշտպանելու իրենց կենսական շահերը: Իսկ վրացական և հայկական պետությունների պահպանումը ՌԴ և Իրանի համար, որպես այդ պետությունները միմիանց կապող կամուրջ, ռազմավարական անհրաժեշտություն է, հետևաբար, շահագրգռված են լինելու նշված հավասարակշռությունը պահպանելու և ապահովելու հարցում:

Նշված երկու կետերից բխում է գլոբալ երկու բևեռների միջև ճիշտ կողմնորոշվելու և ընտրություն կատարելու տրամաբանությունը:

Վերը շարադրածը փորձ է բացատրելու և հասկանալու, թե որքան մեծ է աշխարհում տեղի ունեցող գործընթացների ազդեցությունն ու ներգործությունը մեր պետության ճակատագրի վրա և թե որքան վտանգավոր է ճակատագրական այս պահին օրվա իշխանությունների թեթևաբարո վարքագիծը և ազգային ու պետական շահերի անտեսումը:

Այն նաև պետք է օգնի գտնելու այն հարցերի պատասխանները, որոնք այսօր տրվում են հրապարակներում, ցույցերի մասնակիցների կողմից:

Հայաստանը՝ ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի մրցակցության երկրորդական ճակատի նոր հարթակ

Սարգիս Սարգսյան
Վ. Արծրունու անվան Սևծովյան-Կասպիական տարածաշրջանի ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Հարավային Կովկասը Եվրոպայի և Ասիայի միջև ընկած ամենակարևոր ռազմավարական տարածաշրջաններից մեկն է, որը հարթակ է կայուն շահեր ունեցող բազմաթիվ տարածաշրջանային և գլոբալ խաղացողների համար: Այս շահերը դարեր շարունակ բախվել են: Պատմության ընթացքում յուրաքանչյուր խոշոր խաղացող ձգտել և ձգտում է պարտադրել խաղի իր կանոնները և փորձում է օգուտ քաղել տարածաշրջանի աշխարհաքաղաքական առավելություններից: Հոդվածում կփորձենք վերլուծել Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի հետ Հարավային Կովկասի երկրների համագործակցության հիմնական ասպեկտները, մարտահրավերներն ու հեռանկարները:

Հարավային Կովկասում էլ, ինչպես և իր արևմտյան սահմաններին, Ռուսաստանի անվտանգային շահերը բախվում են ՆԱՏՕ-ի ընդլայնման քաղաքականության հետ: ՆԱՏՕ-ն փորձում է իր ներկայությամբ հակակշռել Ռուսաստանի ռազմական ներկայությանը մեր տարածաշրջանում:

Թեև Հարավային Կովկասը փոքր տարածք է զբաղեցնում աշխարհի քարտեզի վրա, սակայն այս տարածաշրջանի նկատմամբ հետաքրքրության սանդղակը զգալիորեն գերազանցում է նրա աշխարհագրական չափերը: 1991 թվականին Խորհրդային Միության փլուզումը հիմնովին փոխեց Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական դինամիկան և ստիպեց, որպեսզի նորաստեղծ պետությունները ձգտեն սահմանել իրենց ազգային շահերն ու քաղաքական առաջնահերթությունները նոր պայմաններում: Խորհրդային Միության փլուզման ևս մեկ հետևանքն այն էր, որ այն թույլ տվեց այլ տերությունների նախկին խորհրդային հանրապետություններում ազդեցության համար մրցակցելու, ինչը նրանք նախկինում չէին կարողանում անել Ռուսական կայսրության, իսկ ավելի ուշ՝ Խորհրդային Միության հզոր հեգեմոն ներկայության պատճառով: Տարածաշրջանն իր աշխարհաքաղաքական և ռազմավարական նշանակությամբ ոչ միշտ եղել է համաշխարհային տերությունների արտաքին քաղաքականության առաջնագծում: Հեգեմոն տերությունները պատմության ընթացքում օգտագործել են այն նաև հարևան շրջանների, հատկապես Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի վրա ազդելու համար: Եթե նախկինում Հարավային Կովկասը գտնվում էր միջազգային օրակարգի հետնաբակում, ապա Խորհրդային Միության փլուզումից և դրան հաջորդած նորանկախ պետությունների ձևավորումից հետո, այն շատ ավելի կարևոր դարձավ ինչպես իր անմիջական հարևանների, այնպես էլ

տարածաշրջանից դուրս գտնվող ազդեցիկ դերակատարների համար: Այսօր Հարավային Կովկասն աշխարհաքաղաքական կարևոր տարածաշրջան է, որը ռազմավարական տեղ է զբաղեցնում կասպյան նավթի և գազի փոխադրման գործում:

Տարածաշրջան, որն արդեն 30 տարի բախվում է չլուծված հակամարտությունների և Խորհրդային Միության փլուզման հետևանքով առաջացած սոցիալ-քաղաքական և տնտեսական խնդիրների հետ: Ձգձգվող հակամարտությունները երկար ժամանակ լարվածության աղբյուր են մնում ինչպես Վրաստանի և Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի համար: Թեև ՆԱՏՕ-ն անմիջականորեն ներգրավված չէ կազմակերպության անդամ չհանդիսացող երկրներում հակամարտությունների կարգավորման գործում, Հարավային Կովկասի ճգնաժամը մեծապես պայմանավորված է նաև ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի հարաբերություններով և հակասություններով: Հավաքական Արևմուտքի անվտանգային քաղաքականության և միջազգային հարաբերությունների վրա միջազգային կառույցների ազդեցության ուսումնասիրությունը, բանալիներ են տալիս խորանալու այն դերի մեջ, որը Ռուսաստանի համեմատ ՆԱՏՕ-ն խաղում է Հարա-

վային Կովկասում, որտեղ փորձ է արվում հաստատել արևմտյան ազատական ժողովրդավարության քաղաքական գլոբալ հեգեմոնիան: Արևելյան Եվրոպայի փորձը ցույց է տվել, որ արևմտյան ազատականությունը հակված է ընդլայնելու իր ազդեցության գոտին, ինչն իր հետ բերում է նաև տարածաշրջանին ոչ բնորոշ ազատական ինտերնացիոնալիզմը, ինչը հանգեցնում է մրցակցության, կամ հակամարտության նոր որակի, քանի որ Ռուսաստանն այս տարածաշրջանը շարունակում է դիտարկել որպես իր շահերի ու իր ազդեցության գոտի և Արևմուտքից ներթափանցող գաղափարախոսությունները ևս դիտարկում է որպես պատերազմական գործիք: Նեոլիբերալիզմը հիմնվում է ռացիոնալության և պայմանականության հայեցակարգերի վրա՝ ընդգծելով միջազգային քաղաքականության ոլորտում ինստիտուտների և կազմակերպությունների խաղացած կենտրոնական դերը: Այժմ ուշադրություն է դարձվում կանոնների վրա հիմնված միջազգային ինստիտուցիոնալ համակարգում ազդեցության խնդրին՝ որպես իշխանության վրա հիմնված փոխազդեցությունների հակակշիռ:

Ռուսաստանի շահերը բախվում են շահագրգիռ այլ խաղացողների և կազմակերպությունների շահերին, որոնք ձգտում են ընդլայնել իրենց ազդեցությունը տարածաշրջանում: ԱՄՆ-ը, Թուրքիան, Իրանը, ՆԱՏՕ-ն և Եվրամիությունը չեն էլ փորձում թաքցնել իրենց ագրեսիվ հավակնությունները:

Մինչև ուկրաինական պատերազմի նոր փուլը Ռուսաստանը կենտրոնացած էր ԱՊՀ-ի իր հարևանների հետ ռազմավարական կապերի ընդլայնման վրա, որոնք նրան անհրաժեշտ էին և են՝ որպես մեծ տերություն կրկին հանդես գալու գործիք և երաշխիք: Հարավային Կովկասը Ռուսաստանի համար կրիտիկական ազգային շահերի տարածաշրջան է, և անկախ ցանկությունից և հնարավորությունից Ռուսաստանը պարզապես չի կարող խուսափել Հարավային Կովկասի գործերին ներգրավվելուց: Ի դեպ, ի չիք չեն դարձել գործոնները, որոնք (պոտենցիալ) թույլ են տալիս Ռուսաստանին շարունակելու մնալ արդյունավետ տարածաշրջանային խաղացող. դրանք են պատմական կապերը, ինստիտուցիոնալ և ժողովրդագրական առավելությունները, լեզուն և մշակույթը, ինչպես նաև այն փաստը, որ երկիրը ֆիզիկապես սահմանակից է Հարավային Կովկասին: 1991-ի վերջին, Խորհրդային Միության փլուզումից հետո աստիճանաբար ստեղծվեցին մի շարք ինստիտուտներ, որոնք փորձում էին ինչ-որ կերպ փոխարինել փլուզված խորհրդային նախկին համակարգին: Այնպիսի կառույցներ, ինչպիսիք են Անկախ Պետությունների Համագործակցությունը (ԱՊՀ), Շանհայի համագործակցության կազմակերպությունը (ՇՀԿ), Եվրասիական միությունը և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ) հիմնված էին ընդհանուր պատմության և ընդհանուր շահերի վրա: Այնուամենայնիվ, ոչ բոլոր նորանկախ պետություններն են ողջունել և ողջունում անդամակցությունը նման կառույցներին, հասկանալով, որ այդ ինստիտուտները ղեկավարվում և ազդվում են Ռուսաստանի կողմից: Ռուսաստանը շարունակում է ընկալվել որպես նախկին գաղութատիրական տերություն: Որոշ հեղինակներ պնդում են, որ Ռուսաստանի քաղաքականությունը Հարավային Կովկասի նկատմամբ մնում է նեոկայսերապաշտական: Հիմնական տրամաբանությունն այն է, որ Ռուսաստանը մոտ 200 տարի ղեկավարել է այս աշխարհագրական տարածքը և պատրաստ չէ այն ազատել իր ազդեցությունից:

Մոսկվան տարածաշրջանի վրա ունի ռազմավարական, տնտեսական (հատկապես էներգետիկայի ոլորտում), ինչպես նաև քաղաքական լծակներ: Հարավկովկասյան բոլոր երեք երկրներն էլ սերտորեն կապված են ռուսական տնտեսության հետ՝ կարևորագույն ենթակառուցվածքների, առևտրի, ներդրումների և մշտական սփյուռքից ու աշխատանքային միգրանտներից ստացվող դրամական փոխանցումների միջոցով: Կովկասյան տարածաշրջանից Ռուսաստանի հեռանալու մասին ցանկացած հայտարարություն, անկախ թե ով է նախաձեռնողը, Ռուսաստանը՝ ըստ պահի թելադրանքի, թե նրա հակառակորդները, հաճախ հիմնված են պատեհապաշտ նկատառումների վրա: Դարեր հետ չգնալով՝ կարելի է ասել, որ միայն վերջին 35 տարիների ընթացքում Ռուսաստանը մեկ

անգամ չէ, որ «ճանապարհվել» է Անդրկովկասից, կամ իրեն «ճանապարհել են»: Պատրանքներ չպետք է ունենալ: Կովկասում Ռուսաստանը այսօր էլ վարում է վճռական տարածաշրջանային քաղաքականություն՝ համահունչ իր պատմական ավանդույթներին, ըստ որոնց տարածաշրջանը դիտարկվում է որպես «Ռուսաստանի պատմության և ճակատագրի անբաժանելի մաս», ինչպես նաև նրա ժամանակակից աշխարհաքաղաքական շահերի օբյեկտ: Միևնույն ժամանակ, նրա երկարամյա դերը, որպես տարածաշրջանում գլխավոր խաղացող, շարունակում է ձևավորել նրա ընկալումները և առաջնահերթությունները: Ռուսաստանի քաղաքականությունը Հարավային Կովկասի նկատմամբ համահունչ է նաև հետխորհրդային Եվրասիայի ավելի լայն հայեցակարգին, որը դիտվում է որպես խառնարան, որի միջով Ռուսաստանը պետք է անցնի, որպեսզի վերջնականապես հաստատվի որպես մեծ գլոբալ տերություն: Այս դինամիկան կրկին դրսևորվել է 2013 թվականից՝ Ուկրաինայում ծավալվող հակամարտությանը ռուսական պատասխանում:

Ժամանակ առ ժամանակ ձևավորվում են պատրանքներ, որ Ռուսաստանը Հարավային Կովկասից «հավաքվեց և գնաց»: Դա տեղի է ունեցել 2006 թվականին Վրաստանից ռուսական զորքերի դուրսբերումից հետո: Բայց հետո եղավ 2008-ի «թեժ օգոստոսը»: Այդպիսի տպավորություն ստեղծվեց 2012-ին, երբ Ռուսաստանը դադարեցրեց Ադրբեջանում Գաբալայի հրթիռային հարձակման նախազգուշացնող ռադիոտեղորոշիչի շահագործումը: Չարժե շտապել եզրակացություններ անելու: Այո, Ռուսաստանն այսօր կորցրել է իր բացառիկ կարգավիճակը Հարավային Կովկասում, այդ փաստը դժվար է վիճարկել: Բայց նա ինքնին կովկասյան տերություն է (Հյուսիսային Կովկասի 7 հանրապետությունները, ներառյալ Ադրղեան, գումարած Կուբանը և Ստավրոպոլը Ռուսաստանի Դաշնության կազմում): Ռուսաստանը չի կարող հեռանալ ինքն իրենից: Կովկասյան աշխարհաքաղաքականությունը մշտական շարժման մեջ է: Այո, խնդիրները դատարկ տեղից չեն առաջանում, դրանց նախադրյալները հասունանում են, կարևոր է հետևել դրանց: Եվ հասկանանք սերունդների գործոնը, սպասումների ու հիասթափությունների կուտակված ազդեցությունը: Ռուսաստանի հեռանալը (իր գոյության տարբեր ձևերով) եղել է նախկինում, բայց դա խաղաղություն չբերեց Կովկասին: Այդպես էր 1917-1921 թվականներին. այդպես էր 1989-1992 թվականներին:

Ռուսաստանի Դաշնությունը ԽՍՀՄ-ից ժառանգել է Կասպից ծովի ածխաջրածնային պաշարների հասանելիության մենաշնորհը, սակայն տարածաշրջանի նկատմամբ նրա վերահսկողությունը որոշակի մարտահրավերների առջև է կանգնած: Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, որը շահագործման է հանձնվել 2006 թվականին, դիտվում է որպես «պորտալար», որը սերտորեն կապում է Ադրբեջանն ու Վրաստանը Արևմուտքի հետ: 2009 թվականին գազի գնի շուրջ Ռուսաստանի և Ուկրաինայի վեճը, որը ձմռան կեսերին հանգեցրեց Եվրոպա մատակարարումների ժամանակավոր ընդհատմանը, դիվերսիֆիկացման պահանջ առաջացրեց Եվրոպայում: Կասպից տարածաշրջանն այժմ Եվրոպական միության կողմից դիտվում է որպես բնական գազի մատակարարման «չորրորդ առանցք» (Նորվեգիայից, Ռուսաստանից և Աֆրիկայից հետո)՝ մայրցամաքի կարիքների մինչև 20 տոկոսը բավարարելու ներուժով: Էներգետիկ ոլորտում աշխարհաքաղաքական մրցակցությունը շարունակում է լարված մնալ: Քաղաքական առումով, հետխորհրդային տարածքը փոփոխվող կոնֆիգուրացիաներում (և, հնարավոր է, ինքնին անվանման փոփոխությամբ) կմնա այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունի նրա գերիշխողը՝ Ռուսաստանի Դաշնությունը, որն ունի իր իշխանությունը նախագծելու բավարար հնարավորություններ (տարբեր պատկերացումներով՝ սկսած փափուկից մինչև գերկոշտ) նախկին ԽՍՀՄ տարածքում: Այո՛, հասկանալի է նաև, որ Ռուսաստանը բավարար ռեսուրսներ չունի՝ միայնակ հարավկովկասյան տարածաշրջանում ուժի բավարար պրոյեկցիա իրականացնելու համար: Բայց դա՝ այսօր: Վրաստանը, եթե իր զարգացումները բարենպաստ լինեին ԵՄ-ի հետ մերձեցման առումով, կարող էր դեռ առաջընթաց ունենալ: Սակայն, իրավիճակ է փոխվել: Որքան էլ տարօրինակ հնչի, Հարավային Կովկասում Ռուսաստանի գտնվելու ամենակայուն հիմքը Հայաստանի հետ նրա երկկողմ հարաբերություններն են: Հայաստանը Ռուսաստանին Հարավային Կովկասի հետ կապող հիմնական «պորտալարն» է: Երկու պետությունները պատմական և մշակութային մեծ կապեր ունեն, և միջազգային հարցերի մի մասի վերաբերյալ նրանց դիրքորոշումները սերտորեն համաձայնեցված են, նույնիսկ Փաշինյանի հայտարարությունների ենթատեքստում:

Քանի դեռ Հայաստանը վտանգ է զգում Ադրբեջանի կողմից, ռազմավարական կախվածության մեջ կմնա Մոսկվայից: Հայաստանը կախված է Ռուսաստանի տնտեսական աջակցությունից, ներառյալ առևտուրը և գրավիչ գներով էներգակիրները: Ռուսաստանը ձեռք է բերել վերահսկիչ բաժնետոմսեր Հայաստանի ազգային տնտեսության խոշոր հատվածներում, ներառյալ երկաթուղին, հանքարդյունաբերությունը, հեռահաղորդակցությունը և էներգետիկ ենթակառուցվածքները: Հաշվի առնելով կախվածության աստիճանը՝ զարմանալի չէ, որ 2014 թվականի սեպտեմբերին Երևանը որոշեց մերժել Ասոցացման համաձայնագրի ԵՄ առաջարկը՝ հօգուտ Ռուսաստանի կողմից աջակցվող Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության: Այն ժամանակ որոշ վերլուծաբաններ դա ընկալում էին որպես ամբողջության ձևավորվող Կովկասի՝ ռազմավարական բաժանում, Ռուսաստան-Հայաստան-Իրան առանցքի երկայնքով՝ ի տարբերություն Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան այլընտրանքի, բայց գրեթե կասկած չկա, որ նման սցենարը ուռճացնում էր առաջարկվող դաշինքների համահնչունության աստիճանը: Այնուամենայնիվ, միայն Մոսկվայի և Երևանի երկկողմ հարաբերություններն ունեն իրական ռազմավարական կշիռ և արժեք: Պատահական չէ, որ Արևմուտքը մատների արանքով է նայում 2022 թվականի փետրվարի 22-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի ու Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի ստորագրած «Դաշնակցային փոխգործակցության մասին» հռչակագրին, որն իբրև դաշնակցային մակարդակի է բարձրացնում Ռուսաստանի ու Ադրբեջանի հարաբերությունները: Բոլորն էլ փայլուն հասկանում են, որ դա փուչիկ է: Ադրբեջանը ունի մեկ ռազմավարական դաշնակից, դա Թուրքիան է: Եվ ստորագրված փաստաթղթերը ընդամենը հետապնդում են մեկ նպատակ, ինչ որ չափով հավասարակշռել 2021 թվականի հունիսի 15-ին կնքված Շուշիի հռչակագիրը: Արևմուտքի ջանքերը բացառապես ուղղված են Հայաստանը Ռուսաստանից պոկելու գերնպատակին: Պատահական չէ նաև Ռուսաստանի մեղմ արձագանքը Հայաստանից հնչող հակառուսական հայտարարություններին: Ռուսաստանը ոչ մի ցանկություն չունի Հայաստանում կրկնելու վրացական սցենարը:

Ազդեցություն ձգտող մեկ այլ կազմակերպություն ՆԱՏՕ-ն է՝ ԱՄՆ-ի գլխավորած Արևմուտքի ինստիտուցիոնալ մեխանիզմը՝ նախկին Արևելյան բլոկի երկրներին և նախկին խորհրդային հանրապետություններին եվրաատլանտյան ինտեգրման դրոշի տակ դնելու և նրանց Ռուսաստանի աշխարհաքաղաքական ուղեծրից հեռացնելու նպատակով: Ռուսաստանը ՆԱՏՕ-ի առաջխաղացումը շարունակում է դիտել որպես անցանկալի ներխուժում «իր» կենսատարածք և որդեգրել է ՆԱՏՕ-ի երկրները «անպատշաճ» և «անվստահելի» գործընկերներ ներկայացնելու մարտավարությունը: Ռուս հետազոտողները գտնում են, որ «Արևմուտքը պետք է հասկանա, որ Ռուսաստանը կենսական հետաքրքրություններ ունի Հարավային Կովկասում», ինչպես նաև համոզված են, որ եթե ՆԱՏՕ-ն դառնա Ռուսաստանի հարևան Հարավային Կովկասում, այս տարածաշրջանում երբեք խաղաղություն չի լինի: Ուստի ռուսական որոշ քաղաքական շրջանակներ տարբեր ճանապարհներով փորձում են կանխել Հարավային Կովկասի և ՆԱՏՕ-ի համագործակցությունը:

Ռուսաստանը ջանքեր է գործադրում իր ռազմավարական դիրքի և բնական ռեսուրսների շնորհիվ Հարավային Կովկասի բոլոր երկրներին ընդգրկելու համար և՛ ՀԱՊԿ, և՛ ԵԱՏՄ կազմում: Նա ցանկանում է վերստեղծել հին աշխարհակարգը, որում Մոսկվան կրկին կարևոր դեր է խաղալու: Նշենք, որ Պուտինի երկրորդ և երրորդ նախագահական ժամկետների միջև ընկած ժամանակահատվածը համեմատաբար հանգիստ է եղել Արևմուտքի հետ Ռուսաստանի հարաբերություններում: Սակայն արդեն 2010 թ. փետրվարին ռուսական նոր ռազմական դոկտրինը ՆԱՏՕ-ն հռչակեց որպես իր ազգային անվտանգության հիմնական մարտահրավեր: Անշուշտ, Ռուսաստանը չէր ցանկանում վերադառնալ Արևմուտքի հետ առճակատման մաշեցնող քաղաքականությանը, բայց նաև չէր կարող համաձայնվել ՆԱՏՕ-ի ընդլայնման համակարգված փորձերի հետ: Պուտինի երրորդ ժամկետը սկսվեց Ռուսաստանի և Արևմուտքի ակնհայտ հակադրությամբ՝ որպես տարբեր արժեքային համակարգերով առաջնորդվող ուժերի հակամարտություն: Միավորված, ազատ և իր ու իր հարևանների հետ խաղաղության մեջ գտնվող Եվրոպայի գաղափարին միանալուց երկու տասնամյակ անց Ռուսաստանը վերջնականապես հրաժարվեց դրանից: Այս բացը դրսևորվեց նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ, հատկապես նախկին խորհրդային հանրապետությունների հետ հարաբերություններում: Հենվելով իր ազդեցության գոտու և շահերի մասին Ռուսաստանի նախկին պնդումների վրա, ինչպես նաև արևմտյան աշխարհաքաղաքական էքսպանսիայի վտանգը հաշվի առնելով՝ Պուտինը կարևորել է Եվրասիական ինտեգրացիան՝ իր արտաքին քաղաքականության օրակարգ ներառելով նախկին խորհրդային երկրների միավորման գաղափարը:

2014 թվականի մարտի 18-ի իր ուղերձում, որտեղ նախագահ Պուտինն արդարացնում էր Ղրիմի բռնակցումը, նա ընդգծեց այն նվաստացումը, որը կրել

էր Ռուսաստանը Արևմուտքի մի շարք թշնամական գործողությունների և խախտած խոստումների պատճառով, ներառյալ ՆԱՏՕ-ի ընդլայնումը դեպի արևելք: Կրկնենք, որ մի պահ թվում էր, թե Մոսկվան կարծես թե մեկընդմիշտ կորցրել է Վրաստանը 2008 թվականի օգոստոսյան պատերազմից հետո: Հիմա հասկանալի է, որ դա այդպես չէ, սակայն վնասի վերականգնումը կպահանջի հսկայական աշխատանք մի քանի սերունդների ջանքերի արդյունքում: Ռուսաստանի հետ բախումից հետո Վրաստանը լքեց Անկախ Պետությունների Համագործակցությունը (ԱՊՀ), որը վերջին հետխորհրդային կառույցն էր, որի հետ կապված էր Հայաստանի հյուսիսային հարևանը: ԱՊՀ-ից Վրաստանին վտարելով՝ Ռուսաստանը կորցրեց լեգիտիմությունն ու ազդեցությունը Վրաստանում, ինչը ավարտվեց դիվանագիտական հարաբերությունների դադարեցմամբ:

Ազգային անվտանգության ռազմավարությունը, որը ստորագրվել է Պուտինի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 31-ին, ԱՄՆ-ին և նրա դաշնակիցներին ներկայացնում է որպես Ռուսաստանի համար գլխավոր սպառնալիք, քանի որ Արևմուտքը ձգտում է պահպանել իր գերիշխող դիրքն աշխարհում:

ՆԱՏՕ-ի ընդլայնումը շարունակվում է արագ տեմպերով, և Դաշինքը հավատարիմ է իր գլոբալ առաքելության իրականացմանը:

Նոր փաստաթղթի համաձայն՝ ՆԱՏՕ-ն խաթարում է միջազգային անվտանգությունը, միջազգային իրավունքը և սպառազինությունների վերահսկման պայմանագրերը. ձեռք է բերում նոր ռազմական հնարավորություններ, և իր ռազմական ենթակառուցվածքն ավելի մոտ է տեղակայում Ռուսաստանի Դաշնության տարածքին՝ սպառնալով նրա անվտանգությանը: Հետխորհրդային տարածքում Վրաստանը Ռուսաստանի հետ առճակատման ամենավառ օրինակն էր: Հիմա այդ ճանապարհին է Հայաստանը:

Այսպիսով, ըստ 2010 թվականի հայեցակարգի՝ ՆԱՏՕ-ի գլոբալիզացիան Ռուսաստանի անվտանգության թիվ մեկ արտաքին սպառնալիքն էր: Ի տարբերություն 2010 թվականի փաստաթղթի, 2014 թվականի հայեցակարգում ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը չի դիտարկվում որպես կայունության գործոն, մինչդեռ նշված սպառնալիքների բնույթը մնում է նույնը: Այս փաստաթղթում պարզապես կա մի փոքր ուղղում, ՆԱՏՕ-ն նշվում է որպես հավասար երկխոսության «պոտենցիալ գործընկեր»: Թեև կոնկրետ երկրների անուններ չեն նշվում, Ռուսաստանի ավանդական ազդեցության գոտու ռազմավարությունը 2014 թվականի ռազմական հայեցակարգի առանցքն է: Այսպիսով, քանի դեռ Հայաստանը հետևում էր Ռուսաստանի կառավարության գծին, իսկ Ադրբեջանի չեզոքությունը Ռուսաստանի համար անվտանգության որևէ վտանգ չէր ներկայացնում, միակ երկիրը, որտեղ Մոսկվան փորձում է բարելավել իր իմիջը, Վրաստանն էր: Հաշվի առնելով կոշտ ուժի քաղաքականության ձախողումը, որի նպատակն էր Վրաստանին հետ պահել իր արևմտամետ կողմնորոշումից, Ռուսաստանի իշխանությունները Թբիլիսիի հետ հարաբերություններում սկսել են օգտագործել, այսպես կոչված, փափուկ ուժը: Հասկանալով, որ արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերի շուրջ վեճերն անիմաստ են, քանի որ Վրաստանը մտադիր չէ խախտել իր տարածքային ամբողջականությունը կամ փոխել իր քաղաքական դիրքորոշումը ՆԱՏՕ-ի և Եվրամիության նկատմամբ, ռուսական դիվանագիտությունը փորձում է վարել երկխոսության քաղաքականություն՝ հիմնված «համաձայնություն փոխադարձ անհամաձայնության մասին» սկզբունքի վրա (երբ ձեր գործընկերը գործում է որոշակի սահմաններում): Այս գաղափարի կողմնակիցների կարծիքով, Ռուսաստանը պետք է Վրաստանի նկատմամբ նոր քաղաքականություն որդեգրի, որը կչափավորի Մոսկվայի հանձնառությունը Թբիլիսիում ռեժիմի փոփոխության հարցում, և փոխարենը կօգտագործի վրաց ժողովրդի հետ անմիջական շփումները: Այս նոր քաղաքականության նպատակն է կանխել վրացական քաղաքական վերնախավերի հետագա օտարումը Ռուսաստանից և օգնել ռուսամետ (կամ գոնե Ռուսաստանի նկատմամբ չեզոք) ուժերին իշխանությունը պահելու նաև հաջորդ ընտրական շրջանում: Արդյունքը մենք տեսնում ենք: Այս առումով հետաքրքիր են ռուս քաղաքագետների դիտարկումները, ըստ որոնց Ռուսաստանը Հարավային Կովկասում ունի երեք հիմնական առաջնահերթություն, գոնե մինչև ուկրաինական թնջուկի հանգուցալուծումը.

1) աջակցություն Աբխազիային և Հարավային Օսիային՝ որպես հակակշիռ ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին անդամակցելու Վրաստանի ձգտումների,

2) Հայաստանի և Ադրբեջանի միջև հավասարակշռության ապահովումը, Արցախի հայաթափումից հետո, և տարածաշրջանում իր ռազմական ներկայության, գոնե նվազագույն ապահովումը,

3) Անդրկովկասի նախկին խորհրդային հանրապետություններում իր որոշակի շահերի ամրագրումը որպես ռուսական՝ Հյուսիսային Կովկասում ներքին խաղաղ զարգացման անհրաժեշտ պայման:

Սակայն Արցախի հայաթափման տեսանկյունից, Մոսկվայի վարած «ընտրովի ռեվիզիոնիզմի» քաղաքականությունը, երբ ճանաչելով Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը՝ Կրեմլը նախընտրեց չաջակցել չճանաչված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» հավակնություններին, լուրջ

փորձության ենթարկեց և դեռ կենթարկի Ռուսաստանի դերակատարությունը տարածաշրջանում: Նախկինում, ամրապնդելով իր դիրքերը որպես տարածաշրջանային առաջնորդ՝ Ռուսաստանն ակտիվորեն համագործակցում էր Արևմուտքի հետ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում: Ի տարբերություն Վրաստանի, Մոսկվայի և Վաշինգտոնի դիրքորոշումներն այս հարցում շատ ավելի ընդհանրություններ ունեին, և Մոսկվային հաջողվել է նվազագույնի հասցնել իր տարածաշրջանային գերակայության մարտահրավերները: Տարածաշրջանում ՆԱՏՕ-ի հետագա ընդլայնման ծրագրերը մնում էին սառեցված, և Ռուսաստանը միայն ուժեղացնում էր իր դերը որպես հզոր միջնորդ Լեռնային Ղարաբաղի գործընթացում: Մոսկվային հաջողվել է նաև ապահովել անդրսահմանային և հակաահաբեկչական համագործակցություն՝ միաժամանակ զսպելով ջիհադական ուժերին Ադրբեջանում (և նույնիսկ Վրաստանում, թեև վերջինի դեպքում շփումները բավականին սահմանափակ էին):

Ռուսաստանում հասկանում են, որ Հարավային Կովկասում ընդլայնման գործընթացը կարող է ՆԱՏՕ-ին ավելի ճկուն դարձնել՝ ավելացնելով Ռուսաստանին զսպելու նրա կարողությունը: Ռուսաստանը նահանջելու տեղ չունի: Առավելևս, պետք էր հաշվի առնել, որ Հարավային Կովկասի անվտանգության վիճակի վրա ազդելու Ռուսաստանի ռազմավարական, տնտեսական և գաղափարական հնարավորությունները մնում էին շատ ավելի ուժեղ, քան որևէ այլ խաղացողի:

1994 թվականից ի վեր Հարավային Կովկասի բոլոր երեք երկրները ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» (PfP) ծրագրի մասնակիցներ են: Տարածաշրջանում ներգրավվածության հայտարարված հիմնավորումն ու տրամաբանությունն այն է, որ այն նախատեսված է «աջակցելու միջազգային ջանքերին՝ խթանելու վստահության ամրապնդման միջոցները՝ հակամարտությունների կարգավորման համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու համար, առաջին հերթին օգնելով Հարավային Կովկասի պետություններին՝ կայացնելու ինստիտուտներ, որոնք ավելի լավ են հաղթահարում անվտանգության մարտահրավերների բազմազանությունը, որոնց բախվում է յուրաքանչյուր երկիր:

Ոչ ոք չի հերքում, որ ՆԱՏՕ-ն կարող է լինել sine qua non (անհրաժեշտ պայման-լատ.) Հարավային Կովկասի անվտանգության համար:

Սակայն, փորձը ցույց է տալիս, որ ՆԱՏՕ-ն իր հետ բերում է նոր գլոբալ ռիսկեր, ինչը պարտադրում է, որպեսզի անվտանգության ոլորտն ընդլայնվի դեպի Հարավային Կովկասին ոչ բնորոշ անվտանգության ոչ ավանդական խնդիրների լուծման դաշտ:

Ըստ ՆԱՏՕ-ի ռազմավարական հայեցակարգի 13-րդ կետի՝ ճանաչվում է ազգերի աճող կախվածությունը. «կենսական կապի, տրանսպորտի և տարանցման ուղիներից, որոնցով էլ պայմանավորված են էներգետիկ անվտանգությունը, միջազգային առևտուրը և բարգավաճումը»:

ՆԱՏՕ-ի համար Վրաստանի և Ադրբեջանի առաջնային նշանակությունը հարավկովկասյան միջանցքի պաշտպանությունն է ռուսական ազդեցությունից, Եվրոպա էներգառեսուրսների մատակարարման ապահովումը ու Իրանի և Ռուսաստանի միջև փոխգործակցության սահմանափակումը: Հայաստանը նման գործառույթներ իրականացնելու ռեսուրս չունի: Ընդունենք նաև, որ Կովկասը ոչ միայն սառեցված հակամարտությունների հիմնական աղբյուրն է, այլև ներկայացնում է ՆԱՏՕ-ի ընդլայնման սահմանը դեպի Ռուսաստանի հարավային բաստիոն: Անվտանգության տարբեր շահերն ու սպառնալիքների ընկալումները նույնպես բարդացնում են տարածաշրջանը ՆԱՏՕ-ի համար: Անկախ վերջին զարգացումներից, Վրաստանը Ռուսաստանը դիտարկում է որպես սպառնալիք, Ադրբեջանը՝ ոչ, իսկ Փաշինյանը դեգերումների մեջ է: Կասպից ծովի տարածաշրջանում էներգետիկ անվտանգության ապահովման գործում ՆԱՏՕ-ի վճռական դերի հիմնական խոչընդոտներն են ՆԱՏՕ-ի տրամադրության տակ գտնվող միջոցների և գործիքների բացակայությունը, ինչը խոչընդոտում է ՆԱՏՕ-ի ռազմավարական հայեցակարգում արտահայտված մտադրությունների իրականացմանը: Դաշինքի կողմից ձեռնարկված ցանկացած գործողություն, հատկապես ռազմական ուժերի ներգրավմամբ, կարող է առաջացնել ռուսական պատասխան՝ հակակշռելու եվրաատլանտյան ներկայությանը տարածաշրջանում, որն այնքան կարևոր է իր ազգային շահերի պաշտպանության համար: Բացի դա, ՆԱՏՕ-ի ներսում առկա է անհամաձայնություն անվտանգության ոլորտում ընդլայնված դեր խաղալու ՆԱՏՕ-ի պատրաստակամության վերաբերյալ: Եվ, վերջապես, կասպյան գործընկերների հետ թույլ է համագործակցությունը էներգետիկ անվտանգության հարցերում:

ՆԱՏՕ-ի ընդհանուր մոտեցման էությունն այն է, որ փորձում է ստեղծել և պահպանել համախոհ պետություններ՝ ընդհանուր պատմական փորձառու-

թյունների և Ռուսաստանի շահերի քաղաքականության հավասարակշռման համար:

Ավելին, Ռուսաստանը ցույց տվեց, որ սառեցված հակամարտություններն ու էներգիան օգտագործում է որպես գործիք՝ ՆԱՏՕ-ին իր սահմաններից հեռացնելու և նրա համախմբվածությունը թուլացնելու համար: Եթե դիտարկենք Ռուսաստանի եվրոպական ծայրամասում գտնվող բոլոր երկրները, որոնք ՆԱՏՕ-ի անդամ չէին, ապա կտեսնենք, որ միայն Ֆինլանդիան (անդամակցեց դաշինքին 2023-ի ապրիլի 4-ին), Շվեդիան (2024 ապրիլի 7-ին մտավ ՆԱՏՕ) և Բելառուսը չունեն հակամարտություններ իրենց տարածքում: Առաջին երկուսը չեզոք երկրներ էին, իսկ վերջինը՝ ՀԱՊԿ անդամ:

Արձանագրենք. Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի մրցակցությունը միայն երկրորդական ճակատ է՝ համեմատած Ռուսաստանի և Արևմուտքի ներկայիս դիմակայության հիմնական դրույթի հետ: Տարածաշրջանը, այդ թվում և Հայաստանի ազատական-արևմտական իշխանությունների ջանքերով, դառնում է դասական բուֆերային գոտի: Արդյունքում, որքան շատ Արևմուտքը փորձի «ժողովրդավարացնել» տարածաշրջանը, այնքան ավելի հավանական է, որ տարածաշրջանի վարչակարգերը, սթափվելով, կդիմեն այնպիսի տերությունների, ինչպիսիք են Ռուսաստանը և Չինաստանը, որոնք առաջնորդվում են գոյատևման բնազդով: Պետք է խոստովանել, որ մեծ տերությունների մրցակցության մեջ Ռուսաստանը տակտիկապես գերազանցել է ՆԱՏՕ-ին Կովկասում, և գործնականում անհնար է դարձրել դաշինքի մշտական ներկայությունը տարածաշրջանում, չնայած Միացյալ Նահանգների և Թուրքիայի ակտիվ ջանքերին: Դա Հայաստանում պարտավոր են գիտակցել: ԱՄՆ-ի գլխավորած Արևմուտքի և Ռուսաստանի միջև գլոբալ մասշտաբով աճող լարվածությունն արտացոլվում է Հարավային Կովկասում, որտեղ նոր բաժանումների վտանգ կա, և նոր պատերազմների հավանականությունը առկա է ամեն օր: Վերջիվերջո, էական տարբերություն կա Ռուսաստանի և ՆԱՏՕ-ի քաղաքականության և ազդեցության արժեքների միջև: 2008-ի Վրաստանում հնգօրյա պատերազմը և 2014-ին Ղրիմի կցումը Ռուսաստանին, իսկ մեր օրերում նաև աննահանջ կռիվն Ուկրաինայում, ցույց տվեցին, որ Ռուսաստանը միջազգային հարթակ է վերադարձել նպատակասլացորեն և իր գործողություններով ապացուցել է իր հաստատակամությունը: Ոչ Վրաստանը, ոչ Ուկրաինան այս պատերազմների առարկա չեն եղել: Այս երկու երկրները հարթակ են ծառայել աշխարհաքաղաքական մեծ խաղի համար, որը շարունակվել է Ռուսաստանի և Արևմուտքի միջև Խորհրդային Միության փլուզումից և՛ առաջ, և՛ հետո: ՆԱՏՕ-ն չշտապեց ի պաշտպանություն Վրաստանի, երբ 2008-ին պատերազմ սկսվեց, և այսօր էլ դա չի անում Ուկրաինայում: Ռուսաստանն ամեն ինչ կանի իր «մոտիկ արտասահմանում» ազդեցություն պահպանելու և այնտեղ որպես գերիշխող ուժ մնալու համար, ինչպես նաև հետխորհրդային մնացյալ տարածքում: Հարավային Կովկասի երկրների համար սառեցված հակամարտությունների հետ կապված խնդիրները (այդ թվում և՝ Արցախի) վերջնականապես լուծելու միակ ճանապարհը ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի միջև ճիշտ հավասարակշռություն գտնելն է, քանի որ վերջինս չի հրաժարվում տարածաշրջանում իր քաղաքական հավակնություններից: Ռուսական փորձագիտական-վերլուծական հանրույթը կարծում է, որ Ռուսաստանը երբեք Հարավային Կովկասից չի հեռանա: Պարզապես փոխվում են հարաբերությունների շեշտադրումները: Եթե նախկինում, օրինակ, Հայաստանի հետ հարաբերություններում Հայաստանի անվտանգության վրա էր շեշտը դրված, ապա հիմա այդ շեշտադրումը փոխվել է: Ռուսաստանը կշարունակի իրեն համարել խորհրդային ժառանգության միակ ժառանգորդը, ինչքան էլ դա կարող է շատերին դուր չգալ: Խնդիրն այն է, թե, օրինակ, ինչ են ուզում էլիտաները, և ինչպես կարող է ռուսական վերնախավի և տեղի էլիտաների միջև գոյանալ, այսպես ասած, փոխզիջումային խաղաղ գոյակցության համակարգ: Սակայն այն, որ Մոսկվան շարունակելու է վճռական ազդեցություն պահպանել տարածաշրջանում, անկախ ամեն ինչից, անբեկանելի իրողություն է, և ճակատագրական սխալ են թույլ տալիս նրանք, ովքեր կարծում են, թե Ռուսաստանը հեռանում է Հարավային Կովկասից: ■

Ադրբեջանում շիաների ձերբակալությունների նոր ալիքի շուրջ

Լիանա Պետրոսյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ավագ լաբորանտ, դասախոս, պատմական գիտությունների թեկնածու

Վերջին շաբաթներին Ադրբեջանում շիա մահմեդականների նկատմամբ ձերբակալությունների ու ճնշումների աճի միտում է նկատվում, ինչը հարուցել է իրավապաշտպան խմբերի և միջազգային կազմակերպությունների լայնածավալ անհանգստությունն ու դատապարտումը: Իլհամ Ալիևի վարչակարգի գործողությունները թե՛ երկրի ներսում, թե՛ դրա սահմաններից դուրս առավել խորացրել են մտահոգություններն ու անհանգստությունները կրոնական ազատության և մարդու իրավունքների շուրջ: Գաղտնիք չէ, որ Ադրբեջանի կառավարությունը՝ նախագահ Ի. Ալիևի գլխավորությամբ, խոսքը և կրոնական ազատությունները սահմանափակելու երկարամյա պատմություն ունի: Վերջին տարիներին ռեժիմը թիրախավորել է երկրի շիա մահմեդական համայնքը, որը բնակչության զգալի մասն է կազմում:

Զեկույցներ են հայտնվել շիայական մզկիթների նկատմամբ հսկողության ավելացման, կրոնական առաջնորդների կամայական ձերբակալությունների և կրոնական հավաքների վրա հարձակումների մասին: Կառավարությունը նաև սահմանափակումներ է մտցրել կրոնական կրթության վրա՝ դժվարացնելով շիայական ճեմարանների ազատ գործունեությունը: Ավելին, ռեժիմը մեղադրվում է շիա մահմեդականներին թիրախավորելու և ահաբեկելու համար իրավական համակարգն օգտագործելու մեջ, ընդ որում, շատ ակտիվիստներ և գիտնականներ բախվում են անհիմն մեղադրանքների և անարդար ու շինծու դատավարությունների հետ:

Ավելին, շիաների նկատմամբ բռնաճնշումները սառեցնող ազդեցություն են ունեցել Ադրբեջանում

կամարտահայտման, խոսքի և հավաքների ազատությունների առաջընթացի վրա: Շատերն այժմ վախենում են բարձրաձայնել կամ բողոքել կառավարության կամայականությունների, սոցիալ-քաղաքական անարդարության դեմ՝ խուսափելով հաշվեհարդարից կամ որպես ծայրահեղական ու ահաբեկիչ պիտակավորվելուց:

Ադրբեջանում շիաների դեմ բռնաճնշումները հատկապես մտահոգիչ են՝ հաշվի առնելով երկրի միջկրոնական լարվածության պատմությունը: Շիա մահմեդականները նախկինում բախվել են խտրականության և բռնության մեծ ալիքի, և կառավարության վերջին գործողությունները սպառնում են էլ ավելի սրելու այդ լարվածությունը:

Միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները դատապարտել են Ադրբեջանի կառավարության գործողությունները և կոչ արել վերջ տալ երկրում շիա մահմեդականների նկատմամբ բռնաճնշումներին: Միավորված ազգերի կազմակերպությունը նույնպես մտահոգություն է հայտնել Ադրբեջանում կրոնական համայնքի իրավունքների և ազատությունների վատթարացման առիթով:

Ասվածի համատեքստում շատ կարևոր է, որպեսզի միջազգային հանրությունը շարունակի ճնշում

գործադրել Ադրբեջանի կառավարության վրա՝ պաշտպանելու համար բոլոր կրոնական խմբերի իրավունքներն ու կրոնական ազատության և հանդուրժողականության սկզբունքները: Ադրբեջանում շիաների թիրախավորումը մարդու իրավունքների բացահայտ խախտում է, և միջազգային հանրության պարտականությունն է ռեժիմին պատասխանատվության ենթարկելն իր անօրինական գործողությունների համար: Անդրադառնալով երկրի ներսում շիաների ձերբակալությունների նոր ալիքի պատճառներին՝ պետք է նշել, որ շիաների նկատմամբ բռնաճնշումների հիմնական պատճառներից մեկը պայմանավորված է հասարակության նկատմամբ վերահսկողությունը կորցնելու՝ իշխանության վախերի հետ: Ադրբեջանում իշխող վարչակարգը՝ նախագահ Ի. Ալիևի գլխավորությամբ, հայտնի է նաև իր ավտորիտար գործելակերպով և այլախոհությունը ճնշելու քաղաքական օրակարգով, իսկ շիա հոգևորականներն ու ակտիվիստները բոլոր ժամանակներում եղել են իշխող վարչակարգի ամբողջատիրական քաղաքականության քննադատներն ու ընդդիմադիրները՝ պայքարելով Ադրբեջանում բնակվող տեղաբնիկ ժողովուրդների և շիա հավատացյալների իրավունքների ու ազատությունների համար:

Կառավարության պատասխանն այս այլակարծությանը եղել է շիա հոգևորականներին և ակտիվիստներին ձերբակալելը, ամենատարբեր շինծու մեղադրանքներով բանտարկելն ու կալանավայրերում հոգեբանական և ֆիզիկական բռնության ենթարկելը: Այս ամենը շիաների համայնքում մի կողմից վախի մթնոլորտ է ձևավորել, ինչի հետևանքով շատերը ստիպված են եղել փախչելու երկրից կամ գործունեությունը ընդհատակում շարունակելու, մյուս կողմից էլ, չնայած իշխանական բռնություններին, շարունակելու համառ պայքարը:

Սոցիալական տիրույթում շատ է քննարկվում նաև Պաղեստինում Իսրայելի կողմից իրականացվող արաբների կոտորածի ու դրա խորապատկերին Իսրայելի հետ Ադրբեջանի ջերմացող հարաբերությունների և առաջինին արդբեջանական նավթի վաճառքի թեման:

Փորձագետները կարծում են, որ Ի. Ալիևը փորձում է ձերբակալությունների միջոցով ճնշել բողոքի ալիքը, որը տարածվում է երկրում՝ պայմանավորված մահմեդականների կոտորածի հարցում ադրբեջանական իշխանությունների որդեգրած կրավորական պահվածքով:

Ադրբեջանում շիաների ձերբակալությունները, հավանաբար, ուղղակիորեն կապված չեն Պաղեստինի պատերազմի կամ Ադրբեջանի և Իսրայելի գործընկերության հետ, սակայն ավելի սերտորեն կապված են ներքաղաքական գործընթացների դինամիկայի հետ, ինչպիսին են երկրի կրոնական լանդշաֆտի նկատմամբ վերահսկողությունը պահպանելու կառավարության ջանքերը:

Թեև Ադրբեջանն ամուր գործընկերային հարաբերություններ ունի Իսրայելի հետ, մասնավորապես պաշտպանության և անվտանգության առկա համագործակցությունը, քիչ հավանական է, որ երկրում շիաների ձերբակալությունները պայմանավորված լինեն հատուկ այս գործընկերության հետ: Սակայն բոլորովին բացառված չէ, որ շիաների և հասարակական-քաղաքական ակտիվիստների նկատմամբ կառավարության գործողությունները կարող են ազդել այլ երկրների, այդ թվում՝ Իսրայելի հետ ունեցած հարաբերությունների վրա:

Ընդհանուր առմամբ, երկրում շիաների ձերբակալությունների փաստը վերլուծելիս կարևոր է դիտարկել Ադրբեջանում առկա կոնկրետ համատեքստը և դինամիկան, այլ ոչ թե դրանք վերագրել բացառապես

արտաքին գործոններին, ինչպիսիք են Պաղեստինում պատերազմը կամ Ադրբեջանի գործընկերությունը Իսրայելի հետ:

Ադրբեջանը և Իսրայելը վերջին տարիներին ամուր գործընկերություն են հաստատել՝ հիմնվելով ընդհանուր շահերի և փոխադարձ հարգանքի վրա: Այս հարաբերությունները պայմանավորված են մի շարք գործոններով, ներառյալ ռազմավարական շահերը, տնտեսական համագործակցությունը և մշակութային կապերը:

Իսրայելը Ադրբեջանին ռազմական օգնություն է տրամադրել՝ 44-օրյա պատերազմի և դրան հաջորդած իրադարձությունների ընթացքում, անուղղակիորեն մասնակցել է արցախահայերի ցեղասպանությանն ու Արցախի բռնազավթմանը, ի վերջո, Իսրայելը երևացող ու աներևույթ տարբեր միջոցներով Ադրբեջանն օգտագործում է Իրանի դեմ:

Տնտեսական առումով նույնպես Ադրբեջանը և Իսրայելը ամուր գործընկերային հարաբերությունների հիմքեր են դրել, ընդ որում, երկու երկրների միջև առևտուրն ու ներդրումները աճում են: Իսրայելը նշանակալի ներդրող է Ադրբեջանի էներգետիկ ոլորտում, մասնավորապես՝ նրա նավթի և գազի պաշարների շահագործման գործընթացի զարգացման մեջ: Դրա դիմաց Ադրբեջանը Իսրայելին հասանելիություն է տրամադրել դեպի իր շուկաներ և ռեսուրսներ՝ նպաստելով երկկողմ առևտրի խթանմանը:

Ադրբեջանում շիա մահմեդականները հաճախ դժգոհություններ են հայտնել կառավարության կողմից խտրականության և իրենց համայնքի մարգինալացման վերաբերյալ: Սա հանգեցրել է երկրի ներսում բողոքի ցույցերի և անհնազանդությունների, որոնք էլ, իրենց հերթին, ազդել են Իսրայելի հետ հարաբերությունների վրա: Իսրայելի շիա մահմեդականները նույնպես բախվում են մարտահրավերների, այդ թվում՝ կրոնական ազատությունների սահմանափակումների և կառավարությունում ներկայացված չլինելու դրսևորումներով:

Ըստ էության, ակնհայտ է, որ Ադրբեջանում շիաների և հասարակական-քաղաքական ակտիվիստների ձերբակալությունների և ճնշումների հետևանքները կործանարար կարող են լինել Ադրբեջանի շիայական համայնքի համար, քանի որ Ադրբեջանը, չնայած իր կենսակերպով ու քաղաքական կողմնորոշմամբ առավելապես աշխարհիկ պետության օրինակ է, սակայն պաշտոնական խոսույթում հռչակված է որպես շիայադավան պետություն: Ըստ էության, վերոնշյալ ձերբակալությունների և բռնաճնշումների խորապատկերին քանդվել են բազմաթիվ ընտանիքներ, իրավապահ համակարգի ապօրինությունների հետևանքով հարազատները միմյանցից բաժանվել են առանց որևէ հստակ ապացույցների և ընթացակարգի:

Արդարադատության համակարգում թափանցիկության և հաշվետվողականության բացակայությունը շիա հավատացյալների շրջանում միայն ավելացրել է անարդարության և հալածանքի զգացումը:

Ակնհայտ է, որ Ադրբեջանում շիա մահմեդականների ձերբակալություններն ու ճնշումները մարդու իրավունքների բացահայտ խախտում են և պետք է դատապարտվեն միջազգային հանրության կողմից:

Կառավարությունը պետք է պատասխան տա իր գործողությունների համար և ճնշում գործադրի, որպեսզի երկրում ապահովվի շիաների անվտանգությունն ու ազատությունը: Աշխարհը պետք է համերաշխ լինի ճնշվածների հետ և աշխատի բոլորի համար ավելի ներառական և արդար հասարակություն ստեղծելու ուղղությամբ:

ԻԻՀ արտահերթ նախագահական ընտրություններն ու թեկնածուների ընտրության կարգը

Նարե Գևորգյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս

2024 թ. մայիսի 19-ին՝ Ադրբեջան կատարած այցից հետո կործանվեց ԻԻՀ նախագահ Էբրահիմ Ռաիսիին սպասարկող ինքնաթիռը, որի հետևանքով զոհվեցին նախագահը և վերջինիս պատվիրակության անդամները, այդ թվում՝ ԻԻՀ արտգործնախարար Հոսեյին Ամիր Աբդոլահիանը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:

Տեղի ունեցած ողբերգության պատճառները դեռևս բացահայտված չեն, սակայն հիմնականում շրջանառվում են երկու տեսակետներ, որոնց համաձայն կամ սա պարզապես ինքնաթիռի անսարքության հետևանք էր, կամ էլ Արևմուտքի, մասնավորապես, Իսրայելի հատուկ ծառայությունների հաջողված ռազմական օպերացիան: Ամեն պարագայում, Իրանում ստեղծված քաղաքական ճգնաժամի խորապատկերին մեկնարկել են արտահերթ նախագահական ընտրությունները, որոնք տեղի են ունենալու հունիսի 28-ին, իսկ թե ինչպես ու ինչ ընթացակարգով են ընտրվում նախագահի թեկնածուները, կանդրադառնանք ստորև:

Ընդհանուր առմամբ, Իրանի Իսլամական Հանրապետությունը բավականին կուռ քաղաքական համակարգ ունի, որում ցանկացած օբյեկտ ունի իր կարևորագույն գործառույթը՝ երկրի գլխավոր իրադարձությունների վերահսկման և կարգավորման հարցում: Ինչ վերաբերում է նախագահական ընտրություններին, ապա այստեղ նախնական վերջնական որոշումը պատկանում է Սահմանադրության պահապանների խորհրդին, որին վերապահված է հաստատել թեկնածուների վերջնական ցանկը, ըստ որի էլ, հետագայում տեղի է ունենում թեկնածուների պաշտոնական քարոզարշավը և ընտրական գործընթացը:

Սահմանադրության պահապանների 12 հոգանոց խորհուրդը օժտված է օրենսդիր և գործադիր մեծ իրավասություններով, կազմում է Իսլամական Հանրապետության սահմանադրության պահպանման անկյունաքարը: Համաձայն սահմանադրության 91-րդ հոդվածի՝ վերջինիս 12 անդամից 6-ը աստվածաբաններ են, իսկ մյուս 6-ը՝ իրավաբաններ[1]: Աստվածաբաններն ընտրվում են գերագույն առաջնորդի կողմից, իսկ իրավաբաններին ընտրում է մեջլիսն այն մարդկանցից, որոնց ներկայացրել է դատական համակարգի ղեկավարը: Նրանց պաշտոնավարման ժամկետը 6 տարի է, բայց յուրաքանչյուր 3 տարին մեկ առաջին գումարման խորհրդում յուրաքանչյուր խմբի անդամների կեսը վիճակահանությամբ փոխվում է՝ զիջելով իր տեղը նոր անդամներին[2]: Սա արվում է, որպիսի յուրաքանչյուր հաջորդ գումարման խորհրդում լինեն փորձառու մասնագետներ: Առանց որևէ արգելքի խորհրդի անդամները կարող են վերընտրվել: Սահմանադրության պահապանների խորհրդի գործունեության ուժը տարածվում է 3 ոլորտների վրա՝ օրենսդրական իրավասություն, սահմանադրության մեկնաբանում և ընտրությունների վերահսկում:

Հատկանշական է, որ նախագահական ընտրությունների թեկնածուների և փորձագետների խորհրդի դեպքում վերահսկողությունն այլ է: Ըստ Սահմանադրության՝ նախագահի թեկնածուներն ուսումնասիրվում են պահապանների խորհրդի կողմից, պարզելու համար, արդյոք նրանցից յուրաքանչյուրը համապատասխանո՞ւմ է սահմանադրության պահանջներին. լինի իրանցի, ԻԻՀ քաղաքացի, լինի քաղաքական ու կրոնական գործիչ, լինի ջանասեր, ունենա կազմակերպչական հմտություններ, ունենա մաքուր անցյալ և Իրանի պաշտոնական կրոնի նկատմամբ ունենա հավատ և վստահություն: Այս ամենից հետո միայն, պահապանների խորհրդի ուսումնասիրությունների արդյունքում նրանք կարող են դառնալ թեկնածու: Պահապանների խորհուրդը թեկնածունե-

րի որակավորման ուսումնասիրումը հետաքննում է ինքնուրույնաբար: Պահապանների խորհուրդը փորձագետների խորհրդի ընտրությունների վերահսկողությունն իրականացնում է մեջլիսի ընտրությունների վերահսկման կանոնագրքի համաձայն: Ընտրական կանոնագրքերում մեծ նշանակություն ունեն այն հոդվածները, որոնք վերաբերում են այն պայմաններին, որոնք պետք է կատարեն ընտրողները տվյալ պաշտոնում առաջադրվելու համար: Օգտվելով այս հոդվածներից՝ Պահապանների խորհուրդը յուրաքանչյուր ընտրության ժամանակ մերժել է մեծ թվով թեկնածուների: 4-րդ գումարման խորհրդարանի ընտրությունների ժամանակ 3150-ից մերժվել է 1110 թեկնածու, իսկ 6-րդ գումարման խորհրդարանի ընտրություններին 6856-ից՝ 567-ը: Խորհուրդը սովորաբար հրաժարվում է պարզաբանել հայցադիմումները մերժելու հիմքերը և նույնիսկ այդ թեկնածուներին չի տեղեկացնում իրենց մերժման հիմքերի մասին: 1999 թ. Նպատակահարմարության խորհուրդը հարմար գտավ, որ Պահապանների խորհուրդը բացատրի թեկնածուների մերժման պատճառները: Այնուամենայնիվ, գործնականում Պահապանների խորհուրդը հաճախ ձեռնպահ է մնացել բացատրություններ տալուց: Պահապանների խորհուրդն իրավասու է չեղյալ համարել տարբեր շրջաններում կայացած ընտրությունները, որոնք նրա կողմից համարվում են ոչ պատշաճ կայացած: Բացի այդ, նա կարող է չեղարկել որոշ քվեատուփերի բոլոր ձայները կամ դրանց մի մասը: Պահապանների խորհուրդը կարող է նաև դադարեցնել ընտրությունները որոշ քաղաքներում և նահանգներում պատրվակով, որ դրանք կարող են հանգեցնել անկարգությունների: Այս իրավունքն օգտագործվել է Պահապանների խորհրդի կողմից մինչ այժմ անցկացված խորհրդարանական բոլոր ընտրություններում:

Այսպիսով, հունիսի 10-ին Պահապանների խորհուրդը հայտարարեց 6 հիմնական թեկնածուների անունները, ովքեր ստացել էին վերջինիս հավանությունը: Այդ թեկնածուներն են՝ Մասուդ Փեզեշքիան, Մոստաֆա Ֆուրմոհամադի, Սայիդ Ջալիլի, Ալիռեզա Զաքանի, Ամիր Հոսեյն Ղազիզադե և Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆ[3]:

Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆը չափավոր պահպանողական է և Իրանի խորհրդարանի ներկայիս նախագահը: 2005-2017 թթ. եղել է Թեհրանի քաղաքապետը, նաև լայն կապեր ունի Իրանի անվտանգության համակարգի հետ: 1997-2000 թթ. եղել է Հեղափոխության պահապանների ռազմաօդային ուժերի հրամանատարը, 2000-2005 թթ.՝ ոստիկանապետը:

Նախագահական մրցապայքարի մասնակիցների թվում Ղալիբաֆը համարվում է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ամենամոտ համախոհը: Հայտնի է, որ Ղալիբաֆն ունի մտերիմ հարաբերություններ Խամենեի հետ: Այս կապերը մեծացնում են ընտրություններում հաղթելու նրա հնարավորությունները:

Սայիդ Ջալիլին Նպատակահարմարության խորհրդի անդամ է: Պահպանողականների շրջանում հանրաճանաչ գործիչ է, միջուկային ծրագրի նախկին բանակցողներից և ամուր կապեր ունի գերագույն առաջնորդի և Հեղափոխական գվարդիայի հետ ու ընկալվում է որպես իսլամական օրենքներին հավատարիմ պետական գործիչ[4]: 2007-2013 թթ. հոգևոր առաջնորդի կողմից նշանակվել է

Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար, եղել է Եվրոպայի և Ամերիկայի հարցերով փոխարտգործնախարար:

Նախկին՝ նախագահի պաշտոնի համար ընտրություններում՝ 2013 թ., Ջալիլին պարտվել էր Հասան Ռոհանիին: 2021 թ. նա իր տեղը զիջեց Ռաիսիին, ով պահպանողական գործընկեր էր: Եթե Ջալիլին նախագահ դառնա, ենթադրվում է, որ կշարունակի Ռաիսիի քաղաքականությունը՝ շնորհիվ երկու տղամարդկանց սերտ հարաբերությունների, և նախկին նախագահի որոշումների վրա իր ազդեցության:

Ընտրություններին ցածր մասնակցությունը կաշխատի Ջալիլիի օգտին, քանի որ դա հավանաբար կնշանակի, որ բարեփոխիչները որոշել են դուրս մնալ ընտրություններից՝ թողնելով պահպանողականներին՝ Ջալիլիի հիմնական ընտրազանգվածին, գերիշխել քվեախցերում:

Նախագահի հաջորդ թեկնածուն Մասուդ Փեզեշքիանն է՝ բարեփոխական թևի ներկայացուցիչ, ով ունի բժշկական կրթություն և երկար տարիներ եղել է Թավրիզի բժշկական համալսարանի ղեկավարը, այնուհետև, նախագահ Խաթամիի նախագահության երկրորդ ժամկետում՝ 2001-2005 թթ., զբաղեցրել է ԻԻՀ Առողջապահության, բժշկության և բժշկական կրթության նախարարի պաշտոնը: 2013 թ. առաջադրել է իր թեկնածությունը նախագահի պաշտոնի համար, սակայն Ներքին գործերի նախարարության կողմից թեկնածության հաստատումը մերժվել է: 10-րդ գումարման խորհրդարանի ընտրություններում Մ. Փեզեշքիանը կարողացել է Թավրիզի շրջանից հավաքել 261394 ձայն և գերազանցել այստեղ երբևէ այդ շրջանից ընտրված թեկնածուների քվեների ռեկորդը[5]:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Փեզեշքիանն Արևմտյան Ատրպատականի թյուրքախոս համայնքից է, և 2015 թ. Խորհրդարանում ելույթի ժամանակ ևս մեկ անգամ շեշտել է, որ ինքը շնորհակալ է աստծուց, որ իրեն թյուրքալեզու է ստեղծել, և որ, ըստ ԻԻՀ Սահմանադրության 15-րդ հոդվածի, Իրանի թուրքերը և այլ էթնիկ խմբեր պետք է կարողանան դպրոցներում գրել, խոսել և սովորել իրենց լեզուներով[6]:

Ռոհանիի կառավարության Արդարադատության նախարար Մոստաֆա Փուրմոհամադին նախագահական ընտրությունների որակավորված 6 թեկնածուներից մեկն է: 2005-2008 թթ. զբաղեցրել է ներքին գործերի նախարարի պաշտոնը: Իսլամական հեղափոխությունից հետո եղել է Խորասանի, Քերմանշահի, Հորմոզգանի և Խուզեսթանի շրջանների դատախազը: Սակայն որպես քաղաքական գործիչ՝ առավել հայտնի է դարձել Անվտանգության նախարարության արտաքին հետախուզության փոխնախագահի պաշտոնավարման տարիներին[7]:

Եվս մեկ բժիշկ թեկնածուներից է Ալի Ռեզա Զաքանին, ով Թեհրանի ներկայիս քաղաքապետն է: Զաքանին 2004-2016 թթ. եղել է Մեջլիսի պատգամավոր, Իսլամական խորհրդարանի 8-րդ շրջանի ընտրություններում եղել է «Ֆունդամենտալիստների միացյալ ճակատի» կենտրոնական խորհրդի անդամ, և նույն ձևաչափով երկրորդ անգամ անընդմեջ ընտրվել է Թեհրանի ներկայացուցիչ: 2008 թ. Նա հիմնել է ‹‹Իսլամական հեղափոխության հետախույզների միություն›› (جمعیت رپوای انقلاب اسلامی) կուսակցությունը, որի մանիֆեստում հստակ շեշտվում է իսլամական գաղափարների ամրապնդումն ու ձեռքբերումների պաշտպանությունը[8]:

Հատկանշական է, որ Զաքանին երկու անգամ առաջադրել է իր թեկնածությունը նախագահի պաշտոնի համար և երկու անգամ էլ մերժվել է Սահմանադրության պահապանների խորհրդի կողմից: 2021 թ. որպես Էբրահիմ Ռաիսիին քննարկող թեկնածու նա մտավ պայքարի մեջ, սակայն վերջին օրերին նահանջեց հօգուտ վերջինիս:

Այս նախագահական ընտրությունների մյուս թեկնածուն Ամիր Հոսեյն Ղազիզադեն է, ով վիրաբույժ է: 2008-2021 թթ. եղել է Խորհրդարանի պատգամավոր: Մինչ պատգամավոր դառնալը եղել է Սեմնանի բժշկական գիտությունների համալսարանի նախագահը: 2014-2015 թթ. եղել է Կայունության ճակատի խոսնակը: 2022 թ. նշանակվել է Նահատակների և Վետերանների գործերով հիմնադրամի տնօրեն: Ռաիսիի կառավարության փոխնախագահն էր[9]:

Այսպիսով, Իրանի վերջին 8 նախագահներից 5-ը եղել են հոգևորականներ: Այաթոլլահ Խամենեին, Հաշեմի Ռաֆսանջանին, Սեյեդ Մոհամմադ Խաթամին, Հասան Ռոհանին և Սեյեդ Էբրահիմ Ռաիսին հոգևորականներ էին, ովքեր կարողացան հենվել նախագահական աթոռի վրա: Իսկ թե ով կլինի ԻԻՀ ինն երրորդ նախագահը, դեռևս պարզ չէ: Ըստ նախնական տվյալների՝ Պահապանների խորհրդի հավանությանն արժանացած միակ թեկնածուն Ահմադինեժադի կառավարության ներքին գործերի նախարար և Ռոհանիի կառավարության արդարադատության նախարար Մոստաֆա Փուրմոհամադին է: Սակայն ընտրությունների ընթացքը և հետագա զարգացումները կհաստատեն իրանցի ժողովրդի ընտրությունը:

Նախագահական ընտրությունները կարող են կարևոր պատկերացումներ տալ Իրանի քաղաքական դաշտի, հասարակական կարծիքի և ապագա հնարավոր քաղաքականության վերաբերյալ: Ընտրությունների արդյունքը, ընտրողների մասնակցությունը և տարբեր թեկնածուների աջակցության մակարդակը կհստակեցնեն, թե որ ուղղությամբ կընթանա երկիրը: ■

Հղումներ

1 قانون اساسی جمهوری اسلامی ایران اصل۹۱
2 قانون اساسی اصل۹۲
3 https://t.me/reisi_ir/62124
4 https://www.aljazeera.com/news/2024/6/7/how-much-will-a-presidential-election-reveal-about-irans-future
5 https://www.tabnak.ir/fa/tags/5287/1/%D9%85%D8%B3%D8%B9%D9%88%D8%AF-%D9%BE%D8%B2%D8%B4%DA%A9%DB%8C%D8%A7%D9%86
6 Տես՝ նույն տեղում:
7 https://www.khabaronline.ir/news/1917906/%D9%85%D8%B5%D8%B7%D9%81%DB%8C-%D9%BE%D9%88%D8%B1%D9%85%D8%AD%D9%85%D8%AF%DB%8C-%DA%A9%DB%8C%D8%B3%D8%AA-%D9%88-%DA%86%D9%86%D8%AF%D8%B3%D8%A7%D9%84%D9%87-%D8%A7%D8%B2-%D8%AA%D8%AC%D8%B1%D8%A8%D9%87-%D9%88%D8%B2%D8%A7%D8%B1%D8%AA-%D8%AF%D8%B1-%D8%AF%D9%88%D9%84%D8%AA-%D9%87%D8%A7%DB%8C-%D8%A7%D8%AD%D9%85%D8%AF%DB%8C
8 https://fararu.com/fa/tags/8983/1/%D8%B9%D9%84%DB%8C%D8%B1%D8%B6%D8%A7-%D8%B2%D8%A7%DA%A9%D8%A7%D9%86%DB%8C
9 https://www.mashreghnews.ir/news/1611276/%D8%A7%D9%85%D-B%8C%D8%B1%D8%AD%D8%B3%DB%8C%D9%86-%D9%82%D8%A7%D8%B6%DB%8C-%D8%B2%D8%A7%D8%AF%D9%87-%D9%87%D8%A7%D8%B4%D9%85%DB%8C-%DA%A9%DB%8C%D8%B3%D8%AA-%D8%B3%D9%88%D8%A7%D8%A8%D9%82-%D9%88-%D8%A8%D8%B1%D9%86%D8%A7%D9%85%D9%87-%D9%87%D8%A7

Ակսել Բակունց. կյանքը և ստեղծագործությունը Ծննդյան 125-ամյակի առթիվ

Դավիթ Գասպարյան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ

1899, 1-ը հունիսի (նոր տոմարով 13-ը հունիսի) - Գորիսում ծնվեց Ալեքսանդր Ստեփանի Թևոսյանը: Հիմք՝ «Զափաբերական մատյանը»:

Հայրը՝ Ստեփան Թևոսյան (1869-1939), մայրը՝ Բոխչագյուլ Խուրշուդյան (1878-1957):

Ունեցել են բազմաթիվ տղաներ և աղջիկներ:

Տարբեր աղբյուրներում նշվում են իրար չհամապատասխանող թվեր՝ 14, 12, 11, 10, որովհետև երեխաներից մի քանիսը վաղաժամ մահացել են: Ըստ Բակունցի տուն-թանգարանում ճշտված տվյալների՝ երեխաների թիվը եղել է 10-ը, որոնցից երկուսը մահացել են վաղաժամ՝ Վարդանուշը և Աստղիկը մյուսները. Աննա (1946-ին Երևանում խեղդվել է ջրհեղեղի ժամանակ, «Մթնաձորի «չարք»-ը պատմվածքի հերոսուհու՝ Ասյայի նախակերպարը), Ալեքսանդր, Փառանձեմ, Արշալույս (Անթառամ, վաղաժամ մահացել է), Վահան, Սերգեյ (Սերյոժա, վաղաժամ մահացել է), Արտավազդ (Վլադիմիր), Գրիգոր (Վարուժան):

Եղբայրներից ավագն Ալեքսանդրն էր: Բակունց ազգանունը ծագում է տոհմական Բեգունց ձևից: Նախապապի անունը եղել է Բյագի: Հայրը, Բաքվում բախտը փորձելուց հետո, վերադարձել էր Գորիս. նախրապան էր ու հանդապահ: Մայրը լվացք էր անում ունևորների դռանը:

1905-1910 – Ալեքսանդրը ուսանել է Գորիսի ծխական երկսեռ հնգամյա դպրոցում: Եղել է առաջադեմ աշակերտ, 13. 06. 2019-ին դպրոցի շենքի մոտ փակցվեց հուշատախտակ:

1910, 10 օգոստոս - Գորիսցիները 152 ստորագրությամբ «Խոնարհ խնդիր» են հղում Ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս Բ-ին՝ Բակունցին ընդունելու որպես Գեւորգյան ճեմարանի գիշերօթիկ սան:

1910-1917 - Ուսանում է Էջմիածնի Գեւորգյան ճեմարանում: Փաստաթղթերում նրա ազգանունը նշված է Բեկյան: Ընդունվել է դասարանական բաժնի 3-րդ դասարանը:

1911 – ից մասնակցում է ճեմարանի երգչախմբի և գրական խմբակի պարապմունքներին:

1912 - Ուսմանը զուգընթաց, արձակուրդի ամիսներին Գորիսում աշխատել է գրադարանում եւ մասնավոր դասեր տվել:

1913, հոկտեմբեր - «Աղբյուր» մանկական հանդեսում Աշակերտ ստորագրությամբ տպագրվում է «Հիմար մարդը» հեքիաթը: Սրանով ազդարարվում է Ա. Բակունցի գրական գործունեության սկիզբը:

1915, 26 հուլիս - Շուշիի «Փայլակ» թերթում Թեզ գնացող ստորագրությամբ տպագրվում է Բակունցի «Մատվեյ Մատվեիչը...» ֆելիետոնը Գորիսի քաղաքագլխի եւ գավառական վարչության դեմ: Քաղաքագլուխ Մատթեոս Տեր-Գրիգորյանի կարգադրությամբ Բակունցը բանտարկվում է:

1915, 6 օգոստոս - Կալանավորվում է Գորիսի բանտում (բանտարկության ժամկետը նա հաշվում է 34 օր, որը ստույգ չէ), ժամկետն ավելի կարճ է եղել:

1915, 28 օգոստոս - Դիմում է Հայկական կենտրոնական կոմիտեին՝ հայ գաղթականներին օգնելու և հայրենիքին որևէ կերպ ծառայելու պատրաստակամությամբ:

1915, 6 սեպտեմբեր - Շուշիի «Փայլակ» թերթում Թեզ գնացող ստորագրությամբ, «Դեսից դենից» խորագրի ներքո, տպագրվում են Ա. Բակունցի «Հայի «ոլան» և «Երեխաները» մանրապատումները:

Նույն թերթում տպագրվում է նաև «Դպրոցի փակում» թղթակցությունը՝ Քարաշեն գյուղի ծխական դպրոցի փակման մտահոգությամբ (թվագրված է 30. VIII): Չեն ընդգրկվել գրողի որևէ հավաքածուի մեջ:

1915 - Ընդունվում է Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության շարքերը: Կուսակցության եռանդուն գործիչ է եղել մինչև 1919 թ.: 1936-1937 թթ. հարցաքննությունների ժամանակ հրաժարվել է կուսակցության անդամ լինելուց և հայտարարել՝ «...մինչև 1917 թ. նոյեմբեր ես եղել եմ հայ աշակերտական միության անդամ» (2.07.1937 թվականի «Դիմում»-ից):

1915, սեպտեմբեր – հոկտեմբեր – Ռուսաց լեզու է դասավանդում Տաթևի վանքապատկան դպրոցում: Դասավանդում է նաև Գորիսի կենտրոնական վարժարանում:

1915, նոյեմբեր –1916, 28 մայիս - Ուսուցչություն է անում Սիսիանի շրջանի Լոր գյուղում: Մեծ եղեռնի ու գաղթի պատճառով այդ ուսումնական տարվա ընթացքում ճեմարանը փակ էր:

1916, ամառ - Գորիսում բեմադրվում է նորվեգացի թատերագիր Բյոռնստեռնե Բյոռնսոնի (1832-1910) «Նորապսակներ» (1865) թատերգությունը: Բակունցը կատարում է նորապսակ Ակսելի դերը: Դրանից հետո Ակսել անունը աստիճանաբար փոխարինում է Ալեքսանդրին և դառնում է գրական ու քաղաքացիական անուն:

Տարբեր տարիների օգտագործել է հետեւյալ ստորագրությունները՝ Ա., Ա. Բ., Ա. Բակունց, Ա. Ստեփանյան, Ագրոն, Ալ. Բակունց, Ալ. Ստեփանյան, Ակսել, Ակսել Բակունց, Աղ. Բակունց, Աղբակ, Աշակերտ, Անդր. Ստեփանյան, Արտ. Ստեփանյան, Բ. Բակունց, Թեզ գնացող, Ստեփանյան:

1917, 26 մարտ - «Խնդիր» է հղում Գևորգյան ճեմարանի մանկավարժական խորհրդին՝ դասարանական բաժինն ավարտելուց հետո, ուսումը շարունակելու լսարանական բաժնում: Ապրիլի 22-ին «Խնդիրը» հարգվում է, բայց ազգային և քաղաքական իրադարձությունների բերումով այլևս ի վիճակի չի լինում ուսումը շարունակելու Էջմիածնում: 1918 թ. ապրիլի 20-ին լրացվում է Բակունցի վկայականը, ըստ որի՝ նա ճեմարանի դասարանական բաժինն ավարտել է «յոյժ գովելի վարուք»:

1917, ապրիլի վերջ - Բաքվում մասնակցում է ՀՅԴ կենտրոնական կոմիտեի շրջանային ժողովին, ղեկավարել է Սահմանադիր ժողովի ընտրությունները Ղափանի շրջանում:

1917- Աշխատակցում է «Հորիզոն»-ին, «Աշխատավոր»-ին:

1917, 26 դեկտեմբեր - Որպես կամավոր մեկնել է Կարին (Էրզրում)՝ միանալու գործող բանակին:

1918, հունվար - Որպես շարքային զինվոր Կարինում սովորել է «Учебная команда»-ում: Մասնակցել է մի շարք մարտերի. «... զինվոր 1917-1918 թթ. Տուրկեստանսկի գնդում (Էրզրում), մասնակցել եմ Աշկալայի, Իլլիջայի, Արդահանի եւ Սարդարապատի կռիվներին 1918 թ.» («Երկեր», հ.4, էջ 386):

1918, 21-29 մայիս – Ինչպես ինքն է նշում՝ մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին:

1918, հոկտեմբեր - «Մինչեւ 1918 թ. հոկտեմբերը եղել եմ բանակի շարքերում <...> եւ ապա հայ-տաճկական առաջին հաշտությունից հետո (1918 թ.) ենթարկվել զորացրման եւ փոխադրվել Երեւան» («Իմ համառոտ կենսագիրը»): Տարբեր առիթներով իր զորացրման ժամկետը Բակունցը նշել է 1918 թ. հունիս, օգոստոս, հոկտեմբեր ամիսները:

1918, հոկտեմբեր-նոյեմբեր - «Ժողովուրդ» թերթում լույս են տեսնում «Աղոթք», «Աշոտը», «Անտառում» քնարական պատկերները: Ձևավորվում է գրողի ոճը՝ փաստական հիմք և խոր քնարականություն:

1918, հոկտեմբեր-դեկտեմբեր - «Լույս» տպարանի սրբագրիչ:

1918, դեկտեմբեր - 1919 մայիս - Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրող:

Ակսել Բակունց

1919, սեպտեմբեր - 1920, մայիս - «Հայաստանի աշխատավոր» թերթի խմբագրության աշխատակից, լրահավաք, որի էջերում Ակսել, Ա. Բ., Բ. ստորագրություններով հանդես է գալիս հոդվածներով: (Տե՛ս հետևյալ համարները՝ 1919, թիվ 45, 20 ապրիլ, թիվ 46, 25 ապրիլ, թիվ 79, 24 հունիս, թիվ 86, 26 հունիս, թիվ 97, 17 հուլիս, թիվ 100, 19 հուլիս, թիվ 104, 24 հուլիս, թիվ 107, 31 հուլիս, թիվ 137, 6 սեպտեմբեր, թիվ 141, 13 սեպտեմբեր):

1919, 28 նոյեմբեր – Հոդվածով հանդես է գալիս Երևանի «Ցառաջ» թերթում (թիվ 262):

1919-1920 - Ուսանել է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի գյուղատնտեսական բաժանմունքում, միաժամանակ, որպես դասատու, աշխատել Մոսկվայի կոմիտեի որբերի գիմնազիայում, որը գտնվում էր Թիֆլիսի Օրթաճալա թաղամասում (հիմա՝ համալսարան, հիմնադրվել է 1816 թ):

1920-1923 - Ուսանել է Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտում (համալսարան), մշակութային եւ կրթական աշխատանք տարել տեղի հայության շրջանում: Հայրենական պատերազմի ժամանակ բուհի արխիվը կորել է: Բակունցի ծննդյան 120-ամյակի կապակցությամբ՝ շրջանավարտի օրը՝ 25. 05. 2019-ին, տեղադրվում է հուշատախտակ. հայերեն՝ Ակսել Բակունց: Նկարը՝ քարի վրա: Ուկրաիներեն՝ Ակսել Բակունց: Հայ գրող: Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտի շրջանավարտ:

1922 – Դոնբասի Պերվոմայսկ բնակավայրում տեղի է ունենում խոտորջուրցիների հավաք. Ակսել Բակունցը և Արտաշես Գևորգյանը համոզում են հողատարածք վերցնել Հայաստանում և վերաբնակվել հայրենիքում: Գևորգյանը բանակցում է Անդրերկրկոմի ղեկավարության (Մյասնիկյանի) հետ: 1924-ին հարցը դրական լուծում է ստանում:

1922, 21 հուլիս – Արտաշես Գևորգյանը, Պետրոս Տեր-Պողոսյանը, Ստեփան Ծաղիկյանը Թիֆլի-

սում ահաբեկությամբ սպանում են հայոց ցեղասպանության կազմակերպիչներից Ջեմալ փաշային: Արտաշես Գևորգյանին և Ակսել Բակունցին արյունոտ ձեռքը գնդակահարում է 1937 թվականի հունիսի 8-ին:

1923, 23 մարտ - Մոսկվայում վախճանվում է Հովհաննես Թումանյանը: Նրա դին գնացքով տեղափոխում են Թիֆլիս: Ապրիլի սկզբին Բակունցը Խարկովի հայության հետ կայարանում դիմավորում է գնացքը, կազմակերպում սգո հանրահավաք և հուզիչ ելույթ է ունենում:

1923, 3 հունիս - Ուկրաինական ԽՍՀ այն ժամանակվա մայրաքաղաք Խարկովում ստեղծվում է Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) մասնաճյուղ: Նախագահ պրոֆ. Սուրովիչ, քարտուղար՝ Ա. Բակունց:

1923, 13 հուլիս - Ավարտում է Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտը և վերադառնում Հայաստան: Հուլիսի 23-ին արդեն Գորիսում էր՝ հարազատների և հայրենակիցների շրջապատում:

1923, հուլիս-օգոստոս - Գորիսի ուսուցչական դասընթացներում դասավանդել է երկրագործական առարկաներ:

1923, 26 սեպտեմբեր- Դիմում է ներկայացնում ՀԽՍՀ հողժողկոմ Արամայիս Երզնկյանին՝ աշխատանքի անցնելու պահանջով: Դիմումի մեջ կան կենսագրական մանրամասներ. «...իմ պատրաստակամությունն եմ հայտնում ծառայելու հողժողկոմատին հանձնված խորհրդային տնտեսություններում: Պաշտոնավարել եմ Խարկովում контрольно-семен- կայանում, աշխատել եմ Խարկովի փորձնական կայանում և ինստիտուտի կողմից հանձնարարություն ունեմ ուսումնասիրելու բամբակագործության պայմանները մեզ մոտ: Սույն ամառվա ընթացքում դասախոսել եմ Զանգ«եզուրի» գավառի ուսուցչական կուրսերում ընդհանուր երկրագործություն» («Երկեր», հ.4, էջ 381):

1923, 8 հոկտեմբեր - 1924, 1 հոկտեմբեր - Երևանում աշխատանքի է անցնում ՀԽՍՀ հողագործության ժողովրդական կոմիսարիատում՝ որպես սերմնաբուծարանի կառավարչի օգնական:

1923, 14-19 հոկտեմբեր - Երևանում մասնակցում է ՀՕԿ-ի 3-րդ համագումարին: Ուկրաինայի մասնաճյուղի լիազորմամբ հանդես է գալիս հաշվետու զեկույցով: Զեկուցումից. «Վերջացնելով խոսքս՝ Ուկրաինայի ՀՕԿ-ի կողմից ես այս համագումարին պարտք եմ համարում հայտնել հետեւյալը. դուք ջրանցքներ եք շինում Հայաստանում, վերակենդանացնելու համար նրա խոպան դաշտերը: Թո՛ղ այս համագումարն էլ լինի մի մեծ ջրանցք, որով մեր գաղութների էներգիան գա, թափվի այս երկիրը» («Երկեր» հ.4, էջ 385): Համագումարում ընտրվում Է ՀՕԿ-ի վարչության անդամ:

1923, 20-23 նոյեմբեր - Երևանում մասնակցում է բոլշևիկյան իշխանությունների թելադրած Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարին: Այդ համագումարի ղեկավար կազմակերպիչն էր՝ նախագահը: Նոյեմբերի 20-ին հանդես է գալիս համագումարի բացման խոսքով, 21-ին՝ զեկուցմամբ: Խմբագրել և հետևել է «Նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան համագումարի արձանագրությունները» (Երեւան, 1923, 142 էջ) գրքի տպագրությանը: Համագումարի կապակցությամբ նոյեմբերի 20-ին լույս է տեսել Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը նախապատրաստող բյուրոյի «Լրաբեր» մեկօրյա թերթը: Թերթի հրատարակչական պարտականությունները կատարել է Բակունցը: Թերթում զետեղված է նրա «Ովքեր են հեռանում դաշնակցությունից» հոդվածը և «Բոլոր նախկին դաշնակցականներին» կոչը, որը, իրենից բացի, ստորագրել էին ևս 15 հոգի: Համագումարի նյութերն արտացոլվում են հանրապետական մամուլում:

1924, 1 մարտ - Երևանի պետական համալսարանի երկրագործության ամբիոնի ընթերակա:

1924, 29 օգոստոս- Լրացնում է ՀամԿ(բ)Կ անդամության թեկնածու ընդունվելու հարցաթերթիկ: Սեպտեմբերի 16-ին հողժողկոմատի կոմբջիջը մերժում է Բակունցի դիմումը: Հոկտեմբերի 29-ին Երևանի կոմիտեն «Ընդհանուր հիմունքներով» ընդունում է ՀամԿ(բ)Կ շարքերը՝ որպես անդամության թեկնածու: ՀամԿ(բ)Կ անդամ է ընդունվում 1930 թ. փետրվարի 23-ին: Հեռացվում է 1936 թ. օգոստոսի 9-ին:

1924, 14 հոկտեմբեր - Երևանում ամուսնանում է նորնախիջևանցի Վարվարա (Վարյա) Հակոբի Չիվիջյանի հետ, որին ճանաչել էր Խարկովում:

1924, հոկտեմբեր - 1925, հուլիս – ՀԿ(բ)Կ Զանգեզուրի գավառի գյուղատնտես: 1924 թ. հոկտեմբերի 18-ին հողժողկոմատի գյուղվարչության պետին հղում է առաջին գրությունը. «Զանգեզուր իմ, արդեն ընդունել եմ եւ ծանոթացել գործերին», իսկ հոկտեմբերի 23-ին տեղեկացնում. «Զանգեզուր հասել եմ հոկտեմբերի 14-ին եւ 15-ից անցել եմ գործի...»:

1924-1925 - Լույս են տեսնում «Մարտակոչ»-ում՝ «Գավառական նամականի», «Խորհրդային Հայաստան»-ում՝ «Մեր գյուղերում» ակնարկաշարերը:

1925, 2-6 մարտ- Մասնակցել է ՀԽՍՀ գյուղատնտեսության աշխատողների 2-րդ համագումարին: Մարտի 3-ին հանդես է եկել զեկուցումով: Համագումարի նյութերի սղագրության ժամանակ, ինչ-որ մեկին նկատի ունենալով, արել է այսպիսի գրառում. «Անարյուն դեմք, գանգուր միրուք: Ձայնը՝ մետաքս ու համեղ, անքաշ կաթի պես: Փափուկ, ինչպես տանտիկին» ««Երկեր», հ. 4, էջ 620»:

1925, 4 հուլիս- Զանգեզուրի գավառային գործադիր կոմիտեի որոշմամբ նշանակվում է հողբաժնի վարիչի տեղակալ, այնուհետև՝ վարիչ:

1925, 20 օգոստոս - Ծնվում է միակ որդին Սևադան: Հետագայում բժիշկ-բնախոս: Ունեցել է երկու դուստր:

1925, 27 սեպտեմբեր – ՀԿ(բ)Կ Զանգեզուրի գավկոմի ագիտբաժնի նիստում առաջարկել է նշել բերքի տոն: Նշանակվել է մրցանակային հանձնաժողովի նախագահ:

1925, 1 նոյեմբեր - «Մարտակոչ»-ում տպագրած «Գրական հոսանքների բնութագրի շուրջը Հայաստանում» հոդվածի մեջ Արտաշես Կարինյանն անդրադառնում է նաև Բակունցի ստեղծագործությանը:

1926, մարտ - Երևանում մասնակցում է համահայաստանյան գյուղատնտեսական համագումարին, հանդես գալիս զեկուցումով:

1926, մարտ- Մշտական բնակություն է հաստատում Երևանում: Աշխատում է հողժողկոմատում՝ որպես սերմնաբուծարանի վարչության պետի տեղակալ, հիմնադրում հողժողկոմատի «Գյուղացու գրադարան» մատենաշարը և լույս ընծայում իր հեղինակած «Գալուստի վիկը», «Կարտոֆիլի մշակությունը», «Խոտորջուրի կոմունան» գրքույկները:

1926, մարտից հետո - Մտերմանում է Ե. Չարենցի, Գ. Մահարու, Մ. Արմենի հետ, որոնք Գ. Սարյանի, Ս. Տարոնցու, Վ. Նորենցի և այլոց հետ մեկտեղ հիմնել էին «Նոյեմբեր» գրական խմբակցությունը: Մտերմությունը վերածվում է գրական բարեկամության:

1926, 6 հունիս - «Խորհրդային Հայաստան»-ում (թիվ 132) տպագրվում է «Միրհավ» պատմվածքը:

1926, 10 հունիս - «Խորհրդային Հայաստան» օրաթերթը (թիվ 135) հայտարարություն է տպագրում, ըստ որի՝ Ակսել Բակունցը դարձել է «Նոյեմբեր» գրական խմբակցության անդամ:

1926, 5 սեպտեմբեր - Երևանում, ժամը 24-ի սահմաններում Նագան տեսակի ատրճանակի երկու կրակոցով (մեկը վրիպել է) Չարենցը վերք է պատճառում 16-ամյա Մարիանա Այվազյանին (բորսայի նախագահ Սարգիս Այվազյանի դուստրը, երգահան Արտեմի Այվազյանի քույրը), ում սիրահարված էր, բայց մերժված: Չարենցը ձերբակալվում է, նրա հանդեպ նույն օրը հարուցվում է քրեական գործ:

Ներկայացնում ենք Բակունցի հետ կապված դրվագը և նրա երկու ելույթները, որոնք զետեղված չեն նրա երկերում:

Կրակոցից առաջ Չարենցը պատահաբար տեսել էր Բակունցին և կանչել: Կրակոցից հետո Բակունցը փորձել է Այվազյանի ձեռքից խլել ատրճանակը, որպեսզի չկրակի Չարենցի վրա:

Սեպտեմբերի 6-ին՝ որպես վկա, հարցաքննվել է Ակսել Բակունցը. «Սրանից մոտ երկու շաբաթ առաջ Եղիշե Չարենցը ինձ ասել է, որ ինքը սիրահարված է մի ինչ-որ աղջկա վրա: Ես ենթադրում եմ, որ նա այդ աղջկա վրա սիրահարված պիտի լիներ մոտ մի ամիս, որովհետև մոտ մի ամիս է, որ նա անընդհատ հարբում է: Հարբած ժամանակ նա միշտ ասում էր, որ իրեն պիտի խփի, զանազան հայհոյանքներ էր տալիս, դժգոհում էր շրջապատից, Երևանից: Երեկոյան ժամը 12-ին, երբ ես դուրս եկա Բանկոոպի ճաշարանից, քաղ.[աքային] այգում հանդիպեցի Չարենցին: Մինչ այդ երեք անգամ գնացել էի նրա տուն, սակայն նա տանը չէր: Նա անմիջապես ամուր բռնեց ձեռքս, «Ակսե՛լ, Ակսե՛լ, արի՛» ասելով՝ ատրճանակից երկու անգամ կրակեց: Կրակոցի ձայնին մի քաղաքացի, հետագայում իմացա՝ Այվազյանը, վրա հասավ և բռնելով Չարենցի բկից, գցեց գետին. ենթադրում եմ, որ

Ակսել Բակունցը կնոջ և որդու հետ

նա ցանկանում էր ատրճանակը խլել Չարենցից: Չարենցը ինձ գոռաց, թե՝ բռնիր նրան. ես արդեն մեջ էի ընկել և բաժանում էի: Այդ մոմենտին եկան միլիցիաները և բաժանեցին: Քաղ.[աքացի] Այվազյանը ինձ ասաց, որ ես վկա լինեմ: Ես գիտեի, որ Չարենցը սիրահարված էր Այվազյանի աղջկա վրա և այն ժամանակ, երբ կրակեց, ես տեսնելով այդ քաղաքացուն, ենթադրեցի, որ Այվազյանի աղջկա վրա կրակեց: Չգիտեմ Չարենցը այդ աղջկան նամակ գրե՞լ է թե ոչ»:

1926 թ. նոյեմբերի 9-ին գործը քննում է Գլխավոր դատարանը: Առավոտյան ժամը 10-ին սկսված դռնբաց դատական նիստում ելույթ է ունենում նաև Ակսել Բակունցը. «Երբեմն Չարենցը հարբած վիճակում խոսում էր զանազան կանանց մասին, կազմում էր նրանց մասին կարծիքներ: Ես գիտեի, որ նա մի աղջկա սիրում է, բայց թե ում, չէր ասում: Լուրջ ժամանակ նա գրական-հասարակական հարցերի շուրջ խոսակցություն ունենում էր, սակայն ոչ սիրո, կանանց և այլ նման հարցերի: Դեպքի հանգամանքները սրանք են: Քաղաքային այգու ծառուղիում մի 5 քայլի վրա հանդիպեցի Չարենցին ու, նրան տեսնել ցանկանալով, հարցրի՝ ո՞ւր է գնում: Նա ինձ ձայնեց՝ «Ակսե՛լ, Ակսե՛լ, արի՛ բան եմ ասում»,- որից անմիջապես հետո լսեցի ատրճանակի երկու կրակոց: Նա չի ասել, թե՝ «ատրճանակը վերցրու, թե չէ՝ նա կխլի ու ինձ կսպանի»: Քննիչի հարցումների նկատմամբ Չարենցը իրեն պահում էր անտարբեր: Այդ պահին ես կարծում եմ, որ նա պետք է հարբած լիներ: Ճիշտ է, նա ինձ ասել է, որ «կատարվածի մասին հայտնեք Աշոտ Հովհաննիսյանին»: Չարենցի հետ ծանոթ եմ ս./թ. մարտ ամսից»:

Նա երբեմն հայտարարում էր, որ ինքը սիրահարված է ինչ-որ արձանի վրա և այդ միջոցին, եթե մեկն ու մեկը ճգներ ապացուցել, որ նման սեր գոյություն չունի, նա նրան կանվաներ կոպեկանոց մարդ և այլն: Նա շատ հաճախ արտասանում էր Եսենինի

գրվածքներից՝ հիշելով նրան: Լիներ դա փողոցում, թե տանը, այլևայլ պայմաններում: Եթե այդ աղջիկը չլիներ անգամ, նա պետք է Եսենինին հիշեր: Կոնկրետ ես չգիտեի, թե նա որ աղջկա մասին էր խոսում: Աղջկա ով լինելը չգիտեի: Միլբաժնում – ներսում, Չարենցին քննողը թե ով էր, չգիտեմ, բայց մեկը այնտեղ հարց էր տալիս նրան, որին պատասխանում էր Եսենինի բանաստեղծություններով: Ես այդ պահին միջանցքում էի, որտեղ և լսելի էր այդ»:

1926, 10 սեպտեմբեր - նոյեմբեր - Որպես քաղվարչության պետի տեղակալ ներգրավվում է Զանգեզուրի և Քուրդիստանի «Ադրբեջանական ԽՍՀ Լաչինի շրջան» սահմանները ճշտող հանձնաժողովի կազմում: Այդ կապակցությամբ պահպանվել են համապատասխան գրություններ (տես՝ «Երկեր», հ. 4, էջ 480-484):

1926 – Հարություն Սուրխաթյանը իր կազմած «Հայ գրականություն» (Արեւելահայ 19-րդ դարի եւ 20-րդ դարի առաջին քառորդ, արձակ եւ չափածո նմուշներ, հ. 2) գրքում զետեղվում է «Տրախտորի մաշին» պատմվածքը:

1927, 1-4 հունվար - «Խորհրդային Հայաստան»-ում (թիվ 1-2) շարունակաբար տպագրվում է «Ալպիական մանուշակ» պատմվածքը, որը 1933 թ. վերջին խմբագրությամբ զետեղվել է «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուում և նվիրված է հունվարի 1-ի գիշերը վախճանված Չարենցի կնոջ՝ «Արփենիկի հիշատակին»: Պահպանվել է Մորուս Հասրաթյանի վկայությունը. ««Ալպիական մանուշակը», ի դեպ, այս անվանման երկը նվիրված էր մի աղջկա, բայց Չարենցը թախանձագին խնդրանքով ուղղակի պահանջեց, որ Ակսելը այն նվիրի իր վաղամեռիկ կնոջը՝ Արփիկին» («Չարենցի հետ: Հուշեր», 1997, էջ 87):

1927, 1-2 փետրվար - «Խորհրդային Հայաստան»-ում (թիվ 24-25) շարունակաբար տպագրվում է «Խոնարհ աղջիկը» պատմվածքը:

1927, 29 մարտ – Արմավիրում «Սիրելի Ակսելին» ուղերձով Չարենցը գրում է «Այդ գունատ սուբյեկտը» բանաստեղծությունը (տե՛ս «Գիրք մնացորդաց», 2017, էջ 137-138): Զգուշացնում էր՝ իրենց հետապնդող սև ուժերից:

1927- Պետհրատը լույս է ընծայում «Հովնաթան Մարչ» վիպակը:

1927 - Պետհրատը լույս է ընծայում «Մթնաձոր» պատմվածքների ժողովածուն (184 էջ, 18 պատմվածք): Այդ գրքով նոր էջ է բացվում հայ արձակի պատմության մեջ: Գրքի կապակցությամբ Չարենցը գրում է «Ակսելին՝ «Մթնաձորը» կարդալուց հետո» բանաստեղծությունը:

1927-1928 - Աշխատակցում է գյուղատնտեսական մամուլին՝ «Կարմիր ռաշպար» «Գորիս», «Նոր ակոս», «Գյուղատնտեսական կյանք», «Կոլխոզնիկ», «Սոցիալիստական գյուղատնտեսություն»: Վարում է «Մաճկալ» օրաթերթի գյուղատնտեսական բաժինը:

1928, մարտի սկիզբ - Դիմում է ՀԿ(բ)Կ Կենտկոմ՝ ազատվելու հողժողկոմատում զբաղեցրած պաշտոնից և նվիրվելու «բացառապես» գրական աշխատանքի:

Ակսել Բակունցի տուն-թանգարանը

1928, 11 հոկտեմբեր - Բաքվում այցելում է «Կոմունիստ» հայկական թերթի խմբագրություն, որի հոկտեմբերի 14-ի թիվ 240-ում տպագրում է նրա «Գրական կյանքը Երևանում» զրույցի շարադրանքը:

1928- «Նորք» հանդեսում (գիրք 1) տպագրվում է Խորեն Սարգսյանի «Ակսել Բակունց» ծանրակշիռ հոդվածը:

1928 - Արժանանում է «Տիգրան Կամսարական» գրական մրցանակի (Փարիզ): Այդ կապակցությամբ Լևոն Բաշալյանը հանդես է գալիս «Տիգրան Կամսարականի մրցանակը. Ստ. Զորյան եւ Ակսել Բակունց» հոդվածով («Ապագա», 1928, Փարիզ, թիվ 45, 15 սեպտեմբեր):

1928 - «Ծատուն աղան» և «Տրախտորի մաշին» պատմվածքները Չարենցը զետեղում է իր կազմած «Գրականության դասընթացի» մեջ (ուսման 6-րդ տարի):

1928 - Մասնակցում է Երևանի անասնաբուծական - անասնաբուժական ինստիտուտի հիմնադրման աշխատանքներին և մի կարճ շրջան պաշտոնավարում է այնտեղ:

1928 - Գևորգյան եղբայրների հետ Բակունցն այցելում է Ապարանի Ղարանլուխ ծայրահեղ թշվառ գյուղը: Գրում է ակնարկ «Խորհրդային Հայաստան» թերթի համար: Տպագրությունը կասեցվում է և քննարկվում Կենտկոմում: Ակնարկը հայտնաբերված չէ:

1929, հունվար - «Նոր ուղի» ամսագրում՝ թիվ 1, 2-3, 4, 5 տպագրվում են հատվածներ «Կարմրաքար» վեպից:

1929, 16 հոկտեմբեր - Չարենցը գրում է «Թուղթ Ակսել Բակունցին, գրված Լենինգրադից» ծրագրային բանաստեղծությունը:

1929 - ԽՍՀՄ ժողովուրդների կենտրոնական հրատարակչությունը լույս է ընծայում «Սպիտակ ձին» պատմվածքների ժողովածուն (Մոսկվա, 72 էջ):

1929 - Ա. Բաբայանի ռուսերեն թարգմանությամբ լույս է տեսնում «Մթնաձոր» ժողովածուն («Темное ущелье», Մոսկվա-Լենինգրադ, 208 էջ):

1929, 28 նոյեմբեր - «Խորհրդային Հայաստան»-ում լույս է տեսնում Բակունցի «Միք. Նալբանդյանը որպես պամֆլետիստ» հոդվածը:

1929 - Հարություն Սուրխաթյանի «Հետհոկտեմբերյան հայ գրականություն» (հ. 1, պրոլետարական գրականություն, Թիֆլիս) գրքում առանձին դիմանկարով տրվում է Ակսել Բակունցի ստեղծագործության վերլուծությունն ու գնահատականը:

1930, 5 հունվար - Նոր լույս տեսած իր «Էպիքական լուսաբաց» ժողովածուն Չարենցը մակագրում է Բակունցին՝ «Սիրելի Ակսելին, միակ բարեկամիս» Նարեկացու այս տողերի հավելումով. «Սի եղէց անպտուղ ի փոքր վաստակոյս իբր ապաջան սերմանող անբերրի երկրի»:

1930 - Ադրբեջաներեն տպագրվում է «Իվան բեյը» պատմվածքը: Թարգմանիչ՝ Տ. Իսմիխանով (Բաքու, 30 էջ):

1930 - Բակունցի «Խաչի ստրուկները» սցենարով նկարահանվում է «Սեւ թեւի տակ» համր կինոնկարը: Բեմադրիչ՝ Պ. Բարխուդարյան: Բեմարքը հրատարակել է Դավիթ Գասպարյանը՝ տես՝ «Փակ դռների գաղտնիքը», 1994, էջ 682-719:

1931 - Աշխատում է «Նոր ուղի» գրական-գեղարվեստական, քաղաքական, հասարակական ամսագրում:

1931, հուլիս - «Գրական դիրքերում» ամսագիրը հաղորդում է, որ այլ գրողների հետ մեկտեղ, սոցիալիստական իրականությունը ճանաչելու նպատակով Բակունցը ևս կցվել է արդյունաբերական ձեռնարկություններից մեկին՝ Երևանի մեխանիկական իրերի գործարանին:

1931, աշուն - Խանջյանի աջակցությամբ մեկնում է Լենինգրադ-Պետերհոֆ: Նորաբաց գիտնականի տանը շարունակում է գրել «Կարմրա- քար» վեպը, ինչպես նաև՝ մի քանի նոր պատմվածքներ:

1932-ի սկիզբ – ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում է մեկ տարով գրողներին ազատել զբաղեցրած պաշտոնից, նյութապես ապահովել, որպեսզի նրանք ամբողջովին նվիրվեն գրական աշխատանքի: Գրողների խմբի մեջ էր նաև Բակունցը:

1932, 23 ապրիլ - Ընդունվում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշումը: Նույն թվականի մայիսի 9-ին հրապարակվում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի «Հայաստանի գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշումը: Բակունցը ներգրավվում է գրողների միության կազմկոմիտեի մեջ: Գրական կազմակերպությունների վերակառուցման հարցերի մասին զեկուցում է Լենինականում:

1932, ապրիլ-մայիս- Փարիզում «Մենք» հանդեսի Դ-Ե միացյալ համարում Շավարշ Նարդունին գրախոսում է «Մթնաձոր» ժողովածուն:

1932, 30 մայիս - «Գրական թերթ»-ում տպագրվում է մի հատված Բակունցի «Որդի որոտման» վեպից:

1932, 7 հուլիս- Չարենցն իր «Երկեր» (1932) ժողովածուն ընծայագրում է Բակունցին՝ «Սիրելի Ակսելին, որպես նշան գրական եւ անձնական անխախտ սիրո եւ բարեկամության»:

1932- Լույս է տեսնում «Հոկտեմբեր-Նոյեմբեր» մեծադիր ու շքեղ տարեգիրքը Չարենցի, Բակունցի և Եղիա Չուբարի խմբագրմամբ: Տարեգրքում զետեղված է Բակունցի «Մուրոյի զրույցը» պատմվածքը և կենսագրությունը:

1932- Պետհրատը լույս է ընծայում Բակունցի «Խաչատուր Աբովյանի «Անհայտ բացակայումը»». արխիվային նոր վավերագրերի և անհայտ նամակների հիման վրա ուսումնասիրությունը (62 էջ):

1933, 20 փետրվար - Չարենցը գրում է «Դեպի լյառը Մասիս» պոեմը՝ այսպիսի ընծայագրով. «Ակսել Բակունցին, պայծառ բարեկամիս»:

1933, մայիս - Գործուղվում է Բաքու՝ օգնելու տեղի հայերեն «Կոմունիստ» թերթի աշխատանքներին, կազմակերպելու տեղի հայ գրողների գործունեությունը: Ընկերակցում էր Ռաֆայել Աթայանը: ՀԿ(բ)Կ Կենտկոմում նամակ էին ստացել, թե «Կոմունիստ» թերթի լեզուն անթերի չէ:

1933, 21 ապրիլ - «Գրական թերթը» (թիվ 7) տպագրում է Մկրտիչ Արմենի «Չարենցի եւ հարակից խնդիրների մասին» հոդվածը, որը խտացնում էր Չարենցի, Բակունցի, Մահարու և Արմենի ծրագրային դրույթները գրական սկզբունքների հարցում: Թերթի նույն համարում հոդվածը ենթարկվում է ջարդարարության (Եղիա Չուբար, Գուրգեն Վանանդեցի): Հոդվածի քննադատությամբ հանդես է գալիս «Խորհրդային Հայաստան»-ը (9 հուլիս), որի խմբագրականում այն բնորոշվում է որպես «գրական քաղաքական կոպիտ սխալ»: Թերթի քննադատությունը հասցեագրվում է նաև Չարենցին ու Բակունցին:

1933, 20 օգոստոս - ՀԿ(բ)Կ Կենտկոմն ընդունում է որոշում գրական խմբակային պայքարի դեմ: 5-րդ կետը լրիվ ուղղված է Բակունցի դեմ, որին «անթույլատրելի վարքագծի համար» արվում է «խիստ հանդիմանություն՝ վերջին նախազգուշացումով», և նա ազատվում է գրողների միության կազմկոմիտեի կազմից:

1933, 25 օգոստոս - Կենտկոմի օգոստոսի 20-ի որոշումը քննարկվում է գրողների միության կազմկոմիտեի լիագումար նիստում: Հրապարակվում է Բակունցի գրավոր դիմումը, ըստ որի՝ նա «…անվերապահորեն ընդունում է Կենտկոմի որոշմամբ մատնանշված սխալները»:

1933, 18 նոյեմբեր - ՀԿ(բ)Կ կենտկոմը որոշում է ընդունում «Հայպետհրատի արտադրանքի իդեոլոգիական անկայունության մասին»: Դրանով արգելվում են Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուն, Չարենցի և Բակունցի կազմած «Հայ գրականության քրեստոմատիան», Արմենի «Երեւան» վեպը և այլ հրատարակություններ:

1933, 5 դեկտեմբեր - Երևանի կուսակցական կազմակերպության կոնֆերանսում Աղասի Խանջյանը քննադատում է Արմենի հիշյալ հոդվածը և Չարենցի ու Բակունցի դիրքորոշումը:

1933, 12 դեկտեմբեր - Նամակով Բակունցը դիմում է հանրապետության կուսակցական ու գրական ղեկավարությանը և հրապարակավ ընդունում իր գրական, քաղաքական մեղքերը: Սա թշնամիների սադրանքն էր, որով հասունացրին «ժողովրդի թշնամու» նրա կերպարը:

1933- Պետհրատը լույս է ընծայում «Սեւ ցելերի սերմնացանը» պատմվածքների ժողովածուն (203 էջ): Գիրքը բացվում է «Ծիրանի փողը» պատմվածքով: Ամբողջությամբ զետեղված է 10 պատմվածք: Ձևավորումը՝ Հակոբ Կոջոյանի:

1933 - Բակունցի բեմարքով նկարահանվում է «Արևի զավակը» կինոդրաման: Բեմադրիչ՝ Պատվական Բարխուդարյան:

1933, հոկտեմբեր-դեկտեմբեր - «Անահիտ» (թիվ 3-4) հանդեսում տպագրվում է Արշակ Չոպանյանի «Աբովյանի անհայտացման առեղծվածը եւ պրոֆ. Ն. Ադոնց» հոդվածը՝ Բակունցի ուսումնասիրության և դրա շուրջ ծագած վեճերի մասին:

1934, 10-13 հունվար - ՀԿ(բ)Կ 9-րդ համագումարում Խանջյանը քննադատում է Չարենցին ու Բակունցին՝ «գրականության մեջ ազգային ձեւի եւ սոցիալիստական բովանդակության հարցերում» ունեցած «սխալ տեսակետի» համար:

1934, մարտ-մայիս - «Անահիտ» հանդեսում (թիվ 3-4) տպագրվում է Պետրոս Զարոյանի «Ակսել Բակունց եւ իր «Սեւ ցելերի սերմնացանը» ուսումնասիրությունը, որը 1935-ին Փարիզում լույս է տեսնում առանձին գրքով:

1934, 16 մայիս - «Գրական թերթ»-ի վերաբերյալ գրած մի զեկուցագրի մեջ Նաիրի Զարյանը քննադատում է «Չարենց-Ակսելյան» խմբակի գործունեությունը:

1934, 20 մայիս - «Գրական թերթ»-ում (թիվ 14) տպագրվում է «Իրավան Չարսու բազար» հատվածը Աբովյանին նվիրված վեպից:

1934, 21 մայիս - ՀԽԳՄ կազմկոմիտեի նիստում հաստատվում է գրողների միության ընդունող հանձնաժողովի կազմը, որի մեջ էր նաև Բակունցը:

1934, 4 հունիս - Գրողների տանը բանախոսում է Վահրամ Ալազանի «Վաթսուներորդ հորիզոնում» վեպի լեզվի մասին:

1934, 8-13 հունիս - Գրողների տանը կազմակերպվում է ասուլիս նվիրված գրականության լեզվի հարցերին: Ի շարս այլոց՝ ելույթ է ունենում նաև Բակունցը:

1934, 14 հունիս - Դիմում է ՀԽԳՄ կազմկոմիտեին՝ ընդունվելու գրողների միության անդամ:

1934, 22 հունիս – Տպագրության երաշխավորելու նպատակով Աղասի Խանջյանը կարդում է Բակունցի «Սև ցելերի սերմնացանը» գրքին նվիրված Ռաֆայել Աթայանի հոդվածի շարվածքը:

1934, 28 հունիս - Գրողների տանը Չարենցը բանախոսում է «Մեր գրական լեզվի զարգացման տենդենցները եւ Դ. Դեմիրճյանի լեզուն» նյութով: Բակունցը դժգոհ է մնում Չարենցի զեկուցումից և մի քանի առիթներով հայտնում իր նկատառումները: Դժգոհության պատճառն այն էր, որ գրական նոր լեզվի առաջատար իրեն հռչակելու փոխարեն Չարենցը նախապատվությունը տվել էր Դեմիրճյանին:

1934, 29 հունիս - «Խորհրդային Հայաստան»-ում (թիվ 148) տպագրվում է Ռաֆայել Աթայանի «Սեւ ցելերի սերմնացանը» գրախոսությունը (տես նաև՝ «Գրական թերթ», 30 հունիս, թիվ 17):

1934, 9 հուլիս - Գրողների միության կոմֆրակցիայի նիստում Նաիրի Զարյանը քաղաքական մեղադրանքներ է հասցնում Բակունցին, որին ի պատասխան Բակունցը բռունցքով «հարվածում» է նրան: Նրանց միջև ծագած հակամարտությունն աստիճանաբար խորանում և ընդունում է շատ թշնամական լարված բնույթ: Զարյանը գաղափարապես (բոլշևիկյան դիրքերից) ամեն կերպ ջանում էր ոչնչացնել Բակունցին:

1934, 10 հուլիս - Նախորդ օրը տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ Բակունցը բացատրական նամակ է հասցեագրում հանրապետության ղեկավարությանը:

1934, 14 հուլիս - ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում է ընդունում «Հայաստանի խորհրդային գրողների միության մասին», այլոց հետ մեկտեղ Բակունցը վերստին դատապարտվում է «խմբակային պայքար կազմակերպելու համար»:

1934, 21 հուլիս - Գրողների տանը հանդես է գալիս շուրջ երկու ժամ տևած «Տեղական նացիոնալիզմի մի քանի արտահայտությունները մեր գրականության մեջ» զեկուցմամբ: «Գրական թերթ»-ը տպագրում է զեկուցման շարադրանքը (տե՛ս 24 հուլիս, թիվ 19):

1934, 23 հուլիս - «Խորհրդային Հայաստան» օրաթերթը տպագրում է «Դեպի ծավալուն ստեղծագործական ինքնաքննադատություն» խմբագրականը, որի մեջ «նացիոնալիզմի» մերկացման դիրքերից կոպիտ քննադատության է ենթարկվում Բակունցը:

1934, 1-6 օգոստոս - Հրավիրվում է Հայաստանի խորհրդային գրողների առաջին համագումարը: Բակունցը ելույթ է ունենում համագումարի 8-րդ նիստում, վերջին օրը: Նրա ելույթի հակիրճ շարադրանքը տպագրվել է «Գրական թերթ»-ում (10 օգոստոս, թիվ 21): Ինքնաքննադատության հետ մեկտեղ նա խոսում է նաև «մեր քննադատների ցածր կուլտուրական մակարդակի մասին», որոնք չեն կարողանում մտնել «երկի մեջ և երկի կառուցվածքից» բխեցնել եզրակացությունը: Արծարծում է նաև գրականության լեզվի հարցեր:

1934, 17 օգոստոս - սեպտեմբեր - Հրավիրվում է ԽՍՀՄ գրողների հիմնադիր համագումարը: Համագումարին հայ գրողների պատվիրակության կազմում Բակունցը մասնակցում է որպես պատգամավոր: Համագումարի բացման օրը «Լիտերատուրնայա գազետա»-ն տպագրում է Բակունցի հետ թերթի թղթակցի զրույցի շարադրանքը՝ «Հանուն ժանրերի բազմազանության» վերնագրով: Համագումարում ելույթ է ունեցել օգոստոսի 22-ին՝ 8-րդ նիստում: Ելույթը տպագրվել է «Լիտերատուրնայա գազետա»-ում (2 սեպտեմբեր), «Գրական թերթ»-ում (5 սեպտեմբեր), «Նա ռուբեժե Վոստոկա»-ում (15 սեպտեմբեր) և համագումարի սղագրությունն ի մի բերող գրքում (1934):

Իր ելույթում նա խոսել է գրական ժանրերի մասին, կոչ արել վերանայելու անցյալի «գրական վիթխարի ժառանգությունը» և դրանով «մեծ ու լայն ուղիներ գծել» ընթացիկ գրականության համար: Այդ նպատակով առաջնային է համարում դարձը դեպի սկզբնաղբյուր՝ «դեպի ժողովրդական ստեղծագործությունը»:

1934 - Թիֆլիսում ռուսերեն առանձին գրքով լույս է տեսնում «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքը (19 էջ):

1934 - Թիֆլիսում ռուսերեն լույս է տեսնում «Յոթ պատմվածք» ժողովածուն (135 էջ):

1934 - Պետհրատը լույս է ընծայում Ն. Գոգոլի «Տարաս Բուլբա» վիպակը՝ Բակունցի թարգմանությամբ, առաջաբանով և խմբագրությամբ (156 էջ):

1934 - Պետհրատը լույս է ընծայում Ջոնաթան Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունները»՝ Կարեն Միքայելյանի թարգմանությամբ և Ակսել Բակունցի «Ջոնաթան Սվիֆթը եւ նրա գիրքը» առաջաբանով:

1934, 7 նոյեմբեր- «Գրական թերթ»-ը (թիվ 28) հաղորդում է, որ Հայաստանի խորհրդային գրողների համագումարից ստացած տպավորությունները համագումարի հյուր Ժ. Բերնարը հրատարակել է Ժնևի «Տրավայ» («Աշխատանք») թերթում, որի մեջ Բակունցին համարել է «ամենագեղարվեստական վիպագիրներից ու պատմվածքագիրներից»:

1934, նոյեմբեր- «ՀՕԿ» ամսագրի 11-րդ համարում տպագրվում է Ավետիք Իսահակյանի «1934 թ. գրական հունձը Խորհրդային Հայաստանում» հոդվածը, որի մեջ բարձր գնահատության խոսքեր կան Բակունցի հասցեին: Բակունցը հոչակվում է «մեր արձակի ամենատաղանդավոր ներկայացուցիչը»:

1935, հունվար - Բակունցի թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով պետհրատը լույս է ընծայում Վարդան Այգեկցու «Աղվեսագիրք» ժողովածուն (118 էջ): Մինչ գրքով լույս տեսնելը ութ առակ տպագրվել էր «Գրական թերթ»-ում (1934, 29 նոյեմբեր): Այս ամենի դեմ միտումնավոր հարձակումներ է գործում «Խորհրդային արվեստ» ամսագիրը (1935, թիվ 1, 2): Այդ հոդվածների հեղինակներն էին Ա. Վշտունին (անստորագիր խմբագրական) և Նորայր Դաբաղյանը: Այդ վեճին անդրադառնում է «Գրական թերթ»-ը (10 հունվար, թիվ 1):

1935, հունվար-փետրվար - Լույս են տեսնում Խ. Աբովյանին նվիրված պատմավեպի հատվածները՝ «Գործ Մայրանա դստեր Մկրտումի» («Խորհրդային գրականություն», թիվ 1), «Դեպի լյառն Մասիս» («Գրական թերթ», 7 փետրվար), «Լիբեր Արմենիեր» («Խորհրդային գրականություն», թիվ 2): Աբովյանի, Նալբանդյանի մասին վեպ ու պոեմ գրելու գաղափարը Չարենցին ու Բակունցին հուշել էր Խանջյանը:

1935, 8 մարտ - Չարենցը դիմում է ՀԽԳՄ վարչությանը և հայտարարում «գրողների կորպորացիայից» դուրս գալու իր որոշման մասին: Այդ կապակցությամբ մարտի 11-ին և 13-ին տեղի են ունենում գրողների միության նիստեր: Խստիվ դատապարտվում է Չարենցի դիմումը: Դատապարտողների և Չարենցին գրողների միությունից հեռացնելու օգտին քվեարկողների մեջ էր նաև Բակունցը (նրա ելույթը տես՝ ԳԱԹ, ՀՖ, թիվ 9): Այդ արարքն ավելի ուշ պատճառաբանում է այսպես. «...այս ձմեռ ես աշխատում էի Էջմիածնում եւ մինչեւ 1935 թվի փետրվարը հազվադեպ էի քաղաք գալիս, այսինքն՝ մինչեւ գրողների միությունից նրա հեռանալու դիմումը, ինչն էլ առիթ ծառայեց Չարենցի դեմ իմ ելույթին, որից հետո մեկընդմիշտ խզեցի կապերս նրա հետ» (հանրապետության ղեկավարությունը բանտից հասցեագրած «6. X. 1936» թվակիր դիմումից):

1935, 10-11 ապրիլ - Ելույթ է ունենում Հայկինոյի հարցերին նվիրված ասուլիսում:

1935 - Մոսկվայում ռուսերեն թարգմանությամբ լույս է տեսնում «Խոնարհ աղջիկը» պատմվածքների ժողովածուն (Գոսլիտիզդատ, 206 էջ):

1935, 11 մայիս - «Խորհրդային Հայաստան»-ը (թիվ 107) տպագրում է «Անխնա պայքար ալելուիականության դեմ» խմբագրականը Բակունցի դեմ:

1935, 20 մայիս - «Գրական թերթ»-ը (թիվ 11), ընդունելով «Խորհրդային Հայաստանի» քննադատությունը՝ «կոպիտ քաղաքական սխալներ» թույլ տալու մասին, նոր ջարդարարական հարձակման է անցնում Չարենցի և Բակունցի դեմ:

1935, 30 սեպտեմբեր - Գարնանը Խանջյանի առաջարկով Բակունցն սկսում է գրել «Զանգեզուր» բեմարքը: Հեղինակային տարբերակն ավարտում է 1936-ի հունվարի 23-ին, ըստ իր հիշատակարանի՝ «օգնականությամբ զանգեզուրցի մի խումբ կոմունարների, որոնց հեղինակը երախտապարտ է»:

1935, 20 հոկտեմբեր - «Լիտերատուրնայա գազետա»-ն տպագրում է Պ. Նեզնամովի «Ժլատ արձակ» գրախոսությունը Բակունցի «Խոնարհ աղջիկը» ռուսերեն գրքի մասին:

1935, 1 դեկտեմբեր - «Լիտերատուրնայա գազետա»-ն տպագրում է Գ. Թաթուլովի «Տարածելով թեւերը» հոդվածը, որի մեջ բարձր գնահատական է տրվում Բակունցի ստեղծագործությանը:

1935 - Պետհրատը տպագրում է Բակունցի «Անձրեւը» պատմվածքների ժողովածուն (80 էջ):

1935 - Բակունցի բեմարքով (համահեղինակ՝ Ե. Գրեբներ) նկարահանվում է «Ալագյազ» ֆիլմը: Բեմադրիչ՝ Ջերգիզ Ժամհարյան (1903-1984):

1936, 22 հունվար - Գրական ոճի և նյութի միասնության մասին ելույթ է ունենում գրողների կուսակցական ժողովում:

1936, մինչև փետրվար – Պետհրատը լույս է ընծայում «Եղբայրության ընկուզենիներ» գիրքը (156 էջ), որում զետեղված էին համանուն պատմվածքը և «Կյորես» վիպակը:

1936, փետրվար - ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի նախագահի տեղակալ Ալեքսանդր Մելիքը Խանջյանի ցուցումով պայմանագիր է կնքում Բակունցի հետ՝ Զանգեզուրի պատմական նշանակություն ունեցող վայրերի մասին «գիրք-ալբոմ» կազմելու համար: Բակունցն ստանում է նախատեսված 5.800 ռուբլուց 2.000-ը: Իրադարձությունների ողբերգական ընթացքը թույլ չի տալիս իրականացնել այս ծրագիրը:

1936, մարտ-ապրիլ - ՀԿ(բ)Կ Կենտկոմում մի քանի անգամ քննարկվել է «Զանգեզուր» բեմարքը: Արված դիտողությունների և առաջարկությունների համաձայն Բակունցը շարունակում է աշխատանքը՝ վերջնական տարբերակն ստեղծելու համար:

1936, 9 մայիս - Հայկինոյի հանձնարարությամբ Բակունցը երեք ամսով պետք է գործուղվեր Մոսկվա՝ «Զանգեզուր» բեմարքը լրամշակելու համար: Որդու հիվանդության պատճառով մեկնում է մայիսի կեսերին (հավանաբար 15-ին):

1936, 2 հունիս - Մոսկվայի «Նացիոնալ» հյուրանոցում Բակունցը հանդիպում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Խանջյանի հետ: Քննարկում են Ներսիկ Ստեփանյանի ձերբակալության հարցը, որը տեղի էր ունեցել մայիսի 21-ին: Խոսում են նաև «Զանգեզուր»-ի մասին: Ստեփանյանի ձերբակալությունից հետո Մոսկվայում Բակունցի վրա սահմանվում է ՆԳԺԿ մարմինների հսկողություն:

1936, 4 հունիս - Գրողների միության ժողովը Բակունցին դատապարտում է որպես «ժողովրդի թշնամի»: Նրա դեմ խոսում են Վ. Նորենցը, Վ. Ալազանը, Հ. Մկրտչյանը, Ն. Զարյանը, Ն. Դաբաղյանը և ուրիշներ: Ժողովը որոշում է Բակունցին հեռացնել կուսակցությունից:

1936, 9 հուլիս- Գրողների միության ժողովը վերստին դատապարտում է Բակունցին: Ելույթ են ունենում Ն. Զարյանը, Հ. Սիրասը, Գ. Հովնանը, Վ. Նորենցը, Հ. Գյուլիքևխյանը, Վ. Ալազանը, Հ. Մկրտչյանը, Ն. Դաբաղյանը և ուրիշներ:

1936, 9 հուլիս - Թիֆլիսում Բերիան սպանում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանին:

1936, 14 հուլիս - Գրողների միության ժողովը դատապարտում է Խանջյանին և նրա կողմից «հովանավորված» Բակունցին:

1936, 30 հուլիս - Մոսկվայից Բակունցն անսպասելի մեկնում է: Հայաստանում նրան սպասում էին ՆԳԺԿ գործակալները: Հավանաբար հասել է մինչև Թիֆլիս, այնտեղից գնացել Դիլիջան, ուր վերջին հրաժեշտն է տվել ընտանիքին: «Զանգեզուր» նոր բեմարքը մնում է անավարտ: Հետագայում Բակունցի նյութերի հիման վրա «Զանգեզուր» բեմարքը գրում են Հ. Բեկնազարյանը, Յա. Դուկորը և Վ. Սոլովյովը: Նկարահանումներն ավարտվում են 1938-ին:

1936, 3 օգոստոս - Բակունցին ընդունել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ամատունին: Նրանց զրույցը սղագրվել է:

1936, 5, 7 օգոստոս- Երևանում, մինչև ձերբակալությունը, Բակունցը հարցաքննվում է ՆԳԺԿ մարմինների կողմից:

1936, 9 օգոստոս - ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն որոշում է Բակունցին կուսակցությունից հեռացնելու և «հակահեղափոխական ազգայնամոլական գործունեության համար ձերբակալելու մասին»: Նույն օրը Բակունցը ձերբակալվում է: Նրա դեմ մեղադրանք է հարուցվում ըստ ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 67, 68 հոդվածների: Հետագայում ավելացվում են նոր հոդվածներ՝ 19-65, 78: Բակունցը մեղադրվում է «խմբակային հանցավոր գործունեության մեջ»:

1936, 9 օգոստոս - 1937, 4 փետրվար - ՆԳԺԿ աշխատակիցների կողմից Բակունցը բազմիցս ենթարկվել է դաժանագույն հարցաքննությունների և առերեսումների: Նրա հանդեպ գործադրել են ֆիզիկական բռնություններ:

1936, 10 օգոստոս - Երևան, Նալբանդյան 80 հասցեով խուզարկել են Բակունցի բնակարանը: Ըստ արձանագրության՝ տարել են. վեց նամակ, երեք նոթատետր, մեկ ընդհանուր տետր, երկու ալբոմ, յոթ միավոր տարբեր գրառումներ, «Զանգեզուր» բեմարքի երեք «վարիանտ» և այլ նյութեր:

1936, սեպտեմբեր – Բանտում Բակունցին կինը՝ Վարվառա Չիվիջյանը, այցելել է երեք անգամ և հետո, արդարացումից առաջ, հանդես եկել ցուցմունքներով (տե՛ս Դ. Գասպարյան, «Հայ գրականություն», գիրք 5, 2017, էջ 322-331):

Առաջին տեսակցությունից հետո Բակունցի ուղարկած սպիտակեղենի վրա կինը հայտնաբերել է արյան հետքեր: Վերջին տեսակցության ժամանակ, ըստ նրա հուշերի, Բակունցն անճանաչելի էր, փոխված էր, կիսախելագարի պես էր՝ «կարծես ուրիշ մարդ էր»: Կինը նրան տարել է Մոպասանի պատմվածքների ռուսերեն ժողովածուն, որի մեջ զետեղված «Պարան» գործի առանձին տողերի վրա եղունգով նշումներ է արել իր հոգեկան զարհուրելի ծանր վիճակի մասին:

1936, 2 հոկտեմբեր- ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունին զեկուցում է Երևանի կուսակցական կազմակերպության ակտիվի նիստում, հրապարակում ձերբակալված Բակունցի «ցուցմունքը» և խիստ քննադատում է նրան:

1936, 10 հոկտեմբեր - Բանտից «Դիմում» է հղում հանրապետության ղեկավարությանը՝ ապացուցելու իր անմեղությունը: «Դիմումից». «Ես Խորհրդային Հայաստանի լավագույն արձակագիրն էի («Պրավդա», 1934), հայ խորհրդային գրականության կառքին լծված քեղաձի, թողեք, որ ես մնամ Խորհրդային Հայաստանի դռան հավատարիմ շունը» (Դ. Գասպարյան, «Ալեքսանդր (Ակսել) Ստեփանի Բակունց. Մեղադրական գործ №4131», էջ 55):

1936, 14 հոկտեմբեր, գիշեր - Տնային կալանքի մեջ գտնվող Չարենցը գրում է «Ա. Բ.-ին» բանաստեղծությունը՝ նվիրված եղերաբախտ գրական բարեկամին:

1936-ի ընթացքում - Մամուլում Բակունցի դեմ ծայր է առնում խիստ քննադատություն: Լույս են տեսնում հետևյալ ջարդարարական հոդվածները.

1. Ն. Զարյան, «Գրական լեզվի նացիոնալիստական աղավաղումների դեմ («Խորհրդային գրականություն», թիվ 3-4),

2. Ն. Զարյան, «Ընդդեմ նացիոնալիզմի եւ տրոցկիզմի, հանուն սոցիալիստական մեծ գրականության» («Գրական սերունդ», թիվ 4),

3. Ն. Զարյան, «Կապը կտրած խմբապետը» («Գրական սերունդ», թիվ 5-6),

4. Ս. Կիրակոսյան, «Գոգոլի «Տարաս Բուլբան» եւ Ա. Բակունցի նացիոնալիստական-հակահեղափոխական կոնցեպցիան» («Գրական սերունդ», թիվ 5-6),

5. Խմբագրական, «Միշտ բարձր պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը» («Գրական թերթ», 25 օգոստոս, թիվ 19),

6. Ն. Զարյան, «Նացիոնալիստը խորհրդային գրողի դիմակով» («Գրական թերթ», 25 օգոստոս, թիվ 19):

7. Ն. Զարյան, «Նացիոնալիստը խորհրդային գրողի դիմակով» («Լիտերատուրնայա գազետա», 1 սեպտեմբեր), ռուսերեն:

8. Խմբագրական, «Բարձրացնել բոլշեւիկյան զգաստությունը գրականության եւ արվեստի ֆրոնտում» («Խորհրդային արվեստ», թիվ 15-16),

9. Խմբագրական, «Դեպի խորհրդային գրականության նոր վերելք («Խորհրդային Հայաստան», 18 սեպտեմբեր),

10. Հ. Սիրաս, «Կուսակցության երկաթե կարգապահությամբ» («Գրական թերթ», 22 սեպտեմբեր),

11. Վ. Թերզիբաշյան, «Հակահեղափոխական նացիոնալիստների գրական հնարքները» («Գրական թերթ», 1936, 12 հոկտեմբեր),

12. Վ. Մարգարյան, «Դաշնակ հակահեղափոխականի «գրական դեմքը» («Խորհրդային արվեստ», թիվ 18):

1937, 17-21 ապրիլ - Գումարվում է հայ գրողների ընդհանուր ժողով: Ելույթ ունեցողներն այլոց հետ մեկտեղ դատապարտում են Բակունցին՝ որպես ազգայնամոլ, ահաբեկիչ, տրոցկիստ: Զեկուցել է Գևորգ Աբովը: Մեղադրական խոսք է ասել Վալերի Կիրպոտինը: Ելույթ ունեցողների մեջ են Հ. Քոչարը, Ս. Վահունին, Ա. Ոսկերչյանը, Հ. Սիրասը, Մ. Կորյունը, Ս. Սողոմոնյանը, Տ. Հախումյանը, Ս. Հակոբյանը և ուրիշներ: Ընդհանուր այս սև հորձանքին իրենց ձայնն են միացնում նաև Ավետիք Իսահակյանն ու Դերենիկ Դեմիրճյանը:

1937- Բակունցի դեմ շարունակվում են ստոր և չարամիտ ելույթներն ու հոդվածները: Ահա դրանցից մի քանիսը ևս.

1. Գ. Աբով, Ելույթ համամիութենական գրողների միության վարչության 4-րդ լիագումար նիստում («Գրական թերթ», 1937, 20 մարտ, թիվ 7),

2. Հ. Մամիկոնյան, «Նացիոնալիստական-տրոցկիստական «գրականության» դրոշակակիրը» («Գրական թերթ», 6 ապրիլ, թիվ 10),

3. Վ. Կիրպոտին, «Ստեղծագործական ոգեւորությամբ դեպի նոր հաղթանակներ գրականության ֆրոնտում» («Գրական թերթ», 23 ապրիլ, թիվ 12),

4. Ասուր. Վեն. (Ասատուր Ասատրյան), «Գրականության դասագրքերը մաքրենք նացիոնալիզմի կեղտից» («Գրական թերթ», 21 մայիս, թիվ 15):

1937, 26 մայիս – ՀԿ(բ)Կ 10-րդ համագումարում Ամատունին խիստ քննադատության է ենթարկում Բակունցին և «Նոյեմբեր» խմբակցության գործունեությունը:

1937, 2 հուլիս - Փրկության հույսով բանտից երկու դիմում է հղում ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմին:

1937, 3 հուլիս- Փրկության վերջին դիմումն է հղում ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմին և վերահսկողության գծով անդրկովկասյան զինվորական հանձնաժողովի դատախազին: Բակունցն ամեն կերպ ջանում է ապացուցել իր անմեղությունը:

1937, 6 հուլիս - Մուղդուսին հաստատում է Բակունցի «Մեղադրական եզրակացությունը», ըստ որի՝ նա «իրեն մեղավոր ճանաչեց» որպես «հեղափոխական տրոցկիստական ազգայնամոլական կազմակերպության անդամ», «հակահեղափոխական գրողների կազմակերպության» ղեկավար, որը նպատակ ուներ սպանել Ստալինին Բերիային, «կազմակերպությունը կապված էր Մոսկվայի «Միացյալ կենտրոնի» հետ»:

1937, 7 հուլիս - ԽՍՀՄ գերագույն դատարանի զինվորական հանձնաժողովի արտագնա նիստը փակ դատական խորհրդակցությամբ Բակունցի վերաբերյալ կայացնում է որոշում, որից հետո հրապարակվում է դատավճիռը:

Բակունցը դատապարտվում է պատժի առավելագույն չափի՝ գնդակահարության, անձնական ունեցվածքի բռնագրավումով:

1937, 8 հուլիս - Երևանում ի կատար է ածվում Բակունցի գնդակահարության դատավճիռը: Քսանհինգ օր առաջ լրացել էր նրա ծննդյան 38-րդ տարեդարձը:

Նույն օրը գնդակահարվում են Ներսիկ Ստեփանյանը, Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, Արտաշես Գևորգյանը և ուրիշներ:

Ըստ հուշագրի վկայության՝ Բակունցը գնդակահարվել է Երևանի Թոխմախ լճի շրջակայքում (տե՛ս Վ. Ալազան, «Տառապանքի ուղիներով», 1990, էջ 64):

1937 - Գլավլիտի տարբեր որոշումներով Բակունցի գրքերը հանվում են գրադարաններից, դադարեցվում է դրանց վաճառքը գրախանութներում: Համանման որոշումներ կայացվել էին նաև 1936-ին, ձերբակալությունից հետո:

1937, 17 սեպտեմբերի - Ձերբակալվում է Վարվառա Չիվիջյան-Բակունցը (1902-1965): Ազատվում և Գորիս է վերադառնում 1945-ին:

1945, դեկտեմբեր - ...Կը սիրեմ այն առողջ թափը, որ կա Հայաստանին գրողներու մեջ: <...>: Նորերուն մեջ չկան կարևոր արձակագիրներ, կա շատ տաղանդավոր Ակսել Բակունցը, որ չգիտես ո՞ղջ է, թե՞ սպանված: Շատ պիտի ցավեմ եթե օր մը իմանամ, որ սպանած են այն տաղանդը: Ան ընդունակ էր մեծ և անկախ գործեր տալու:

Համաստեղի 1945 թ. դեկտեմբերին (օրը նշված չէ) գրած նամակից՝ հասցեագրած Հովհաննես Ավագյանին. Համաստեղ, Նամականի, Երևան, Մուղնի, 2003, էջ 76:

1955, 2 մարտ - ԽՍՀՄ գերագույն դատարանի գլխավոր զինվորական դատախազությունն արդարացնում է Բակունցին: Բակունցն անմեղ էր գնդակահարվել: Նրա դեմ հարուցված թիվ 4131 մեղադրական գործը կարճվում է: Սկսվում է մեծ գրողի ետմահու կյանքը, որը շարունակվող տարեգրության պահանջ ունի ...

«Բագինը» եւ Խորհրդային Հայաստանի մտաւորականութիւնը «Բագինի» 60-ամեակի առիթով

Մովսէս Ծիրանի
Արվեստաբանութեան դոկտոր

Արեւմտեան Պէյրութ, ՀՅԴ-ի կեդր. ակումբ, ամառ, 1979

Սիրելի՛ ընթերցող, հակառակ անոր, որ ես սովորութիւն ունէի ամառները ակումբ այցելելու՝ այս անգամ Մնապեանը յատուկ լուր ղրկած էր ինծի, որ, անպայման, «Բագին» հանդիպիմ եւ ինչքան շուտ, այնքան լաւ: Յստակ էր, որ կարեւոր հարց մը կար: Գացի: Տագնապի մէջ էր: Նախ՝ մեր՝ Մուսալերան բարբառով եւ ցած ձայնով տեղակացուց.

— *Յաջորդ երկուշաբթին երկուքս «հրաւիրուած» ենք «Բիւրոյի» գրասենեակը...: Հոս շատ յարմար չէ, երեկոյեան մեզի կու գաս, միասին կ'ընթրենք ու հանգիստ կը խօսինք... :*

— *Խէր, իշալլայ... ինչ է... «բան» մը կայ...*

— *Կայ, այո՛, եւ այս անգամ խնդիրը լուրջ է:*

Սարգիս Կիրակոսեանի եւ Յարութիւն Պէրպէրեանի ներկայութեան լոեցի...: Երեկոյեան գացինք իր «Համրայի» բնակարանը: Նման առիթներով առնուազն եղբայրս՝ Պետիկը, ներկայ կ'ըլլար, բայց այդ օր ան եւս կը բացակայէր: Պօղոսը ուզած էր, որ բոլորովին առանձին ըլլանք: Տիկ. Աղաւնին բաժակ մը օղիի շուրջ, ինչպէս միշտ, յաւուր պատշաճի սեղան մը պատրաստած էր, բայց այս անգամ՝ միայն երկուքիս համար: Պօղոսը զուարթ բնաւորութեան տէր անձ մըն էր, նման առիթներով յաճախ կատակներ կ'ընէր, ու ես նոյնիսկ հայրենիքէն նոր բերած անեքդոտներ կը պատմէի... նաեւ՝ «Վարդանիկէն»: Սակայն այդ օր ո՛չ կատակելու եւ ո՛չ ալ անեքդոտ լսելու տրամադրութիւն ունէր: Ան ամենայն հանդիսաւորութեամբ սկսաւ.

— *Ղեկավարութիւնը տրամադրուած է փակելու «Բագինը», որովհետեւ պահանջուած նիւթաբարոյական զոհողութիւնները չեն արդարացներ արդիւնքը: Ընթերցողները չափազանց պակսած են: Պատկերացուր, որ «Բագինի» բաժանորդներուն թիւը տասէն վար է: Եւ եթէ այսպէս շարունակուի, եւ «Բագինը» փակուի, արդարօրէն, ո՛չ ընթերցողները կը շատնան, ո՛չ գրողներու մակարդակը կը բարձրանայ եւ ո՛չ ալ կուսակցութեան նիւթական վիճակը կը բարելաւուի: Ընդհակառակը՝ պէտք է պատրաստ ըլլանք աւելի կնճռոտ հարցեր դիմագրաւելու: Խնդիրը ես եւ դուն չենք: Անձնապէս շատ մտահոգուած չեմ գործս կորսնցնելով, կրնամ Այնճար իանութ մը բանալ եւ ընթացքին կամ շարունակել «Միջնաբերդ» գրական տարեգիրքը, կամ ալ նոր պարբերական մը կը սկսիմ հրատարակել Անդրանիկ Ծառուկեանի նման: Խնդիրն այն է, որ «Բագինը» Սփիւռքի բազմաթիւ մտաւորականներու բեմն է: Ես կրնամ, հնարաւորութիւն ունիմ Սփիւռքի գրողներու հետ կապերս շարունակել եւ լաւ կամ գէշ գրական բեմ ստեղծել անոնց համար: Սակայն ինչ պիտի ըլլայ հայրենի մտաւորականութեան հարցը, որոնց մասին դուն կ'ըսես, թէ «տաք հացի պէս» կը սպասեն «Բագինին»:*

Այս անգամ իրմէ աւելի ե՛ս սկսայ մտահոգուիլ... ըսի.

— *Նայիր՝ մենք գիտենք, որ ըլլայ Բիւրոյի նիստերուն, թէ ընդհանուր պատգամաւորական ժողովներուն, քանի մը անգամ քննարկուած է այս հարցը, սակայն միշտ որոշուած է շարունակել «Բագինի» հրատարակութիւնը, այլ պատճառներու զուգահեռ միշտ յիշատակուած է նաեւ հայրենիքի մէջ «Բագին» տարածելու անհրաժեշտութիւնը: Ըստ երեւոյթին, այս անգամ, իսկապէս, խնդիրը լուրջ է: Ասկէ առաջ բնաւ չէիր մտահոգուէր «Բագինի» մնայուն բաժանորդներու եւ առհասարակ տպաքանակի նուազումով, որովհետեւ գիտէիր, թէ քաղաքական եւ տնտեսական պատճառներ կան, որոնք ժամանակաւոր բնոյթ ունին, եւ օրը կու գայ, եւ ամէն ինչ իր տէղը կը գտնէ: Այսպէս կ'ըսէիր, եւ քու լաւատեսութիւնը կը փոխանցուէր նաեւ մեզի: Սակայն հիմա ուրիշ բան կ'ըսես, որ աւելի մտահոգիչ կը թուի ըլլալ: Այնուամենայնիւ, սակայն ես աւելի կարեւոր ու հիմնական մտահոգութիւն մըն ալ ունիմ: Հայրե-*

նի մտաւորականութիւնը շատ մեծ կարծիք եւ վստահութիւն ունի Դաշնակցութեան հանդէպ: Նոյնիսկ շատ աւելի ուժեղ ու կարող կը կարծէ կուսակցութիւնը, քան ինչ որ է: Ազգային գերնի վրայ անոնք յոյսը Դաշնակցութեան վրայ դրած են: Եթէ լսեն, որ տնտեսական մտահոգութիւններով «Բագինը» կը փակուի, ինչ պիտի մտածեն մեր մասին... առհասարակ:

— Ձիշդ ես, Մովսէս, լաւ կ'ըլլայ, որ այս կէտը եւս յատուկ շեշտես հանդիպման ժամանակ:

Իմ գրասէր ընթերցող, նկատի առ, որ երբ Պողոսը դադրեցաւ «Բագինի» խմբագրապետի պաշտօնէն, սկսաւ հրատարկել «Ազդակ գրականը»: Ան, իսկապէս, գրամոլ մըն էր եւ սարսափելի աշխատասէր ու բծախնդիր խմբագիր մը, որ տաղանդի հետ կապ չունի: Ինք այդպէս էր, որովհետեւ մասնագիտական կանոնաւոր կրթութիւն ստացած չըլլալու բարդոյթը կ'ապրէր, այդ բացը կը փորձէր լեցնել աշխատասիրութեամբ: Ան նոյնիսկ կարգ մը վկայեալ մտաւորականներու հանդէպ որոշ վերապահութիւններ ունէր: Գիտէր նաեւ՝ ինչ ձեւով պէտք է աշխատանքի մղել՝ բացի իր շրջապատը որոշ բանիմաց մտաւորականներու, որոնք տարբեր միջոցներով կ'օգնէին «Բագինին», ինչպէս՝ Արտաշես Տէր-Խաչատուրեան, Վահէ Սեթեան, Յակոբ Իսկէնտերեան, Աւօ Թումայեան, Ժիրայր Դանիէլեան եւ ուրիշներ: Կային նաեւ ոմանք, որոնք ինքնակամ կերպով կ'ուզէին օգտակար ըլլալ «Բագինին», ինչպէս Վահէ Օշականը, որ միջազգային նորարարական շարժումներուն հաղորդակից կ'ուզէր դարձնել հայ ընթերցողը, սակայն Պողոսը շատ հետաքրքրուած չէր այդ հարցերով: Այդ պատճառով ալ Գր. Պլըտեանի եւ Մ. Նշանեանի նման գրողներուն կը փորձէր հեռու պահել «Բագինէն», բայց լայն տեղ կը տրամադրէր հայրենի հին եւ նոր գրողներուն: Այնպէս որ, «Բագինը» թէ՛ համապարփակ եւ անհրաժեշտ տեղեկութիւններ կը փոխանցէր հայրենի մտաւորականութեան, եւ թէ՛ Սփիւռքի մտաւորականութիւնը հաղորդակից կը դառնար հայրենի գրական անցուդարձերուն եւ փոխադարձ պատկերացում կ'ունենային իրարու մասին: Օրինակի համար, երբ Հենրիկ Էդոյանի «Սոնեթների պսակը» հրատարակուեցաւ (1974-ին) ու բարձր գնահատուեցաւ «Բագինի» կողմէ, մեծ ընդունելութիւն գտաւ Լիբանանի երիտասարդ գրողներու մօտ, անոնցմէ ոմանք նոյնիսկ փորձեցին «Սոնեթներու պսակ» գրել: Բաւականին երկար զրուցելէ ետք Պողոսը եզրակացուց.

— Պէտք է որ պատրաստուած երթանք եւ յատկապէս ցոյց տանք, թէ ինչքանով «Բագինը» անհրաժեշտութիւն է թէ՛ Սփիւռքի եւ թէ՛ յատկապէս հայրենի մտաւորականութեան համար...

Հանդիպմանը ներկայ էին ընկերներ Սարգիս Ջէյթլեանը, Հրաչ Տասնապետեանը, Երուանդ Փամպուքեանն ու Բիւրոյի պաշտօնական գործավարը՝ Փիթըր Գարակէոզեանը...: Մնապեանը, որ նախապատրաստուած էր հանդիպումին (նոյնիսկ նոթեր ալ գրած էր), սպառիչ պատասխաններ կու տար եղած հարցումներուն, իսկ ես պատմականը տալէ ետք չկրցայ յստակ պատասխաններ տալ բոլոր հարցերուն:

Պողոս Մնապեանը եւ Ուիլիամ Սարոեանը

Օրինակի համար՝ չկրցայ պատասխանել այն հարցին, թէ. *«բացի Երեւանէն՝ «Բագին» կը հասնէ՞ Հայաստանի միւս քաղաքներու մտաւորականութեան, թէ ոչ»*: Եւ կամ՝ *«քանի՞ մտաւորական «Բագին» կ'ընթերցէր Հայաստանի մէջ»*: Ջէյթլեանը հետաքրքրուեցաւ նաեւ Արցախով, Ախալքալաքով եւ յատկապէս Թիֆլիսի հայ գաղութով ու թելադրեց, որ ներխորհրդային Սփիւռքի մասին եւս մտածենք: Այս բոլորէն ետք ես նախ յիշատակեցի հայրենի բազմաթիւ մտաւորականներու անուններ (որոնցմէ շատեր ծանօթ չէին իրենց), որոնք վստահաբար Բագին կ'ընթերցէին, իսկ «Ազդակ Շաբաթօրեակի» պարագային բացատրեցի, թէ ինչո՛ւ շատ քիչեր միայն հնարաւորութիւն ունէին ընթերցելու զայն ու խոստացայ, որ Երեւան վերադառնալէ ետք այս հարցերով եւս զբաղուիլ: Ապա օրինակներով ցոյց տուի, թէ հայրենի մտաւորականները իրապէս կը հիասթափուին Դաշնակցութենէն, եթէ իմանան, որ «Բագինը» դադրեցուած է պարզապէս նիւթականի չգոյութեան հետեւանքով: Իսկ Պողոսը յատուկ անդրադարձաւ նաեւ իր «կապերու» մասին եւ ցոյց տուաւ, թէ ինչքանով գոհ են «Բագինէն», որու շնորհիւ հայրենի գրողներէն շատեր բարեկամական յարաբերութիւններ ստեղծած էին նաեւ սփիւռքահայ այլ գրողներու հետ: Թէեւ անոնց գլխաւոր կապը ես էի, սակայն ո՛չ Մնապեանին եւ ո՛չ ալ ուրիշ ոեւէ մէկուն գրաւոր նամակ ո՛չ կը տանէի եւ ո՛չ ալ կը բերէի... զգուշութեան համար: Միայն այդ օրերու երկու վեհափառներու (Գարեգին Բ եւ Վազգէն Ա) միջեւ քանի մը նամակ փոխանակած էի Խաչիկ Պապիկեանի եւ Լյութվիկ Խաչատրեանի միջոցով:

Այդ օր միայն հարցեր տրուեցան մեզի, որոնց պատասխանները կ'արձանագրուէին Փիթըրին կողմէ: Պարզուեցաւ, որ քննարկումը տեղի պիտի ունենար մեր բացակայութեան, որուն արդիւնքը կրնայինք իմանալ շաբաթ մը ետք միայն: Վերջաւորութեան Մնապեանին պարտականութիւն տրուեցաւ գրաւոր

«Գրական Խմբակի» և մամլոյ Դիվանի անդամները հիւրընկալել են Սերօ Խանզադեանին

ներկայացնելու իր եւ իմ տուած զեկուցումներն ու բացատրութիւնները եւ տեղեկացուեցաւ, որ բոլոր պարագաներուն ամէն ինչ պէտք է որ գաղտնի մնար...

Երբ դուրս ելանք Բիւրոյի գրասենեակէն, Պօղոսը նեղացած կը թուէր ըլլալ ինձմէ, անոր համար, որ նոր կը լսէր, թէ «Ազդակ Շաբաթօրեակ» եւս մուտք կը գործէր Հայաստան: Ես բացատրեցի, թէ սկզբունքով այս հարցերուն հետ առնչուող իւրաքանչիւր անձ տեղեակ կրնայ ըլլալ միայն այն հարցերէն, որոնք իր հետ կ՚առնչուին: Ի դէպ, նոյն սկզբունքը կը կիրարկուէր «Թարգմանչաց տօներ» ու գաղտնի գործունէութիւններու պարագային...

Շաբաթ մը ետք Պօղոսը լուր ղրկեց, որ տղայ ծնաւ:

Երեւան, Քոչարի փողոց, 1997, Սեպտ.

Գեղանկարիչ Սամոյի (Սամուէլ Պետրոսեան) հրաւէրով հաւաքուած էինք ճաշկերոյթի մը՝ տրուած ի պատիւ իր վաղեմի ընկերներու՝ բանաստեղծ եւ գեղանկարիչ տր. Յարութիւն Նագուլեանի եւ իր տիկնոջ՝ Էմմայի, որոնք հայրենի սփիւռքահայ առաջին սերունդի ուսանողներէն եղած էին...: Այդ օր ներկայ էին նաեւ Սամոյի տիկինն ու քոյրը՝ Ալվարդ Պետրոսեանը, իր ամուսինը՝ Սունդուկեանի յայտնի դերասաններէն Լորենց Առուշանեանն ու անոնց ուստրը՝ Նարեկը, գեղանկարչուհի Յասմիկը, Էդ. Խարազեանը, Կարէն Սմբատեանը, Ռոպերթ Էլիբեկեանն ու տիկինը՝ Մարին, Արա Շիրազը եւ ուրիշներ:

Պետրոսեանները Երեւանի հայրենասէր արուեստագէտներու յայտնի գերդաստաններէն մէկը կը համարուէին, որոնց գաղափարական անպաշտօն առաջնորդը կը թուէր ըլլալ Ալվարդը, որ իբրեւ գրականութեան, ընկերային եւ կամ առհասարակ մշակութային կեանքին մէջ վաստակ ունեցող հեղինակութիւն, բազմած էր սեղանի կեդրոնը, որ բաւականին երկար էր ու ճոխ: Այդ օրերուն քաղաքական թեժ վիճաբանութիւններ կ՚ընթանային հայրենիքի մէջ, որուն պատճառով նաեւ հայրենի կերպարուեստագէտներէն շատեր հակառակ դիրքերու վրայ գտնուէին: Այս հաւաքի նպատակներէն մէկն ալ զիրենք վերամիացնել էր: Այդ օր խնդրոյ առարկայ էր ՀՅԴ-ի վարկը: Որովհետեւ ամենատիրական դէմքը Ալվարդն էր անոնց մէջ, Նագուլեանը յատուկ խնդրեց իրմէ, որպէսզի կարծրացած դիրքերը մեղմացնէ եւ հանդարտեցնէ շիկացած մթնոլորտը:

Կարէնը, որ մինչ այդ գրեթէ լուռ էր, յանկարծ ոտքի ելաւ՝ բաժակը ձեռքին ու ըսաւ.

— Հիմա հեշտ է դաշնակցական լինելը, Սովետի ժամանակ մենք գնում էինք Արամ Մանուկեանի շիրիմին՝ ուխտի.... իսկ շատեր խուսափում էին...: Հիմա ամէն կողմից դաշնակցականներ են ի յայտ գալիս՝ իբրեւ հայրենասիրութեան չափանիշ, դա ճիշդ չէ: Մենք «Բագին» կամ առհասարակ արգիլեալ գրականութիւն էինք կարդում վտանգաւոր պայմանների տակ, իսկ հիմա գրեթէ հետաքրքրուող չկայ ոչ «Բագինով» եւ ոչ էլ առհասարակ ազգային յեղափոխական գրականութեամբ... ազատ պայմանների տակ: Այո՛, հիմա հեշտ է դաշնակցական լինելը:

Ալվարդը, որ մինչ այդ լուռ էր, գործող անդամ էր թէ՛ իբրեւ կուսակցական եւ թէ՛ իբրեւ ՀՕՄ-ական: Նախ լռեցուց ներկաներուն եւ ի նպաստ Դաշնակցութեան ճառ մը արտասանելէ ետք աւելցուց.

— *Հայրենասիրութիւնը ծնվում է քեզ հետ, դա անձեռնմխելի արժէք է, որ ի յայտ է գալիս ժամանակի ընթացքին եւ արտայայտւում է գործով: Եթէ հայրենասէր ես եւ սակայն ես քո մէջ, դա անիմաստ է: Մենք «Բագին» էինք կարդում ու տարածում խորհրդայինների հսկողութեան տակ... վտանգաւոր պայմանների մէջ... Այո՛, մեր կապը Դաշնակցութեան հետ առաւելաբար «Բագինն» էր: Երբ «Բագինի» ընթերցողներից ոմանք իրար էինք հանդիպում, ոչ Դաշնակցութեան եւ ալ «Բագինի» անունը չէինք տալիս: Նոյնիսկ երբ մեր ստացած որոշ տեղեկութիւնները իրարու փոխանցում էինք, թէեւ լռելեայն զգում էինք, որ այդ տեղեկութիւնները «Բագինից» են, սակայն դարձեալ լռում էինք ու «Բագինի» մասին չէինք ակնարկում: Հակառակ այս բոլորին՝ իրար ճիշդ եւ լաւ էինք հասկանում...*

Ապա յիշեց նաեւ, թէ ինչպէս իր հրատարակած «*Առագաստ*» կնոջական պարբերականը.... «կը հալածեն»՝ իբրեւ քաղաքականացուած եւ դաշնակցականամիտ թերթ...:

Իմ իրատես եւ հաւատարիմ ընթերցող, առհասարակ եւ նոյնիսկ «Բագինի» 60-ամեակի տօնակատարութիւններու ծիրէն ներս, ըլլա՞յ հայրենիքի, թէ Սփիւռքի տարածքին, անհրաժեշտ եւ արդար գնահատականը չէ տրուած «Բագինի» կատարած դերին Խորհրդային Հայաստանէն ներս: Հայաստանի «*Դրօշակի*» խմբագրութիւնն առաջարկեց, որ յատուկ անդրադառնանք այս հարցին՝ լուսաբանելու համար յատկապէս հայ նոր սերունդը...: Այս բացթողումին պատճառը, անշուշտ, չկամութիւնը չէ, այլ պարզապէս չիմացութեան հարց է, որովհետեւ այն ատեն (հասկնալի պատճառներով) գաղտնի կը պահուէր

ամէն ինչ, իսկ հետագային ալ պէտք եղած բացայայտումները չեն եղած...: Սակայն արդար ըլլալու համար պէտք է նշել, որ «Բագինի» յինսամեակին առիթով հրատարակուած բացառիկը յաւուր պատշաճի անդրադարձած է այս հարցին: Իսկ վաթսուն ամեակի ծիրէն ներս եւս եղած են գնահատանքներ: Յատկապէս պէտք է յիշել Պէյրութի մէջ «Բագինի» վաթսուն ամեակի առիթով Կարօ Յովհաննէսեանի ելոյթը, ուր հանգամանօրէն կ՚արժեւորէ եւ կը գնահատէ «Բագինի» տարածումը Խորհրդային Հայաստանէն ներս: Ուրիշներ եւս տարբեր առիթներով յիշած եւ գնահատած են այս երեւոյթը, ինչպէս Համազգայինի կեդրոնական վարչութեան ատենապետ Զաքար Քէշիշեանը իր ելոյթներու ընթացքին տարբեր երկիրներու մէջ միշտ յիշատակած եւ արժեւորած է «Բագինի» դերը նաեւ Խորհրդային Հայաստանէն ներս:

Ուրեմն ամբողջացնելու եւ արժեւորելու համար *«ԲԱԳԻՆԻ» ՇԻՆԻՉ ԴԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՆԵՐՍ՝* ստորեւ կու տանք հակիրճ, բայց կարեւոր տեղեկութիւններ:

«ԲԱԳԻՆԸ», ինչպէս ՀՅԴ-ի հրատարակած բոլոր թերթերը, իբրեւ հակախորհրդային մամուլ, արգիլուած էին խորհրդային իշխանութիւններու կողմէ: Այնքան խիստ էին պայմանները, որ նոյնիսկ «Զարթօնքն» ու «Արարատը» կը գրաքննուէին, ու անոնց բոլոր համարները չէ, որ ազատօրէն կը դրուէին ընթերցողներու տրամադրութեան տակ: Սակայն զարտուղի միջոցներով «Բագին» մուտք կը գործէր խորհրդային սահմաններէն ներս:

1971-ին Հ.Յ.Դ. Բիւրոյի որոշումով հեռացայ Զղարթայի (Լիբանան) ուսումնարանէն (ուր ճարտարապետական դասընթացքներու կը հետեւէի) ու մեկնեցայ Հայաստան՝ հայագիտութիւն ուսանելու: «Յատուկ որոշում կար «ԲԱԳԻՆԸ» (եւ «Ազդակ Շաբաթօրեակ Դրօշակի» որոշ թիւեր) տարածելու ազգայնական խմբաւորումներու եւ մտաւորականութեան շրջանակներուն մէջ, որպէսզի հայրենի մտաւորականութիւնը լուսաբանուի եւ տեղեակ ըլլայ երկրում չհրապարակող քաղաքական ու գրական անցուդարձերուն: Ընթացքին քաղաքական գէտնի վրայ եւս մնայուն կապեր հաստատուեցան հայրենի որոշ մտաւորականներու (Ռաֆայէլ Իշխանեան, Պետրոս Այնթապլեան, Վազգէն Մանուկեան, Սոս Սարգսեան եւ այլն) եւ Սարգիս Զէյթլեանի միջեւ: Այդ օրերուն էր, որ «ԲԱԳԻՆԻ» էջերէն Պօղոս Մնապեանը (Սարգիս Զէյթլեանի թելադրանքով) ստալինեան հալածանքները որակեց «երկրորդ եղեռն» եւ Չարենցի, Բակունցի, Թոթովենցի, Զապէլ Եսայեանի, հետագային նաեւ՝ Պարոյր Սեւակի, Փարաջանովի եւ կամ Մուշեղ Գալշոյեանի նման հեղինակները միշտ «Բագինի» ուշադրութեան կեդրոնն էին, որոնց ստեղծագործական կեանքին կը նուիրուէին նաեւ «բացառիկներ»:

Շատ քիչերու միայն ուղղակի «ԲԱԳԻՆ» կը տրուէր: Ինչպէս Պետրոս Այնթապլեանին (որուն եղբօրորդին՝ Մացակը, մեծապէս կ՚օգնէր ցրուումին), Սոս Սարգսեանին, Ռաֆայէլ Իշխանեանին, Համօ Սահեանին, Ալպերթ Կոստանեանին, Աննա Պետրոսեանին, Հրանտ Մաթեւոսեանին, Մուշեղ Գալշոյեանին, Ռազմիկ Դաւոյեանին, Սէյրան Խաթլամաճեանին եւ այլն: Աբրահամ Ալիքեանի անունը հարկաւոր է յատուկ յիշել, որովհետեւ այդ շրջանին ան Մոսկուա կ՚ապրէր, եւ «ԲԱԳԻՆԻ» որոշ համարներ իր միջոցով կը հասնէին Երեւան: «Բագինը» կը դրուէր վստահելի մտաւորականներու գզրոցներուն մէջ՝ «կարդա՛ եւ փոխանցի՛ր» նշանաբանով: Նոյնը կ՚ըլլար ազգային-յեղափոխական բնոյթի գիրքերու պարագային: Իսկ կարգ մը լայն ժողովրդականութիւն ունեցող գիրքեր (ինչպէս՝ Անդ. Ծառուկեանի «Թուղթ առ Երեւանը» կամ Եր. Օտեանի «Փանջունին») խմորատիպ կը բազմացուէին ու կը տարածուէին...: Ի դէպ, նոյն սկզբունքով կը բազմացուէին ու կը տարածուէին Հրաչ Տասնապետեանի, Հրայր Մարուխեանի, Բաբգէն Փափազեանի եւ յատկապէս Սարգիս Զէյթլեանի տարբեր առիթներով արտասանած ճառերու ձայնագրութիւնները, որոնք լայն ժողովրդականութիւն կը վայելէին յատկապէս որոշ հայրենասէր երիտասարդներու մօտ, որոնք իրենց հերթին կը բացմացնէին ու իրարու կը փոխանցէին՝ իբրեւ բացառիկ արժէք ներկայացնող ճառախօսութիւններ, որովհետեւ ոչ միայն հետաքրքրական եւ նոր տեղեկութիւններ, այլ նաեւ հայրենասիրական լիցք կը ստանային: Քիչեր միայն գիտէին, թէ «Բագինը» ինչպէ՞ս կը թափանցէր խորհրդային սահմաններէն ներս: Արգիլուած էր այդ մասին խօսիլ, ինչպէս որ արգիլուած էր նաեւ ուսանող եւ երիտասարդ գրողներու «ԲԱԳԻՆ» յանձնելը... չվտանգելու համար զանոնք...:

Երեւանեան գրական ընկերախումբ. առաջին շարքում. ձախից աջ Ալ. Թոփչեան եւ Մովսէս Ծիրանի

«ԲԱԳԻՆԸ» հայրենի մտաւորականութեան քաղաքական մտածողութեան վրայ եւս որոշ ազդեցութիւն կը գործէր, որովհետեւ ոչ միայն Հայաստանի, այլեւ առհասարակ Խորհրդային Միութեան մէջ պատահած այլախոհական խնդիրներուն եւս կ՚անդրա-

դառնար, ինչպէս՝ Սոլժենիցինի, Սախարովի կամ Պորիս Պասթերնաքի: Փաստօրէն, *«ԲԱԳԻՆԸ» դուրսի աշխարհին վրայ բացուած պատուհան մըն էր»*: Մտաւորականներէն շատեր յօդուածի նիւթեր կը ղրկէին, կ'ուզէին, որ այդ նիւթերուն մասին գրուէր: Իսկ ոմանք ալ դիտումնաւոր Դաշնակցութեան դէմ կը գրէին, որպէսզի կարենան Դաշնակցութեան կարծիքը մէջբերել ու տեղեակ պահել մտաւորականութիւնը: Այդ կը պատահէր յատկապէս Սարգիս Ջէյթլեանի կամ Պօղոս Մնապեանի դէմ գրուած յօդուածներու պարագային: Ես կարգ մը նիւթեր եւ տեղեկութիւններ անգիր կը սորվէի եւ հակախորհրդային յօդուածներ կը գրէի, որոնք սակայն նախ կը խմբագրուէին Ջէյթլեանին կամ Մնապեանին կողմէ ու ըլլայ «Բագինի», թէ «Ազդակ Շաբաթօրեակի» մէջ կը հրատարակուէին մեծ մասամբ անստորագիր, եւ կամ ալ որեւէ անորոշ անուն (առանց մականունի) կը դրուէր անոնց տակը, ինչպէս՝ Արամ, Գալէ, Սեդրակ եւ այլն: Նոյնիսկ Ռաֆայէլ Իշխանեանը եւ Ռազմիկ Դաւոյեանը Արցախը Ազրպէյճանին կցման վերաբերող գաղտնի «արխիւներէ» հանուած որոշ փաստաթուղթեր կրցած էին ձեռք բերել, որոնք ժամանակին հրատարակուեցան դաշնակցության մամուլին մէջ:

Այդ շրջանին մտաւորականութեան յոյսը Դաշնակցութիւնն էր, որ գաղափարախօսն ու տէրը կը համարուէր հայոց ազգային քաղաքականութեան ու հայկական դատին: Այդպէս կը մտածէին ոչ միայն Համօ Սահեանի, Հրանդ Մաթեւոսեանի, Ռուբէն Յովսէփեանի, Մուշեղ Գալշոյեանի նման անկախ մտածողները, այլեւ Սիլվա Կապուտիկեանի, Վարդգէս Պետրոսեանի, Սէրօ Խանզադեանի, Էդուարդ Թոփչեանի եւ կամ Հրաչեայ Յովհաննիսեանի նման խորհրդայնամետ համարուող գրողները եւս: Դաշնակցութիւնը խորհրդաւոր եւ մեծ ուժ մըն էր իրենց համար, այդ պատճառով ալ շատ աւելին կը սպասուէր անկէ:

Այն ժամանակներուն Սփիւռք-Հայաստան մշակութային կապերն ու փոխազդեցութիւնները բաւականին զարգացած էին երկուստէք, որուն մէջ «Բագինին» վերապահուած էր առանձնայատուկ դեր եւ նշանակութիւն...:

Այդ օրերուն ուղղակի բացայայտօրէն այլախոհական շարժումներ չկային Հայաստանի մէջ, եթէ նկատի չունենանք Պարոյր Հայրիկեանն ու ընկերները եւ կամ Վազգէն Մանուկեանի ղեկավարած «Թարգմանչաց տօներ» կազմակերպութիւնը: Սակայն ըլլայ ֆիլմարուեստի, երաժշտութեան, կերպարուեստի եւ յատկապէս գրական շրջանակներէ ներս, կային «ազատախոհ» ստեղծագործողներ, որոնց գեղագիտական ըմբռնումները չէին համապատասխաներ ընդունուած կաղապարուած խորհրդային գաղափարախօսութեանը: «Բագինը» թէեւ կ'անդրադառնար բոլոր իսկական արժէքներուն, սակայն յատուկ ուշադրութեան ու հովանաւորութեան տակ էին երիտասարդ տաղանդաւոր բանաստեղծներն ու գրողները, որոնք քիչ չէին: Ինչպէս՝ Հենրիկ Էդոյեան, վաղամեռիկ Սլաւիկ Չիլոյեան, Դաւիթ Յովհաննէս, Արտեմ Յարութիւնեան, Յակոբ Մովսէս, Արմէն Մարտիրոսեան, Ավիկ (Ավետիք) Իսահակեան, Յովհաննէս Գրիգորեան եւ այլն:

Աւելի ուշ հանդես եկան նաեւ ուրիշներ, ինչպէս՝ Էդիկ Միլիտոնեան, Յովիկ Հովեյեան, Հրաչեայ Թամրազեան եւ այլն: Այս խումբի առաջնորդն ու տեսաբանը կը համարուէր գրականագէտ, գրաքննադատ, արձակագիր, թատերագիր եւ վաստակաւոր ու հմուտ թարգմանիչ Ալեքսանդր Թոփչեանը, որ քաջածանօթ էր նաեւ ֆրանսական եւ առհասարակ արեւմտեան գրականութեանը: Ամբողջ սերունդի մը գրական ճաշակն ու չափանիշը ձեւաւորողն ու կերտողը ինք եղաւ: Ան «ԲԱԳԻՆԸ» կը ստանար ոչ թէ ինձմէ, այլ իր հօրմէն՝ գրողներու միութեան նախագահ՝ Էտուարդ Թոփչեանեն: Ինքն էր, որ իր գրչակից ընկերները (որոնց ուղղակիօրէն «Բագին» չէր տրամադրուեր) տեղեակ կը պահէր «Բագինի» բովանդակութենէն, ուր կը գնահատուէին ու կը ծանօթացուէին այս երիտասարդ գրողները, որոնք արեւմտեան հասկացողութեամբ նորարարներ էին, սակայն խորհրդայիններու հասկացողութեամբ՝ «ըմբոստներ»: Երբ «ԲԱԳԻՆԻ» մէջ իրենց մասին կը գրուէր, իրենց համար որոշ վարկ մը կը համարուէր եւ ամենակարեւորը ինչ-որ չափով «պաշտպանուած» կը զգային: Ի դէպ, օր մը, երբ խօսք բացուեցաւ «Ազդակ Շաբաթօրեակի» մասին (որուն ի պաշտօնէ ընթերցողներէն էր Ալեքսանդր Թոփչեանի հայրը), Ալեքսանդրը մտերմաբար տեղեկացուց, որ իր մեծ հայրը՝ Ստեփան Թոփչեանը եւս եղած է դաշնակցական ու մասնակցած Սարտարապատի ճակատամարտին՝ իբրեւ կամաւոր: Եւ պատահական չէր, որ ան հետագային կապեր հաստատեց դաշնակցական կամ դաշնակցականամիտ որոշ գրողներու հետ ու գրեց նաեւ «Պանք Օթոման» վէպը: Ինք եւ իր գրչակից ընկերները ոչ միայն նորարարութիւնը չէին շփոթեր օտարամոլութեան հետ, այլեւ մաքուր հայրենասէրներ էին: Հակառակ այս բոլորին՝ իրենց նորարարական ձգտումներուն հետեւանքով հայրենի ամենատաղանդաւոր գրողներէն շատեր (ըլլայ լոռեցեայն, թէ հրապարակաւ) անուղղակիօրէն կը հակադրուէին իրենց: Ինչպէս Հրանդ Մաթեւոսեանը, Վահագն Դաւթեանը, Ռազմիկ Դաւոյեանը եւ ուրիշներ, որոնք, սակայն, իրենց հերթին հսկողութեան տակ էին իշխանութիւններուն կողմէ: Իսկ Վարդգէս Պետրոսեանը զանոնք առաջին քաջալերողներէն եղած էր, յատկապէս, երբ «Գարուն» կը խմբագրէր: «ԲԱԳԻՆԸ» թէեւ աւելի կողմնակից էր նորարարներուն, սակայն հաւասարապէս կը պաշտպանէր նաեւ միւսներուն, անոնց ազատօրէն ստեղծագործելու իրաւունքն ու հայրենասիրական ձգտումները: Երբ Լիբանան կ'այցելէին հայրենի գրողներն ու որոշ մտաւորականներ, ցանկութիւն կը յայտնէին այցելելու «Բագին» եւ հանդիպելու նաեւ «Բագինի» «Գրական խմբակի» երիտասարդ գրողներու հետ, որոնց ղեկավար նշանակուած էր Պօղոս Մնապեանը... Սարգիս Ջէյթլեանի կողմէ: Ինչպէս՝ Սերօ Խանզադեան, Վարդգէս Պետրոսեան, Շաքէ Վարսեան, Ռազմիկ Դաւոյեան եւ ուրիշներ: Այս հանդիպումներուն «Գրական խմբա-

կի» անդամներու (Խոսրով Ասոյեան, Վահան Ջանոյեան, Պետիկ Հերկելեան, Սարգիս Կիրակոսեան, Նազ Տէր-Սարգիսեան, Էլօ Սարաճեան-Հերկելեան, Յարութիւն Պէրպէրեան, Քնար Ճինպաշեան-Սէֆէրեան, Սօսի Յակոբեան եւ այլն) կողքին յաճախ կը մասնակցէին «Մամլոյ դիւանի» աշխատակիցներէն շատեր (ինչպէս՝ Կարօ Յովհաննէսեան, Նազարէթ Պէրպէրեան, Սեդօ Պոյաճեան, Վաչէ Բրուտեան...): Եւ այսպէս «Բագինի» կարծիքներն ու անոր տուած գնահատանքները նկատի կ՚առնուէին նոյնիսկ իշխանութիւններու կողմէ: Օրինակի համար՝ Հրանդ Մաթեւոսեանը յաճախ կ՚ըսէր. «Եթէ *«Սինիձորը» չքննարկուէր «Բագինի» շուրջ հաւաքուած երիտասարդ գրողներու կողմէ, ես բաւականին լուրջ հարցեր կրնայի դիմագրաւել Հայաստանի մէջ»:* Եւ իսկապէս, շաբաթական դրութեամբ գրական հանդիպումներ կը կազմակերպուէին «Գրական խմբակին» կողմէ, ու խորհրդահայ գրողներու կարեւոր ստեղծագործութիւնները եւս կը քննարկուէին: Ինչպէս՝ Ջօրայր Խալափեանի, Պերճ Ձէյթունցեանի, Մուշեղ Գալշոյեանի, Ալպերդ Կոստանեանի, Աղասի Այվազեանի, Վիգէն Խեչումեանի եւ ուրիշներու հեղինակութեամբ հրատարակուած գիրքերէն: «Գրական խմբակի» եւ «Մամլոյ դիւանի» մասնակիցներէն գրեթէ բոլորը յետագային եղան յայտնի գրողներ եւ կամ հրապարակախօսներ, եւ անոնցմէ շատեր իրենց հերթին կապեր հաստատեցին հայրենի որոշ գրողներու եւ կամ մտաւորականներու հետ:

«ԲԱԳԻՆԻ» հետ Հայաստան կը մտնէր նաեւ յեղափոխական եւ կամ առհասարակ արեւմտահայ գրականութիւն: Ինչպէս՝ Յակոբ Օշական, Համաստեղ (Սպիտակ ձիաւորը), Լեւոն Շանթ, Արամ Մանուկեան, Գարեգին Նժդեհ, Ռուբէնի յուշերը, Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւնը» եւ այլն: Օրինակի համար՝ Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչն» ու Մուշեղ Գալշոյեանի «Ձորի Միրոն» սնուած ու ներշնչուած կը թուէին ըլլալ «Ռուբէնի յուշերէն»: Ասոնց շարքին Հայաստան մուտք կը գործէին նաեւ արեւմտահայ նորարարներու (Վահէ Օշական, Ջահրատ, Պիպերեան....) գիրքերը: Հայաստանի մտաւորականութեան խաւ մը կար, որ թէեւ արեւմտահայ բանաստեղծներ Ինտրան կամ Տէմիրճիպաշեանը ընկալելու դժուարութիւն ունէին, բայց բոլորին կողմէ կ՚ընդունուէին եւ կը գնահատուէին Շահան Շահնուրը, Յակոբ Օշականը, Լեւոն Շանթը, Կոստան Զարեանը, Համաստեղը, Մնձուրին, Վազգէն Շուշանեանը, Նիկողայոս Սարաֆեանը, Երուանդ Օտեանը, Անդրանիկ Ծառուկեանը եւ այլն:

Այնուամենայնիւ, երիտասարդ նորարար բանաստեղծներու «ազդեցութիւններն» ու ներշնչումները միջնորդուած չէին արեւմտահայ նորարարներէն: Հայրենի նորարարներէն գրեթէ բոլորը՝ բացի ռուսերէնէ, կը տիրապետէին եւրոպական որոշ լեզուներու եւ հնարաւորութիւն ունէին ջուրը ըմպելու ուղղակի աղբիւրէն: Ինչպէս՝ Ալ. Թոփչեանը հրաշալիօրէն կը տիրապետէր ֆրանսերէնի, Հենրիկ Էդոյանն ու Արտեմ Յարութիւնեանը՝ անգլերէնի եւ կամ Յակոբ

Բագինի ներկա խմբագիր Սոնիա Քիլեճեան-Ամեմեան

Մովսէսը՝ գերմաներէնի եւ այլն: Եւ պատահական չէր, որ ասոնք (յատկապէս՝ Ալ. Թոփչեանը) բազմաթիւ գիրքեր կը թարգմանէին ուղղակի բնօրինակներէն՝ առանց ռուսերէնի միջնորդութեան:

Այս կազմակերպուած աշխատանքի մասին (որ հետագային պարզուեցաւ, որ այնքան ալ բոլորովին գաղտնի չէր մնացած իշխանութիւններու կողմէ) հայրենի մտաւորականներէն շատեր տարբեր առիթներով անդրադարձած են: Ստորեւ կը ներկայացնենք միայն Սօս Սարգսեանի վկայութիւնը:

«Երկաթեայ վարագոյրի» ժամանակներն էին:

Եւ ինչ մեծ յաջողութիւն եւ ուրախութիւն էր մեզ համար, որ էդ ժամանակ Երեւանում էր սովորում Մովսէս Հերկելեանը, որը գնում-գալիս էր Երեւան-Պէյրութ եւ ամէն անգամ յաջողացնում էր իր հետ բերել «Բագինի» համարները:

Կարդում էինք անհագ հետաքրքրութեամբ, ծայրից ծայր ու ծածուկ փոխանցում մէկս միւսին: Էնքան էր ձեռքից ձեռք անցնում, որ քրքրւում էր, ու մենք ստիպուած էինք նորից հաւաքել այն, սոսնձել ու դարձեալ փարածել: Շատ բան էինք իմանում այդ ամսագրից, եւ էսօր ես ուզում եմ ուշացած շնորհակալութիւնս յայտնել Մովսէսին»:

Միշտ ձեր՝ Սօս Սարգսեան

Ի դէպ, Սօս Սարգսեանը իմ եւ Վազգէն Մանուկեանի ամենահաւատարիմ եւ ամենավստահելի քանի մը գործընկերէն մէկն էր, որուն հետ համագործակցութիւնը սահմանափակուած չէր միայն «Բագինով»...: ■

Թանկարժէք ներդրում մը մեր ինքնութեան ճանաչման ի նպաստ

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Աշոտ Հայկազուն Գրիգորեանի, ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ, գիրքը հրատարակուած է Հ.Բ.Ը. Միութեան Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադրամի, կողմէ, տպարան «Զանգակ-97» ՍՊԸ, Երեւան 2023, 440 էջ: Տպաքանակ՝ 500:

Հատորը կը վայելէ Ալեքսանդր Թամանեանի անուան ճարտարապետութեան ազգային թանգարան-ինստիտուտի (հիմնարկի) գիտական խորհուրդին:

Խմբագիր՝ Մովսէս Նաճարեան, վերապուգող կամաւոր եւ սիրայօժար խմբագիր՝ Վիգէն Լ. Ադդարեան, ձեւաւորում եւ էջադրում՝ Էլմիրա Թութունջեանի, կազմի ձեւաւորում՝ Ժաղ Թոփալագեանի, առաջաթերթի ձեւաւորում՝ Արամ Ուրուրեանի, անգլերէն թարգմանութիւն՝ Միդա Ֆրունջեանի: Աղիւսակները եւ լուսանկարներէն մաս մը՝ Աշոտ Գրիգորեանի, այլ լուսանկարներ՝ Զաւէն Սարգսեանի, Մարկ Գրիգորեանի եւ թանգարանի պահեստէն:



Կարծրակազմ կողքով ու յաւելեալ պաշտպանական թուղթէ շապիկով այս գիրքը կ՚ըսուի «հասցէագրուած է հայ ճարտարապետութեան եւ մշակոյթի պատմութեամբ հետաքրքրուողներին»: Այս մեծ թերասութիւն (understatement) մըն է. պէտք է ըսուէր հասցէագրուած է այլեւ մեր արմատներու, մեր ինքնութեան պաշտպաններուն, անոնց տիրութեան համար պայքարողներուն:

Նոյն այդ մտադրութեամբ ալ, կ՚ենթադրեմ, այս հատորը Մեսրոպեան ուղղագրութեամբ յանձնուած է մեր ճարտարապետութեան եւ մշակոյթի տարեգրութեան...

Շատ դժուար է այս գործին ամբողջական պատկերն ու իսկական արժէքը ներկայացնել պարբերաթերթի մը համար գրուած նման գրախօսական յօդուածով մը: Սակայն, պիտի ջանամ կարելի եղածին չափ հարազատ պատկերացումը տալ այս մեծարժէք գործին՝ առանց մտնելու մասնագիտական մանրամասնութիւններու մէջ, ձգելով, որ ընթերցողը ինք բացայայտէ զանոնք:

Ընդհանուր գաղափար մը կարելի է ունենալ հատորի բովանդակութենէն, որ կազմուած է հետեւեալ գլխաւոր բաժիններէն.

- Յառաջաբան, - Նախաբան, - Գլուխ առաջին – Խորհրդանշանային մտածողութեան դրսեւորումները, - Գլուխ երկրորդ – Խորհրդանշանային մտածողութիւնը եւ բնակելի միջավայրը, - Գլուխ երրորդ – Խորհրդանշանային մտածողութեան դրսեւորումները պաշտամունքային կառոյցների ճարտարապետութիւնում, - Գլուխ չորրորդ – Տարածքաշինական եւ քաղաքաշինական ընդհանրութիւնները հայկական

լեռնաշխարհում, - Գլուխ հինգերորդ – Հաստատուն խորհրդակիրները հայ ճարտարապետութիւնում, - Վերջաբանի փոխարէն:

Ասոնց կը յաջորդեն, 70 էջերու վրայ, աղիւսակները, բառարան մը եւ ցանկեր (յապաւումներու, աղիւսակներու, գրականութեան եւ ծանօթագրութիւններու, էջատակի յղումներու գրականութեան, գծագրութիւններու, լուսանկարներու եւ պատկերներու):

Կ'արժէ միասին կարդալ քանի մը քաղուածք յատկապէս «Յառաջաբան»-էն, «Նախաբան»-էն, որոշ գլուխներէ ու «Վերջաբանի փոխարէն»-էն՝ իմ կողմէ նուազագոյն միջամտութիւններով, որպէսզի աւելի լաւ հասկնանք այս գիրքը:

Խորաթափանց հասկացողութեամբ, Աշոտ Գրիգորեան կը հաստատէ. «Ճարտարապետութիւնը մարդու գոյատեւման համար անհրաժեշտ բնակելի միջավայր ստեղծելու, կառուցելու արուեստ է: Այն ստեղծուում է մարդու կողմից երկիր-տիեզերքի օրինաչափութիւնների ճանաչման, գնահատման, իւրացման գործընթացին զուգահեռաբար, որպէս մարդու մտաւոր գործունէութեան արդիւնք (էջ 12)[1]:

«Սերուելով քարի դարից, հայ ճարտարապետութիւնը իր յօրինուածքային լուծումներում կիրառել է մարդկութեանը յայտնի բոլոր երկրաչափական եւ ծաւալատարածական ձեւերն ու յօրինուածքները (կէտ, գիծ, խաչ, շրջանակ, ուղղանկիւն, քառակուսի, եռանկիւնի, գունդ, բուրգ, կոն, խորանարդ եւ այլն): Այս յօրինուածքների հնագոյն տեսակները Հայկական լեռնաշխարհում հանդիպում են առնուազն Ք.Ա. VII հազարամեակից սկսած հազարաւոր ժայռապատկերներում, որոնք արդիւնք են մեր նախապապերի բնափիլիսոփայական մտածելակերպի եւ մասնաւորապէս մարդ-երկիր-երկինք-տիեզերք փոխկապուածութեան խորհրդանշանային ընկալումների, պատկերացումների եւ դրանցով համակարգուած հետագայ գործառոյթների» (էջ 12):

Ուսումնասիրութիւնը կը տարածուի Քարի դարէն մինչեւ Է. դար:

«Ներկայացուող մենագրութիւնը փաստօրէն լրամշակուած օրինակն է մեր կողմից 2005 թուականին հրատարակուած «Խորհրդանշանային մտածողութիւնը հայ ճարտարապետութեան մէջ» գրքի»: Այս եւս մեծ թերասութիւն մը համարելու ենք, քանի որ 286 աւելի փոքր չափերով էջերէ բաղկացած այդ հատորն այնքան աւելի համեստ է՝ բաղդատաբար սոյն մեծադիր էջերով ու գծագրութիւններով ու լուսանկարներով այնքան հարուստ այս հատորին:

Հեղինակը կը շարունակէ. «Ինչպէս այդ գրքում նշել էինք, չենք յաւակնել տալ շատ հարցերի վերջնական լուծումներ, քանզի թեմայի վերաբերեալ ուսումնասիրութիւնները, գոնէ մեր կողմից, շարունակւում էին: Այժմ էլ ստիպուած ենք խոստովանել, որ շարունակաբար ի յայտ են գալիս նոր փաստեր եւ գիտատեսական նոր մօտեցումներ, որոնք հիմք են տալիս եզրակացնել, որ այս երկրորդ հրատարակութիւնն էլ կ'ունենայ իր շարունա-



Պատկեր 25. Սբ. Խաչ եկեղեցու խորհրդաբանական վերլուծութիւնը՝ ըստ Լ. Հայկազեանի

կութիւնը յառաջիկայում» (էջ 14), – ինչ որ այնքան ցանկալի է անկասկած:

Այլուր կը կարդանք.

«Ճարտարապետական ձեւաստեղծ տարրերի յօրինուածքային առանձնայատկութիւնների նախաստեղծ հէնքը եւ հետագայ ձեւագոյացումները կրում են դրանք կերտած ժողովրդի բնափիլիսոփայական հայեացքներով ստեղծուած գեղագիտական համակարգի անբաժան մասը կազմող՝ աշխարհի խորհրդանշանային ըմբռնման օրինաչափութիւնները:

«Աշխարհընկալման այսպիսի մօտեցմամբ Հայկական լեռնաշխարհում ստեղծուած ճարտարապետական համալիրները հայ մշակոյթի եւ արուեստի անբաժանելի ու էական մասը կազմելով հանդերձ, բազմակողմանի եւ ամբողջական կերպով ուսումնասիրուած չեն: Այս հայեցակէտից՝ ճարտարապետական յօրինուածքային տարրերի նախաստեղծ ձեւերում խորհրդանշանային մտածողութեան կիրառման եւ դրանց խորհրդաբանութեան համապարփակ հետազօտութիւնը, ազգային ճարտարապետական գանձարանում, տարրերի տեղի եւ դերի պարզաբանումը անյետաձգելիօրէն անհրաժեշտ են լրացնելու հայ ճարտարապետութեան պատմութեան եւ տեսութեան մէջ առկայ բացը՝ դրանով իսկ առաւել ամբողջական տեսքի բերելով հայ մշակութային ժառանգութիւնն ընդհանրապէս» (էջ 16):

Ուսումնասիրութեան նպատակը կը բանաձեւուի հետեւեալ բառերով. «Լուսաբանել ճարտարապետական նախաստեղծ յօրինուածքային տարրերի ձեւագոյացման գործընթացում խորհրդանշանային մտածողութեան ազդեցութեան գոյութեան փաստը եւ պատճառաբանել ու ներկայացնել այն փոխկապակցութիւնները, որ գոյութիւն ունեն խորհրդակիր



տարրերի եւ դրանցով պայմանաւորուած քաղաքաշինական, պաշտամունքային կառոյցների եւ բնակելի միջավայրի ճարտարապետական յօրինուածքների միջեւ» (էջ 16):

Գրիգորեան մեծ բաց մըն է, որ կը փորձէ գոցել. «Հայ մշակոյթը, ընդհանուր առմամբ, խորհրդանշանային մեկնութեան առումով կարօտ է հիմնարար եւ հետեւողական ուսումնասիրութեան: Առաւելապէս այս խնդիրը վերաբերում է ճարտարապետութեանը: Թէպէտ հայոց պատմութիւնը, մշակոյթը, ազգագրութիւնը, բանահիւսութիւնը, դիցաբանութիւնը, կիրառական արուեստի բազմաթիւ եւ տարատեսակ նմուշները, ճարտարապետութիւնը, լեզուն եւ գրականութիւնը, կենցաղավարութիւնը եւ այլ ոլորտները լեցուն են խորհրդակիր հասկացողութիւններով եւ դրանց դրսեւորումներով, այնուամենայնիւ, ուղղակի հետազօտութիւնները (կամ դրանց պահպանուած նմուշները) շատ սուղ են եւ կցկտուր» (էջ 17):

Այս աշխատանքը շատ կարեւոր է մանաւանդ այսօր Հայ դատի առնչութեամբ, երբ մեր պատմական հողատարածքներ բռնագրաւած այժմու բնակիչները ամեն ջանք կ՚ընեն քանդելու կամ իւրացնելու մեր մշակութային թողօնը:

Շարունակենք կարդալ:

«Հայկական լեռնաշխարհում եւ յարակից տարածքներում ապրած մեր նախնիների՝ բնութեան մասին պատկերացումներն ու հասկացողութիւնները նոյնանում են իբրեւ նոյնական օրինաչափութիւնների համակարգ:

«Դրանց մէջ նախնական, նախագոյ, նախաստեղծ տիեզերական տարերքները եւ ուժերը, էութիւնները, տիեզերք-արարաշխարհ-մարդ ընդհանրական փոխկապուածութիւնն ակնյայտ է: Այս հասկացողութիւնները զուգահեռում եւ նոյնանում են նախ՝ շնչող, ապրող աստուածոգիների, երեւակայական հրէշների, թռչունների ու կենդանիների, բոյսերի, եւ ապա՝ մարդկանց (դիցուհի եւ աստուած) պատկերներում, իսկ հետագայում, հիւսուելով մէկի մէջ, հիմք են դառնում միաստուածութեան: [...] Փաստօրէն արարուեց մտային մոդել-մանրակերտ, որով եւ պայմանաւորուած՝ ստեղծուեցին գործառութային նախաստեղծ յօրինուածքները»: Ճարտարապետութիւնն ու քաղաքաշինութիւնը չէին կրնար անմասն մնալ այդ յօրինուածքներէն, որով այնքան հարուստ են «Հայկական լեռնաշխարհի հնագոյն մշակութային շերտերը» (էջ 23-24):

Այս առումով ամենէն հին յուշարձանը Գեղամայ լեռներու Մեծ Պայտասար գագաթի ստորոտը գտնուող ժայռապատկերներն են, հաւանաբար նորքարեդարեան ժամանակներէն (Է. – Ե. հազարամեակ) (էջ 25):

Ոմանք մինչեւ 40 – 14 հազար տարուան – Վերին հին քարի դար – կը տանին այդ ժայռանկարներու առկայութիւնը (էջ 30):

«Այս բոլոր պատկերները կապուած են արեւի, սեռական ընդգծուած յատկանիշի, երկրի, ծառի, պտղի, սերնդի, պտղաբերման սիմոլներ հանդիսացող կենդանատեսակների հետ եւ մարմնաւորում են պտղաբերման աստուածութեան գաղափարն ու պաշտամունքը» [ըստ Հ.Ա. Մարտիրոսեանի]: Այս ժայռապատկերներում հանդիպում ենք նաեւ երկնային լուսատուներ՝ արեւ, լուսին, խաչ, թռչուն, ցուլ, մարդ, շրջանագիծ, եռանկիւն, երկիր, ջուր, տուն, աստղ, այծ, օձ, կայծակ, կեռխաչ (սուաստիկա), կէտ, խոյ, պարոյր, ծառ եւ այլ պատկեր-գաղափարագրեր» (էջ 25):

Նման ժայռապատկերներ կան Հայաստանի տարբեր շրջաններուն մէջ եւս՝ Սիւնեաց լեռներուն, Վարդենիսի, Վանի, Արցախի, Տղմուտ գետի, Կապուտան լիճի, Հայոց Միջագետքի մէջ եւ այլուր (էջ 25):

Հետաքրքրական է այլեւ նշել, որ նման պատկերներ կան նաեւ հնագիտական հազարաւոր գտածոներու վրայ (խեցեղէն եւ այլն) (էջ 25):

«Այսպիսով, սերուելով առնուազն XII հազարամեակից եւ քարերին դրոշմուելով որպէս «իծագիր» (VII հազ.), Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերային-խորհրդանշանային պատկերները հասնում են վաղ բրոնզի դար (III հազ.) եւ ապա, անցնելով վաղ երկաթի դարով (II հազ.), հետագայում իրենց վառ հետքն են թողել մշակութային բոլոր շերտերում՝ ընդհուպ մինչեւ մեր օրերը» (էջ 30):

«Հետաքրքրականն այն է, որ գրեթէ ոչ ոք չի փորձել ստուգաբանել, բացայայտել այս կամ այն խորհրդակիր-պատկեր նշանի նախնական ձեւը, տեղը, պատկանելութիւնը: [...] Շատ հեղինակներ, խօսելով այս կամ այն խորհրդակիր պատկերի (շրջանակ, քառակուսի) մասին, նշում են նրանց հին լինելու կամ արեւելեան ծագում ունենալու վարկածը, անտեղեակ՝ որ Հայկական լեռնաշխարհում ու հայ մշակոյթում (ի հարկէ նաեւ ճարտարարուեստում) դրանցից շատ շատերն անընդմէջ կիրառութիւն ունեն առնուազն VII հազարամեակից: Ցաւօք դրանցից շատերի ստեղծման ստոյգ ժամանակը յայտնի չէ: Պարզ է, որ դրանք ժայռաբեկորի վրայ փորագրելուց առաջ հեղինակը պիտի իր մտքում եւ գիտակցութեան մէջ արդէն ունենար դրանց մասին իր վերջնական եւ համոզիչ պատկերացումները» (էջ 39):

Անդրադառնալով այդ խորհրդակիր պատկերներու ազդեցութեան մեր եկեղեցիներու յղացքներուն վրայ, Գրիգորեան կը գրէ. «Քրիստոնէական պաշտամունքային կառոյցը (ուղղանկիւն, բազմանկիւն, կլոր կամ խաչաձեւ յատակագծային լուծումներով) իր յատակագծային առանցքով արեւելք-արեւմուտք կողմնորոշում ունի, որովհետեւ արեւելքից ենք սպասում արեւի ծագմանը, որը խորհրդանշում է եւ ցոյց տալիս, որ Քրիստոսի երկրորդ գալուստը այդ կողմից է լինելու: Պաշտամունքայի կառոյցն աւարտւում է գմբեթ-կաթողիկէով, ծայրին ամրացուած Քրիստոսի սուրբ խաչը, որը խորհրդանշում է քրիստոնէութեան յաղթանակը հեթանոսութեան դէմ: Կառոյցը հիմնականում բաժանւում է հետեւեալ մասերի՝ գաւիթ, իսկական տաճար կամ ատեան, բեմ կամ ամբիոն: Աւագ խորանի կենտրոնում տեղադրուած է սեղանը, որ ներկայացնում է Գողգոթայ լեռան խորհուրդը, որտեղ խաչուեց Քրիստոսը, նաեւ այն այրի խորհուրդը, ուր թաղուեց Քրիստոսը: Թէ՛ այս հիմնական մասերը եւ թէ՛ կառոյցի ողջ համալիրը լեցուն են խորհրդակիրներով:

«Փորձենք դրանք մեկնել այն յուշարձանների օրինակներով, որոնցում խորհրդաբանական դրսեւորումները աւելի ցայտուն են արտայայտուած» (էջ 110-111):

Հեղինակը բազմաթիւ օրինակներով հանգամանօրէն կը ներկայացնէ այդ ազդեցութիւնները: Կը մէջբերեմ մէկը միայն, որ կը վերաբերի Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցիին, որուն յօրինուածքը կը ներկայացնէ խորհրդապաշտական մէկ ամբողջութիւն՝ «Աստծոյ կողմից պարաստուած դրախտ... որտեղ չարը չի կարող մտնել, որովհետեւ դրախտից մենք վտարուեցինք օձի նենգութեան պատճառով, բայց եկեղեցի ենք մտնում Քրիստոսի շնորհիւ... Այն դրախտում տնկուած էր Կենաց ծառը, որի պտուղն արգելուած էր առաջին ծնողի համար, մինչդեռ այստեղ նոյն տնկարարը կանգնեցրել է կեանքի խաչը, որը արմատ է գցել ու ծաղկել նրա կենսատու արեան շնորհիւ» [Ս. Տէր Ներսէսեանի բառերով] (էջ 176):

Աւելի անդին հեղինակը կ՚աւելցնէ. «Մարդակենտրոնութիւնը, անկախ այն բանից, արտայայտուած է, թէ՛ ծածուկ, գոյութիւն ունեցել է միշտ: Մարդն է, վերջապէս, տրամաբանական համեմատութեամբ անուանակոչել, տարանջատել, որակել, օգտագործել, կիրառել, ճանաչել թէ՛ իրեն, թէ՛ շրջապատը, առարկայացրել, նիւթականացրել կամ վերացարկել անհասկանալին, անճանաչելին, անիմանալին, աստուածացրել, ապա՝ իրեն հասու բնափիլիսոփայութեամբ, իրական եւ անիրական աշխարհների պատկերը ստեղծել: Այս պատկերում է զետեղել քառակողմ, եռաշերտ, եռադաս հասկացութիւնները, աստուածներին, իրեն, երկրային, երկնային եւ անդրաշխարհի տիրակալներին: Զուգահեռաբար, նրանց խորհուրդները լրացրել է մաթեմատիկայի, երկրաչափութեան, փիլիսոփայութեան, դաւանանքի, պատկերաձեւային խորհրդակիրներով, որի հիմամբ էլ արարել է տարաբնոյթ յօրինուածքներ, այդ թւում եւ՝ ճարտարապետական կոթողներ» (էջ 337):



Այս ըմբռնումը կ՚ամբողջանայ հետեւեալ ձեւով. «Այսպիսով, աշխարհի ճանաչման ու բացայայտման, նրանում կողմնորոշման եւ գոյատեւման բնական գործընթացի ճանապարհին առաջացած բնափիլիսոփայական հասկացութիւնների շրջանակում ձեւաւորուած խորհրդանշային մտածողութեան համակարգն իր հաստատուն դրսեւորումներն ունի ճարտարապետութեան մէջ: Նրանով են պատճառաբանուած եւ արարուած ճարտարապետական կառոյցի նախաստեղծ յօրինուածքներ: Այս յօրինուածքների կուռ հէնքով է կայուն եւ յարատեւ հայ ճարտարապետութիւնը: Ստեղծուելով Հայկական լեռնաշխարհում՝ այն ճիւղաւորուել է աշխարհի չորս դին, իր բնօրրանում պահպանելով նախաստեղծ խորհուրդների խորին իմաստները» (էջ 368):

Աշոտ Հայկազուն Գրիգորեան այսպէս կ՚եզրափակէ իր այս աշխատասիրութիւնը. «Այսպիսով Հայկական լեռնաշխարհում (Պատմական Հայաստանի տարածքում) եւ նրան յարող շրջաններում առնուազն հին քարի դարից սկսած տեղաբնիկների շինարարական եւ ճարտարապետական գործունէութեան արդիւնքում կառուցուած (մարդածին, հնարածին) յօրինուածքների մէջ լայն կիրառում գտած, անընդհատ զարգացման փուլեր անցած եւ մինչ ուշ միջնադար կիրառումներ գտած՝ կէտ, գիծ, շրջանակ, քառանկիւն, եռանկիւն, խաչ, յաւերժ եւ այլ, ինչպէս նաեւ դրանց բուսական եւ կենդանական զուգահեռ պատկերները, դրանցով պայմանաւորուած կամար, թաղ, խորան, առագաստ, գմբեթարդ, գմբեթ եւ այլ ճարտարապետական յօրինուածքային ձեւերն ու դրանց նախատիպերը տեղական ծագում ունեն եւ

հայ ճարտարուեստի եւ հայ մշակոյթի կարեւոր եւ անբաժան մասերն են:

«Սոյն շարադրանքից չի հետեւում, թէ ճարտարապետական յօրինուածքների խորհրդանշանային մեկնութիւնները կատարուեցին լիարժէք եւ ամբողջութեամբ, քանզի «բովանդակ խորհուրդը Աստծուն է յայտնի»:

«Հաշուի առնելով այն հանգամանքը, որ ճարտարապետական յօրինուածքներից շատերն իրենց ստեղծման ժամանակ պարունակում էին այնպիսի խորհուրդներ, որ «ամէնքին չէ յայտնի, այլ քչերին», կը նշանակի՝ ներկայացուած աշխատանքը, որպէս խորհրդանշանային մտածողութեան եւ ճարտարապետութեան մէջ խորհրդակիր բաղադրամասերի կիրառմանը միտուած ուսումնասիրութիւն պէտք է ընդունել որպէս հերթական փորձ եւ յոյս փայփայել, որ սրա հիման վրայ կը կատարուեն նոր, առաւել հիմնարար հետազօտութիւններ» (էջ 373):

Մինչ այդ աւելի քան անհրաժեշտ է, որ այլ լեզուներու թարգմանուի այս գործը:

ԱՇՈՏ ՀԱՅԿԱԶԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ (ԱՇՈՏ ՀԱՅԿԱԶՈՒՆ)

Մեծ եղեռնէն մազապուրծ վերապրած վանվասպուրականցի հօր եւ արմատներով շուշեցի մօր զաւակ՝ Աշոտ, ծնած է 1948-ին՝ Արմաւիր (Խ. Հայաստան):

Աւարտած է Երեւանի Կ. Մարքսի անուան Ճարտարագիտական հիմնարկի ճարտարապետութեան բաժանմունքը (1973-ին) եւ Մոսկուայի ճարտարապետութեան հիմնարկի յատուկ բաժանմունքը (1985-ին): Այնտեղէն ստացած է նաեւ ճարտարապետութեան թեկնածուի գիտական աստիճան (1988-ին)՝ պաշտպանելով ատենախօսութիւն՝ «Բնակելի միջավայրի տիպաբանութիւնը» բնանիւթով: «Խորհրդանշանային մտածողութիւնը ճարտարապետութիւնում» թեզի համար իրեն շնորհուած է ճարտարապետութեան դոկտորի գիտական աստիճան (2007-ին): Անոր շնորհուած է նաեւ Երեւանի Ճարտարապետութեան եւ շինարարութեան պետական համալսարանի դասախօսի՝ դոցենտի (2004-ին), ապա պրոֆեսորի գիտական կոչում (2007-ին): Կը դասաւանդէ նաև Երևանի գեղարուեստի պետական ակադեմիային (կաճառին) մէջ:

Թղթակից (1998-էն սկսեալ), ապա իսկական (2010-էն սկսեալ) անդամ է Հայաստանի Ճարտարագիտական կաճառի, նոյնպէս անդամ է Հայաստանի Ճարտարապետներու (1980-էն), Նկարիչներու (1975-էն), Գեղաձեւողներու (դիզայներներու) (1990-էն) եւ Լրագրողներու (1995-էն) միութիւններուն եւ միջազգային ընկերակցութիւններուն:

1990 թուականին հիմնած է ՀՀ Ճարտարապետութեան (այժմ՝ Ալեքսանդր Թամանեանի անուան) ազգային թանգարան-ինստիտուտը (հիմնարկը) ու զայն վարած մինչեւ 2016, իսկ անկէ մինչեւ օրս գիտական ղեկավարն է թանգարանի գիտահետազօտական ոլորտին: 2011-էն 2013 եղած է Ճարտարապետներու և ճարտարագէտներու համահայկական ընկերակցութեան համանախագահը:

Աշոտ Հայկազի Գրիգորեան

Կազմակերպած է ճարտարապետագեղարուեստական ցուցահանդէսներ Երեւան եւ աշխարհի տարբեր քաղաքներուն մէջ՝ յաճախ անձամբ ալ մասնակցելով անոնց եւ այլ ցուցահանդէսներու: Իր գեղանկարչական եւ գծագրական աշխատանքներէն շատերը կը գտնուին տարբեր երկիրներու պատկերասրահներու եւ անձնական հաւաքածուներու մէջ: Հանդիսացած է Հայաստանի տաղաւարի յանձնակատար՝ Վենետիկեան արուեստի և ճարտարապետութեան միջազգային երկամեայ ցուցահանդէսներուն 1996-էն ի վեր:

Անոր նախագիծերը իրականացած են եւ Հայաստանի մէջ եւ Հայաստանէն դուրս:

Գրած է աւելի քան 200 գիտա-հանրամատչելի եւ հրապարակախօսական յօդուածներ: Իր հեղինակութեամբ հրատարակուած մենագրութիւններն են՝ «Խորհրդանշանային մտածողութիւնը հայ ճարտարապետութիւնում» (2005), «Մարդածին յօրինուածքներ» (2011), «Տարուայ նախագիծ եւ կառոյց» (2008), «Իմ տունը բնութեան մասնիկն է» (2011), «Արարենք մէկտեղ - 1» (2011), «Արարենք մէկտեղ - 2» (2014), «Ճարտարապետ Հայկ Ասատրեան» (2015), «Պանթէոնի խնկաբոյրը» (2015), «Հայոց ազգին պարտէզի գանձերը՝ Պալեաններ» (2017), նոյնը՝ թրքերէն (2023), «Ճարտարապետ Ռոմէո Ջուլիակեան» (2021), «Վիլլա Արարատի նահապետը. Լեւոն Կիւրեղեան» (2022), «Հայ քրիստոնէական ճարտարապետութիւնը եւ նախաքրիստոնէական մշակոյթի ներգործութիւնը» (2023):

Բազմիցս պարգեւատրուած՝ ան միաժամանակ թէ՛ ճարտարապետ է եւ թէ՛ մանկավարժ, թէ՛ բանաստեղծ եւ թէ՛ գեղանկարիչ, թէ՛ բանասէր եւ թէ՛ հասարակական գործիչ: ■

Հղում

[1] Այս ցոյց կու տայ հատորին համապատասխան էջը, ուրկէ քաղուած է այս հատուածը:



... Ասոնք էին Ազգայնականները, Դաշնակները, որոնք կռուեցան Հայաստանի համար, վասնզի կռիվը իրենց դիտած միակ ուղին էր պահպանելու համար կեանքը, արժանապատուութիւնը եւ ցեղը: Աշխարհը ատկէ տարբեր միջոց մը չունէր: Միայն զէնքով կ՚ըլլար այդ: Աստծոյ անիծած ոջլոտ միջոցը, բայց Դաշնակցականները մեծ մարդիկ էին եւ ըրին այն, զոր պարտաւոր էին ընել: Իսկ որեւէ Հայ, որ կ՚արհամարհէ այս մարդիկը, տգէտ է կամ իր ցեղի մատնիչը: Այս մարդոց ընտրած ուղին սխալ էր, գիտեմ որ սխալ էր, բայց ատկէ զատ ուրիշ միջոց չունէին անոնք: Էհ, անոնք շահեցան պատերազմը:

Այսպէս կամ այնպէս ամբողջ ցեղը չբնաջնջուեցաւ: Հայաստանի ժողովուրդը կըմսէր, անօթի էր եւ հիւանդ, բայց այս զինուորները շահեցան իրենց պատերազմը եւ Հայաստան ազգ մը դարձաւ կառավարութեամբ մը եւ Դաշնակներով կազմուած քաղաքական կուսակցութիւնով մը: Շատ տխուր եւ շատ սրտայոյզ է, երբ կը մտածէք այն հազարաւորներու մասին, որոնք սպաննուեցան, բայց ես կը պատուեմ զինուորները, որոնք որ մեռան եւ անոնք որ կ՚ապրին տակաւին: Կը պատուեմ եւ կը սիրեմ զանոնք: Աղետալի սխալ մըն էր այդ, բայց ազնիւ սխալ մը եւ Հայաստան եղաւ, Հայաստան: Անշուշտ շատ փոքր ազգ մըն էր ան, շատ անկարեւոր ազգ մը, ամէն կողմէն թշնամիներով շրջապատուած, սակայն Հայաստանը երկու տարի մնաց Հայաստան եւ Երեւանը՝ մայրաքաղաք:

Հարիւրաւոր տարիներէ ետք առաջին անգամն ըլլալով Հայաստանը եղաւ Հայաստան:

Գիտեմ թէ որքան անմիտ բան է հպարտ ըլլալ, բայց չեմ կրնար յաղթել այդ զգացումիս եւ հպարտ եմ:

Ուիլեամ Սարոյեան

ԴՐՕՇԱԿ

Երևան, 12-ը հունիսի, 2024 թ.